

ПУЧЛО



142
1672

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Բ Ա Ն Վ Ո Ր

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ


Կազմեցին՝

Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ,
Լ. ԽՈՒԴՈՅԱՆ, Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.



Թույլատրված է
Պետգիստոսին կողմից.

Հր. № 1039. Գրառեպար № 2194 (բ). Տիրած 25000.
Պետհրատի առաջին տպարանի վարչարարատուն.
Պատվեր № 139.



Լ Ե Ն Ի Ն



1672-ԱԳՀ



սովորի սովորի
սովորի

Լ Ե Ն Ի Ն



սա բանվոր Ե
բանվոր Ասո
Լեվոնին ասա
վոր սովորի

Ե Ե Ա Ս



Կարո՞ն դաս ե սովորու՞մ

Կարո՞ն բանվոր ե:
Սարո՞ն բանվոր ե:
Կարո՞ն դաս ե սովորում:
Սարո՞ն կարում ե:
Ասո՞ւ արի ու սովորի:

Ս Կ Ո Ւ

Ասո՞ւ ասա



Նարո՞ն կար ե անու՞մ

Կարի՞նե, արի, կար արա:
Նարո՞ն կար ե անում:
Նարո՞ն դաս ունի:
Արի կարի, վոր նա սովորի:

Բ Ը Ի Է

Այսա, արի:




Կիման ու Մարոն

Կիման մի կարի մեքենա ունի:
Նա կար է անում:
Մարոն, արի՛ կարի:
Կիման դաս է սովորում:

Ու ու Մ մ

Մարոն ու Մարոն, Մարոն
ու Մարոն, Մարոն ու Մարոն




Արտեւ

Մեր արտելում շատ մեքենա կա:
Սուրենին № 1 կարի մեքենան:
Լեվոնին համար 2 կարի մեքենան:
Նունիկին համար 3:
Կարենին համար 4:
Սիրունին համար 5:
Մեր արտելում շատ են կարում:
Հիմա կարում են լեւինալանի բանվորներին
համար:

ԼԼ ՆՆ

Լեւան ու Նիկոլան ուսումնասիրե



Նամակ

Կիման նամակ ունի:

Կարոն ասով.

— Կիման, դու նամակ ունիս.

— Տո՛ւր, Կարո:

— Ահա, կարգա:

Կիման նամակ ե կարգում:

Կ Կ Դ Դ

Կիման նամակ է կարգում.

Արարատ գործարան

Արարատ գործարանում շատ մեքենա կա:
Գործարանում շատ բանվորներ են բանում:

Տոնոն Արարատ գործարանի բանվոր ե:

Նա շատ ե բանում:

— Գործ շատ կա,—ասում ե նա:

Գործարանում Մակարին շատ են սիրում:

Նա տաս տարի Արարատ գործարանում ե:

Ծ ծ, Տ տ

Արարատի ու ծառայողի
պիսի Արարատում.



Բանվորը ու բատրակը

Բանվորը բանում է գործարանում:

Բատրակը բանում է հանգում:

Բանվորը ու բատրակը ընկերներ են:

Բանվոր Մինասը բատրակ Բաբկենին ասում է.

— Ընկեր Բաբկեն, շատ սովորի, վոր շատ բան
իմանաս:

Ամեն որ աղումբ արի:

Բանվորական աղումբը կինո ունի:

Բ Բ Ը Ը

մի ականաբար կինո ունի
Բաբգինը սովորում է ականաբար.



Գարեգինը նամակ է գրում

Գարեգինը բանվոր է: Նա բանում է գործարա-
նում: Բանվոր Գարեգինը նամակ է գրում Լենինա-
կան Լևոնին:

Ընկեր Լևոն

Մեր գործարանում շատ գործ կա:

Նոր-նոր մեքենաներ կան: Բանվորները շատ են
բանում:

Մեր Գոհարին ասա, վոր գործարան գա. գործ կա:

Գարեգին

Գ Գ

Գրիգորն ու մարգոն նամակ
իւ գրում.
Գինի մի գործածի.



Վարպետ Վահանը

Վահանը լավ վարպետ է:

Վարպետ Վահանը լավ է վարվում բանվորների հետ:

Բոլոր բանվորները Վահանին սիրում են:

Վարպետ Վահանը ամեն որ բանվորներին ասում է.

— Գործ շատ կա, գործարանը պիտի կարգի բերել:

Տիրանը նոր բանվոր է: Վարպետը նրան ասում է.

— Տիրան, նոր բանվոր ես, լավ սովորի ու հետեվի, վոր բան իմանաս:

Վ Վ

Վահանը ու Միրամյար բանվոր ին
Վահանը Միրամյարն ասում —
«Միրամ, իրիկումն արի անումք»



Համար հինգ բանկոտպը

Համար հինգ բանկոտպը նոր է: Նա գործարանի բանվորների համար է:

— Հիմա բանկոտպ կա. ահա մեր բանկոտպը, — ասում են բանվորները:


— Վարպետ Պետրոս, դու մասնավորի մոտ մի գնա: Մեր բանկոտպում ամեն տեսակի իրեր կան, — ասում է Հուսիկը:

— Պանիրը մասնավորի մոտ մեկ ու հիսուն կոպեկ է, իսկ բանկոտպում՝ մեկ ու տաս:

— Սապոնի կտորը մասնավորի մոտ 35 կոպեկ է, իսկ բանկոտպում՝ 26 կոպեկ. տավարի միսը մասնավորի մոտ մեկ ու տաս է, իսկ բանկոտպում 80 կոպեկ:

Հ հ Պ պ

Խանոն ու Պիրրուար վարպետ ին
Խանար հինգ բանկոտպը բանվոր-
ների Խանար ի:



Շուկան աշկանը

Աշուհն է: Աշկանը շուկան հարուստ է:
Ամեն տեսակի բան կա:
Շարան-շարան եշերով ու սելերով գալիս են
շուկա:
Շատերը բերածը—տալիս են կոոպերատիվին:
— Պապաշան, բերել եմ...
— Պապաշան, իմն ընդունի...
Ասում են բոլորը կոոպերատիվի պապաշին:
Բոլորն ել սովորել են նրան պապաշա ասել:
— Պապաշան հին մարդ է, ամա լավ մարդ է,—
ասում են սելվորները:
Պապաշան բոլորի հետ ել լավ է: Նա վարվել
գիտի, բոլորին ել բավարարում է:

Ե 2

Աշկանի: Աշկանը շուկան հարուստ է.
Զարան շարան սելերով գալիս են շուկա:



Կոշկակար Շավարշը

Շավարշն աշխատում էր կոշկակարների արտե-
լում: Մի անգամ նա նամակ պիտի գրեր իր մորը:
Հարկավոր էր իմանալ նրա ապրուստի մասին: Շա-
վարշը անգրագետ էր:

— Ո՛վ կգրի,—ասում էր Շարարշը,—հիմ գիմեմ:
— Շավարշ, բեր գրեմ,—ասավ կոմսոմոլիստիկա
Շուշիկը:

— Ե՛հ, պիտի կարդալ ու գրել սովորել,—ասու-
ե Շավարշը:

Յերեք ամիս հետո Շավարշը Լուսիկի
արդեն սովորել էր կարդալ ու գրել: Նա նամ-
եկ գրում մորը: Ստանում ու կարդում էր
գարդ“:


մոտ
ակներ
„Ավան-“

Զավարշը բանում է կոշկա-
կարի արարիչում.

կար.

նա կոշիկներ է կար-
նա լավ է կարում.

ամ.



Կարմիր դրոշակ

Մեր կոլեկտիվը կարմիր դրոշակ ունի:
Տոներին կոլեկտիվի բոլոր անդամները դրոշակ-
ներով գնում են միտինգ:
Դրոշակը տանում է ավագ բանվոր Դանելը:
Մեր դրոշակը կարմիր է: Դրոշակի վրա ընկեր
Հենինի նկարն է:
Կարմիր դրոշակը մեր կոլեկտիվին նվիրել է
գարբիններ շարունակ:
Ընկեր Հենինի նկարը նկարել է մեր բանվոր
Վարդանը: Վարդանը սովորում է բանվորական հա-
մալսարանում:


Վարդանը կարմիր դրոշակի վրա
նկարել է ընկեր Հենինի նկարը.



Ճաշարան

Մեր կոոպերատիվը ճաշարան ունի:
Շատ բանվորներ ճաշում են ճաշարանում:
Բոլոր տեսակի ճաշեր լինում են՝ դոլմա, սուպ,
բորշ, կատլետ, տապակած ճուտ:
Մի տեսակի ճաշը 30 կոպեկ է:
2 տեսակի ճաշը 60 կոպեկ:
Ճաշարանում կերակուրը բերում է ձիտո անու-
նով մի պատանի:
— ձիտո, սուպ...
— ձիտո, մի ճաշ...
— ձիտո, մի ճուտ...
Ձիտոն ճարպիկ է. նա բոլորի պատվերն արագ
կատարում է:
Մեկ էլ տեսնում ես, 3 կամ 4 ճաշ միասին բե-
րում են ու բոլորին էլ բավարարում:
Ճաշարանում նրան շատ են սիրում: Ճ Ճ

Բանկույի Եսայիի գնեիր
Մի փխրակի Եսայի 30 կոպեկ.
2 փխրակի Եսայի 60 կոպեկ.



Հենիականի մանածի գործարանը

Հենիականի մանածի գործարանը նոր է:

Գործարանում մեծ մեծ մեքենաներ կան: Որ
որի վրա գործարանն ավելի մեծանում է:

Բանում են շատ բանվորներ ու վարպետներ.
բանվորները գործում են կտավ, գուլպա ու հա-
գուստի կտոր:

Գործարանը կապված է կոոպերատիվների հետ:
Գործած կտորների մեծ մասը տալիս է կոոպերա-
տիվներին:

Գործարանում բանվորների վիճակը շատ լավ է:
Գործարանում բոլոր բանվորները զբաղեւ են:

Պատի քերք

Մեր կոլեկտիվը պատի թերթ ունի:

2 շաբաթը մի անգամ մեր պատի թերթը կանո-
նավոր կերպով դուրս է գալիս:

Հոգվածները թերթում մեծ մասամբ գրում են
բանվորները:

Գրում են գործարանի, ակումբի, գործարկումի
մասին:

Գործարկումը սրան է դիմում, նրան է դիմում...

— Թաթնուլ, պատի թերթի համար մի բան գրի...


— Թեվան, դու գրի ակումբի մասին:

— Թատրոնի մասին Թորոսը պիտի գրի. նա
Թատրոն սիրում է:

— Իսկ նկարները Սաթիկը կտա:

Թ Թ

Գործարանի մասին թարգմտեց
վաճկար Ի գրում պատի թերթի տալ:



Շշակները շշում են

Գործարանի շշակները շշում են: Գործարանից դուրս են գալիս բանվորները ու գնում են տուն:

Տանը ճաշում են, հանգստանում ու հետո գալիս են աղումբ:

Խաչոն նոր բանվոր է: Նա աղումբ չի գալիս:

— Խաչո, ինչո՞ւ աղումբ չես գալիս, — ասում են նրան ընկերները:

— Գամ ի՞նչ անեմ. գրել չգիտեմ, կարդալ չգիտեմ, վոր լրագիր կարդամ:

— Ձե, Խաչո, եղպես չի լինի, դու պիտի կարդալ ու գրել սովորես:

— Լսվ, կսովորեմ:

— Գիտե՞ս, Խաչո, շուտով աղումբում անգրագետների հետ պիտի պարապեն: Արի աղումբ, վոր անունդ գրեն:

2 չ

Շշակները շշում են բանվորների կանչում են գործարան:

Կոշիկ սրբող Ղուկասը

Հուսագեմին կոշիկ սրբող Ղուկասը սովորական իր տեղում նստած է: Մի արկղ դեմը դրած:

Նրա սովորական տեղը դեղատան մոտ է:

— Մուշտարի, բեր սրբեմ. դեղին, սեւ, վորն ասես, — կանչում է Ղուկասը մուշտարիներին:

— Տաս կոպեկ, տաս կոպեկ:

Մուլթն ընկնելուն պես Ղուկասն իր արկղով տուն է գնում: Որական 1—2 մանեթ վաստակ է ունենում:

Դրամը նա չի թողնում իր մոտ. ամեն օր տալիս է մորը: Ուրիշ վաստակ չունեն. դրանով են ապրում:


Որ որի վրա Ղուկասի մուշտարիները պակասում են. Բոլորն ել կոշիկները սրբել են տալիս արտելում:

Ղուկասն ել մի օր մտավ կոշիկ սրբողների արտելը:

Արտելում հանգիստ եր, ու ավելի վաստակ եր ստանում նա:

2 դ

Կոշիկ սրբող Ղուկասը արտելի միջոցով:



Քաղաք

Մեր քաղաքը շատ մեծ է:

Քաղաքում հիմնարկներ, գործարաններ ու մեծ-մեծ շենքեր կան:

Ինչե՛ր ասես, վոր չեն պատրաստում քաղաքում. վորքան կոշիկներ, հագուստեղեն, գրքեր, գործիք-ներ, մեքենաներ, կահ-կարասիք:

Արևը չծագած՝ սուլիչները սուլում են, բան-վորներին գործի կանչում:

Վորքան ապրանք է մտնում քաղաք ու վորքան էլ դուրս գնում:

Որ որի վրա քաղաքը մեծանում է:

Ք ք

Քաղաքի որ որի վրա միմանում է.
Վորքան ապրանք է մտնում քաղաք
ու վորքան դուրս գալիս:



Լվացարարների արհեստանոցը

Լվացարարների արհեստանոցին կից տնարկոտպը մանկական մսուր բաց արեց:

Արհեստանոցի կին բանվորների վիճակը լա-վացավ:

Նրանք ամեն որ իրենց մանուկներին բերում են մսուր, հետո անցնում արհեստանոց:

Ցերեկը մանուկներն անց են կացնում մսուրում:

Մսուրում նրանց լավ են պահում. մաքուր ողում, թարմ կերակուրներ են տալիս: Նախաճաշին տալիս են կաթ, մածուց, կակաո. կեսօրին թեթե-ճաշ՝ կաթնապուր, սուպ, կիսեր:


Գործից հետո լվացարարները դալիս են մսուր ու վերցնում են իրենց մանուկներին:

Ց ց

Քույր արհեստանոցներին կից
պիտի մսուր բաց անի. մսուրնե-րը թիթեացնում են կանանց գործը:

Քաղխորհուրդ

Մեր կուլեկտիվից քաղխորհրդի անդամ ընտրեցինք ընկեր Խորենին: Խորենը մեր գործարանի



լավ աշխատողներից մեկն է:

Նա քաղխորհրդում էլ լավ է աշխատում:

Խորենը քաղխորհրդում դրել է բանվորների կենցաղը բարելավելու խնդիրներ:

1) գործարաններին կից մսուրներ ունենալ,

2) շուկաների ու հրապարակների կարգի

բերելու խնդիրը,

3) դպրոցներում աշակերտներին նախաճաշ տալու հարցը,

4) բանկոտայների թիվը ավելացնել,

5) բանվորների համար նոր շենքեր շինել:


Քաղխորհրդի աշխատանքների մասին նա հաճախ խոսում է գործարկումի հետ:

Խ Խ

Զուրիկը քաղխորհրդի անդամ է, նա հաճախ խոսում է քաղխորհրդի աշխատանքների մասին:

Ժամը ուրն է

Ժամը ուրն է: Բանվորները ժիր-ժիր շարժվում են դեպի գործարան:



Աշխատանքի ժամ է: Անցնում են իրենց տեղերն աշխատելու:

Մեր բանվորների ժամանակի բաժանումը.

8 ժամ աշխատել գործարանում.

8 ժամ հանգստի, հասարակական աշխատանքների ու ժողովների համար:

8 ժամ քնելու համար:

Ցարի ու դաշնակների ժամանակ բանվորն աշխատում էր 12 ժամ, ել ավելի: Հիմա աշխատում է 8 ժամ, տեղ-տեղ՝ 7 ժամ:

Մինչև 14 տարեկան հասակ ունեցողներն աշխատանքի չեն գնում: 14-ից 16 տարեկանների համար 4 ժամ աշխատանք, իսկ 16—18 տարեկանների՝ 6 ժամ:

Ժ Ժ

Անխառնաձիվ ժամանակ աշխատիր. հանգստի ժամանակ հանգստանալիր. ժողովներին միշտ գնա:

Ռադիո

Ամառ ե: Քաղաքի մեծ հրապարակում լսվում
է, թե ինչպես ուղիոն յերգում է ու նվագում:

— Ես վճռեղից ե լսվում, — հարցնում է մի
պառավ տերտեր:

Մեր ընկեր Ռուբենը պատասխանում է.

— Հեռվից, տերտեր, շատ հեռվից: Մոսկովում
նվագում են, մեր քաղաքում լսվում է:

— Ինչպե՞ս թե, Մոսկովից եստեղ լսվում է:

— Հա բա, տերտեր. դրան ուղիո կասեն:

— Ախր, տնաշեններ, եղպես ստեր եք ասում,
վոր մարդ չի հավատում:

— Տերտեր, դա սուտ չի. ինչու չպիտի հավա-
տալ. ամեն մի խրճիթում հիմա ուղիո կա: Բա
ինչի՞ն հավատանք. նրան, վոր Մովսեսը ծովը 2 մա-
սի բաժանեց, — ասաց Ռուբենը:

— Ասելդ ի՞նչ է. ավետարանին չհավատամ,
բա ում հավատամ, — ասաց պառավ տերտերն ու
եւ չսպասեց, գլուխը կախած հեռացավ:

Ռ ո

Պոսթիւնը լսում է ուսդիո երապա-
րակում լսվում էր Պիկուլի Բասը:

Չեթ-ոճառ գործարանը

Չեթ-ոճառ գործարանն աշխատում է թե՛ ձմեռ-
վա, թե՛ ամառվա ամիսներին:

Բանվորների ապրուստը բանի գնում ավելի լա-
վանում է: Գործարանի մոտ բանվորների համար
կառուցված են ընդարձակ շենքեր: Բանվորական
քաղաք է դարձել: Ապրում են մոտ 100 բանվոր,
իրենց ընտանիքներով:

Գործարանն ունի իր ակումբը: Ակումբն ունի
գրադարան, բեմ: Բանվորական քաղաքը բաղնիք
եւ ունի:

Չիթի մի մասը ծախում են. Մնացածից ոճառ
են պատրաստում, իսկ քուսպը կենդանիների հա-
մար լավ կեր է:

Չ ձ

Չիթ-ոճառ գործարանում չիթի մի մասը
ծախում են մնացած չիթից ոճառ. իւրաքանչիւրում:



Չմեռ

Չմեռ ե՛: Սար ու ձոր, դաշտ ու քաղաք սպիտակել են: Ցուրտ ե, թռչուններն ու անասուններն ամեն մեկը տաք տեղ ե ճարել:

Գետինը սառում ե. վառարանները վառում են:

Չմեռ ե՛: Մեր տեղիմը մտածել ե կոլեկտիվի անդամների մասին: Բանվորներն ապահովված են վառելիքով, Բանկոոպում վարկ են տվել բանվորներին:

Նրանք մտածում են ձմեռվա պաշարը պատրաստելու մասին:

Գետն ե սառել,
ձինն ե մարել,
ցուրտ ձմեռ ե:

Ցուրտ ձմեռ ե,
քամու ձենն ե
հեռվից գալիս:


Ձիև մեքենա

Ձին, ջին, ջին, ջին, մի աժդահա
ես քանի ջին... դունչը ծռած
ես տան միջին բերանը բաց
մի մեքենա կլանում ե անվերջ:

Ու մաքրում ե բամբակը իր մեջ,
վոր թել մանեն բարակ ու անվերջ:
Թելեր մանեն չթի համար
հունդից ջինեն քուսպ ու ոճառ:

22

Չիւ, գիւ, գիւ, իս քան Միգիւ
Մի Միգիւս անունը գիւ:



Մանկապարտեզ

Մանածի գործարանին կից մանկապարտեզ բացեցին:

Բանվորներն հիմա ազատ են: Նրանք իրենց զավակներին ուղարկում են մանկապարտեզ:

— Ախշի Զարուհի, ինչո՞ւ Զորիկիդ չես ուղարկում մանկապարտեզ, — ասում է գործարկումի նախագահ Զավենը:


— Վո՞նց ուղարկեմ, — պատասխանում է Զարուհին, — ո՞վ գիտե՞ ինչպես են պահում:

— Իզուր ես եղպես մտածում: Մանկապարտեզում շատ լավ են խնամում: Լավ կերակրում են, հագցնում ու ամբողջ օրը զբաղեցնում զանազան խաղերով:

Տեսնում ես, քո ուշքն ու միտքը տանն է, իսկ մնացած կնանիք ազատ աշխատում են:

2 գ

Մանկապարտիչն ապարտւմ է բանւ
մորուհուն. մանկապարտիչ բայ արիւի.



Փողոց

Մեր քաղաքը փոքր է: Փոքր են ու նեղ նրա փողոցները: Քաղխորհուրդը վորոշել է նոր պլանով նորոգել: Մի անգամ ից կփոխվի քաղաքի տեսքը: Փողոցները կմեծանան: Քաղաքի կենտրոնում կլինի հրապարակ, իսկ հրապարակում՝ ընկեր

Հենինի արձանը: Միքանի պարտեզներ ու զբոսափողոցներ են լինելու քաղաքում:

Աշխատանքները մեծ թափով կսկսվեն գարնանից:

Մի շարք նոր շենքեր են կառուցվելու գավգործկոմի, փոստի, գավփոխի համար:

Բանկոտպն ել մի մեծ փուռ ե կառուցելու:

Փ փ

Մեր փառաբեր փոքր ե: Փոքր են նրա փողոցները: Փոստի համար նոր շենք են կառուցելու: Փոստն ու հեռագրատունը միասին են շինելու:



Բեռնակիրներ

— Փանոս, ուր ե՞ Սաքոն, եսոր չկա, — հարցնում ե բեռնակիր Աբասը Փանոսին:

— Նրա գործը վատ ե. անցած որը մի պահարան եր շալակել, վոր կլինեիր վոչ պակաս քան 150 կիլո:


— Բա ասում են, դեկրետ կա, վորոշում կա, վոր 5 փթից ավել արգելվում ե բառնալ բեռնակիրին, — ասում ե Աբասը:

— Ճիշտ ե, որինակի համար բամբակեմի, կոոպերատիվների պահեստներում բեռնակիրներին դրանից ավելի չեն բառնում:

— Բա մեզ համար դեկրետ չկա, — նորից հարցնում ե Աբասը:

— Ինչպե՞ս չե. մեր աշխատանքներին պիտի հետևի աշխատեսուչը:

Բեռնակիրների աշխատանքը շատ ծանր ե. պետք ե քերտվայնեղ նրանց աշխատանքը:



Թոքախտ

Գործարաններում ու արհեստանոցներում ողջ շատ ե կեղտոտում: Պետք ե լուսամուտները շուտ-շուտ բաց անել, վոր ողջ մաքրվի, փոշի չլինի:

Հաճախ բանվորները հիվանդանում են Թոքախտով: Թոքախտը վտանգավոր ե ու վարակիչ:

Դիլիջանում Թոքախտավորների հիվանդանոց կա: Թոքախտավորներն ամառը գնում են Դիլիջան: Դիլիջանի ողն ու ջուրը մաքուր են:

Թոքախտի դեմ կռվելու ամենալավ միջոցներն են՝ մաքուր ողը, մաքուր ջուրը, լավ սնունդը:

Մափուր ողն ու մափուր զուրը մարդու ամենալավ բարեկամներն են:

Թեյ

Չինաստանից ստացվում է շատ թեյ:

Թեյ մշակելը շատ ծանր է: Այնտեղ կուլիներն այնքան են աշխատում, այնքան, բայց իրանք շատ չնչին բան են ստանում:

Մեզանում թեյ մշակում են վրաստանում: Այնտեղ հատուկ բանվորներ կան, վորոնք զբաղվում են այդ գործով:

Բանվորների մեջ կան վրացի, հայ, թուրք, ռուս ու միքանի չինացիներ:

Բանվոր նորայրը ծանոթ է թեյ մշակելու գործին:

— Ամեն տեղ թեյ չի բուսնի: Այ, ինչ եմ ասում Չաիվան, — ասում է նա:

— Այնտեղ շատ հարմար է. թե ոգը, թե ջուրը, թե հողը:

եյ, այ

Թեյ մշակում են Չինաստանում, իսկ Անդրկովկասում՝ Վրայն Բարումն չրգանում:

Յեղսան

Յեղսանը տիկին Մանյա Յերամյանի աղախինն էր: Նա ամբողջ որն աշխատում էր: Տիկինը նրան որ չէր տալիս:

— Յարար, դու յեւ վոր ժողով չգնաս, աշխարհը կբանդվի, ելի, — ասում էր նրան տիկին Մանյան:

— Յեթե ժողով չգնամ, բան չեմ սովորի, — պատասխանում էր Յեղսանը:

— Լավ բան են սովորեցնում: Յերես են տալիս: Սովորեցնում են ընկեր ասել, ասածուն չհավատար, մեծին չլսել:

— Ժողով ել կգնամ, լիկկայան ել: Յալդուզն արդեն գրել կարդալ գիտե: Յես ինչո՞ւ յետ մնամ:

— Յերբեք չեմ թողնի, վոր գնաս, — ասաց տիկին Մանյան:

— Յեթե իրավունք ունենաս, չես թողնի, — ասաց Յեղսանը:

— Ի՞նչ, ի՞նչ, յես իրավունք չունեմ: Դուքս կորի իմ տանից, — ասաց Մանյան, բռնեց Յեղսոյի մազերից ու դուրս գցեց նրան բակը:

Յեղսանը գնաց աշխատանքի տեսչի մոտ: Տեսուչը յեկավ յեվ արձանագրություն կազմեց: Գործը հանձնեցին ժողդատարան:

Յե, յա, յի, յու:

Աշխատանքի քեսուչը պարասխանաբոլոսյան յեմբարկեց Մանյա Յերամյանին Յեղսոյին գործից իեռացնելու համար:

Նոյեմբերի 29-ը

Դաշնակների ժամանակ Յերևանը յեզ ամբողջ
Հայաստանը վատ որեր եյին ապրում:

Ալան-Թալանը, սովը քայքայել եյին յերկիրը.
փողոցներով անկարելի յեր անցներ: Ամեն մի ան-
կյունում վտանգ եր սպառնում:

Դա հին Հայաստանն եր, դաշնակների Հայաս-
տանը:

Բանվորներն ու գյուղացիներն ապստամբեցին:
Կարմիր բանակը Հայաստանը մաքրեց խմբապետ-
ներից:

Հայաստանը խորհրդային դարձավ:

Խորհրդային Ազրբեջանը, Վրաստանը յեզ Հա-
յաստանը միացան և Փեղերացիա կազմեցին:

Հայաստանում սկսվեց շինարար աշխատանք:

Կառուցվում են ջրանցքներ, հիդրոկայաններ,
գործարաններ: Գյուղացիները կոլտնտեսություն-
ներ, արտելներ են հիմնում: Սկսվում ե նոր կյանք:
Սոցիալիզմ են կառուցում:

Դա նոր Հայաստանն ե. խորհրդային Հայաստա-
նը, յեղբայրացած մյուս հանրապետությունների
հետ:

Յու, յի.

Քաղաքային խորհրդայնապետը յեղավ
1920 թվի նոյեմբերի 29-ին:

Կարմիր բանակի մուտքը Յերևան

Առավոտյան ժամը յոթին, յերբ լույսը նոր եր
բացվել, Պարույրը յեկավ մեզ մոտ:

Յերբեք յես նրան այդպես այլայլած չեյի տե-
սել: Արդյոք բան ե պատահել՝ Նա թեև գույնը գցել
եր, բայց տխրության նշույլ չկար յերեսին: Նայեց
չորս կողմը, մոտեցավ յեզ ականջիս ասաց.

— Աչքդ լույս, շուտով մերոնք գալու յեն:

— Վճրտեղից իմացար, — հարցրի յես:

— Գարաժի ծառայողներից իմացա: Դեռ մաք-
դու չասես. նույնիսկ քույր Յեսթերին ել: Լսող-նա-
յող չկա՞:

— Ձե, մի վախենա: Հանգիստ գործիդ յեղիր:

Պարույրը գնաց:

Ձանցավ յոթ ուր, յերբ յեկան մերոնք:

Կարմիր դրոշակները ծածանվում եյին Յերեվա-
նում: Բանվորներն ու գյուղացիներն ուրախությամբ
դիմավորում եյին Կարմիր բանակին:

ույ, յո

Կարմիր բանակ

— Ո՛վ ե պաշտպանում խորհրդային Միությանը:

— Կարմիր բանակը:

— Ո՛ւմ ե պաշտպանում Կարմիր բանակը:

— Աշխատավորներին:

Կարմիր բանակը կազմված ե բանվորներից և գյուղացիներից:

Մեր բանակն ուժեղ ե թե զենքով, թե գիտությանով: Նա պաշտպանում ե բանվորի և գյուղացու աշխատանքը:

Ցարի ժամանակ զինվորը վոչ մի իրավունք չուներ: Նա մի մեքենա յեր կապիտալիստների ձեռքում: Այժմ Կարմիր զինվորն ազատ ե. նա ոգավում ե քաղաքացու բոլոր իրավունքներից:

Կարմիր բանակացիներն ապարի, նա պաշրպանում է բանվորի և գյուղացու աշխատանքը: Կարմիր բանակը կապված է բանվորներից և գյուղացիներից:



Ֆիզկուլտուրա

Սաֆարը առավոտները շուտ եր վեր կենում: Ընկերները նկատել եյին այդ:

— Սաֆար, այդքան շուտ, առավոտներն ուր ես գնում:
— Կարցրին մի որ նրանք Սաֆարին:

— Ֆիզկուլտ խմբակի անդամ եմ, — պատասխանեց նա, — գնում եմ խորառժառի ակումբ: Այնտեղ մի ժամ պարապում եմք ֆիզկուլտուրայով:

— Ի՞նչպիսի վարժություններ եք անում. — Կարցրեց նրան Ֆրիդոնը:

— Կես ժամ ֆիզիկական վարժություններ, կես ժամ խաղեր — ֆուտբոլ, թուիչքներ, սառը ջուր, կես ժամ ել ուղիական պարապմունք:

— Մեզ ել չե՞ն գրի, վոր գանք:

— Ի՞նչու չե. բայց ավելի լավ կլինի մեր կուլեկտիվին կից կազմենք մի խմբակ:

Վորոշեցին Կարցը գնել կուլեկտիվի ժողովին:

• Ֆ ֆ

Ֆիզկուլտուրան անբացնում ե մարդու մարմնը, ֆիզկուլտուրան անհրաժեշտ ե քոյոր բանվորներին:

Մերն և կյանքը

Աշխատում ենք և սովորում և կարգում,
 Կյանքը մերն է, որերը վառ բերկրալի.
 Ով է մեզ պես ապրում ազատ, յերջանիկ,
 ով է մեզ պես ծլում, ծաղկում լի ու լի:

Մենք յերգում ենք աշխատանքը բանվորի,
 սովետական մեր նոր յերկրի, նոր կյանքի.
 մենք կռում ենք, ծեծում, յերկաթ դարձնում,
 սովետական այս որերում խնդալի:

Մեռնում և

Մեռնում է ծեր տատս աշտեղ,
 մեռնում է, գնում է հավետ,
 մեռնում է սև կատուն իր հետ,
 մեռնում է և հինը անհետ...

Քանդում ենք տնակը տատիս,
 հասել է որհասը հնի...
 քանդում ենք տնակը այն հին,
 թափվում է փոշին հնի...

Աճում և

Աճում է, յեղնում է նորը,
 վառվում, ջահել ու կայտառ,
 բացել է թևերը հզոր,
 գրկել է աշխարհը արար...

Ցանցել է լարերով պողպատ,
 սփռել է լույսը անմար.
 յեղնում է գործարանը տիտան,
 սուլում է, կանչում է զվարթ...

Ա Յ Բ Բ Ե Ն

Ա ա,	Բ բ,	Գ գ,	Դ դ,	Ե ե,	Զ զ,	Ը ը,
Թ թ,	Ժ ժ,	Ի ի,	Լ լ,	Խ խ,	Ծ ծ,	Կ կ,
Հ հ,	Ձ ձ,	Ղ ղ,	Ճ ճ,	Մ մ,	Յ յ,	Ն ն,
Շ շ,	Ո ո,	Չ չ,	Պ պ,	Ջ յ,	Ռ ո,	Ս ս,
Վ վ,	Տ տ,	Բ բ,	Ց ց,	Փ փ,	Ք ք,	Ֆ ֆ,

Ու ու:

Նա Բբ Գգ Դդ Եե Ձզ Րր
 Թթ Ժժ Իի Լլ Խխ Ճճ Կկ
 Զզ Ըզ Ղղ Ծծ Մմ Յյ Նն
 Շշ Ոո Չչ Պպ Ջյ Ռո Սս
 Վվ Մտ Բբ Կկ փփ Քք Ֆֆ

Թ Վ Ե Բ

1 2 3 4 5 6 7 8 9 10

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18,
 19, 20, 30, 40, 50, 60, 70, 80, 90, 100.
 I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XII.

1. Գիրք

Մարդիկ առաջ վայրենի եյին. ապրում եյին վայրի պտուղներով ու փոսով:

Նրանք անզոր եյին բնության դեմ: Նրանք բնության գերին եյին: Չունեյին գործիքներ, չունեյին գիտութիւն:

Յերկար դարեր կռիւ մղեցին բնության դեմ: Այդ կռիւի միջոցով նրանք փորձ ձեռք բերին: Կռիւի այդ փորձը դարերի բնութացում կուտակեց: Յեւ բնության գերիները հետզհետեւ դարձան բնության տերերը:

Գիտութիւնը կռիւի այդ փորձն է, վոր ամբարված է գրքերում:

Գիրք գրքի բանալին է:

Ձեռք բեր այդ բանալին:

Դժանով կարող ես ձեռք բերել հազարամյալների կռիւի փորձը — գիտութիւնը:

2. Գիրքը

Գանձարան եր գիրքը կողպած,

հարուստինն եր բանալին:

հիմա բոլոր գանձերն այդ բաց

գեղջուկինն են, բանվորին:

ՀԱՐՑԵՐ

— Ինչի՞ միջոցով է փորձն ու գիտութիւնը հաղորդվում սերունդից սերունդ, յերկրից յերկիր: Ի՞նչ ոգուտ ունի գրագիտութիւնը:

— Ի՞նչ «գանձեր» կան թագնված գրքերում:

— Յէրբ բացվեցին այդ գանձերը գեղջուկի ու բանվորի համար:

— Վճիռ շրջանին է վերաբերում վոտանավորի առաջին յերկտողը. վճիռ շրջանին՝ վերջին յերկտողը:

Բ Ա Ռ Ե Ր

Անզոր — ուժ չունեցող, թույլ:

Կռիւ մղել — կռվել:

Կուտակեց — կիւտեց, հավաքեց:

Հետզհետեւ — կամաց-կամաց:

Հաղորդել — (իմաց) տալ, հանձնել:

Հազարամյակ — հազար տարի:

Գեղջուկ — գյուղացի:

Յերկար — յերկու տող, կարճ գրութիւն:

Առաջադրութիւն — դաս, խնդիր, վոր պիտի լուծել:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Լրացր՛ւ այս հարցաթերթը.

հայրըստիքը

Պայքարումն

Սնումն

հայրանումն

Մայրիք

Վճիռ մարտչան անդամ իս

հասցի

(փայլիքի) (անիւն և անհայտի)

Ազգանունները, անուններն ու հայրանուններն սկսվում են մեծատառով: Որինակ՝

Վարդանյան Գևորգ Սերոբի,

Վրթանեսյան Հովհաննես Պետրոսի:

3. Վարպետ Սաքուն

Վարպետ Սաքուն յերեսունհինգ տարեկան եր, բայց գրել-կարդալ չեր սովորել:

— Վարպետ, ինչո՞ւ չես գնում լիկկայան, — հարցնում է յինք յերիտասարդ բանվորներս:

— Կարդալն ինչի՞ս ե պետք, — պատասխանում եր նա: — Դուք վոր գրագետ եք՝ ինձանից լավ եք կահկարասիք պատրաստում: Յե՛վ վերջապես՝ իմ հասակին ել ի՞նչ կարդալ:

Ճիշտ ե, այդպես ասում եր Սաքուն, բայց այնքան ել համոզված չեր: Տեսնում եր, վոր ինքը յետ ե մնում: Անգրագիտության պատճառով վոչ մի տեղ չեր ընտրվում: Թերթ չեր կարողանում կարդալ. չգիտեր՝ ի՞նչ կա-չկա աշխարհում: Ճնշվում եր ամեն անգամ մեղ հարցնել. Թեև մենք սիրով էյինք նրա համար թերթ կարդում: Ու նա սկսեց մտածել...

Մի որ ել իմացանք, վոր վարպետ Սաքուն յերեկոները լիկկայան ե գնում:

Միքանի ամիս անց՝ վարպետն արդեն կարողանում եր կարդալ:

Հիմա նա գոհ ե, ուրախ, վոր գրագետ ե: Յերեկոները կնոջ համար լրագիր ե կարդում: Դեռ կնոջն ել համոզում ե, վոր գրել-կարդալ սովորի:

ՀԱՐՅԵՐ

- Ո՞ւմ համար են լիկկայանները:
- Ո՞վ ե բաց անում մեծահասակների դպրոցները:
- Բացի լիկկայանից՝ մեծահասակների համար ուրիշ ի՞նչ դպրոցներ կան:
- Ինչո՞ւ համար անգրագետին վոչ մի տեղ չեն ընդունում:
- Ինչո՞ւ համար գրագետը կարող ե առաջ գնալ:

Բ Ա Ռ Ե Ր

Ատաղձագործ — խառատ, գուրդար:

Ճնշվել — քաշվել, ամաշել:

Անվանացանկ — անունների ցուցակ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այբբենական կարգով կազմվր ձեր խմբակի սովորողների անվանացանկը (այբբենական կարգը տես՝ եջ 43.): Առաջ գրվր ազգանունները, հետո՝ անունները:

4. Առաջ յեւ հիմա

Բանվոր էյինք գործարանում,
ու մեր աղան՝ մի հարուստ.
տասներկու ժամ դատում, բանում,
բայց չունէյինք մի ապրուստ:

Տիրոջ տղան՝ իրավագետ,
ու թոռները՝ գիմնազում:
Իսկ մենք՝ խավար, խեղճ ու տգետ,
մեր մանուկներն՝ անուսում:

Տասնույոթին հրդեհ վառվեց,
բանվոր, գեղջուկ դուրս յեկան.
ծնունդ առավ այդ մեծ կովից
Նոր աշխարհը հաղթական:

Տերն ենք հիմա նոր աշխարհի,
մերն ե ուսում, գործարան.
գեղջուկի հետ մենք ձեռք-ձեռքի
գնում ենք դեպ ապագան:

ՀԱՐՅԵՐ

- Ո՞ւմն էյին պատկանում առաջ գիտությունն ու հարստությունը. ումը՝ հիմա:
- Վեր ժամանակաշրջանին են վերաբերում առաջին յերկու տները. վորին՝ վերջինները:
- Ի՞նչ ե ուզում ասել՝ «տասնույոթին հրդեհ վառվեց»: Մեղ մոտ (Հալաստանում) յերբ «հրդեհ վառվեց»:

Բ Ա Ռ Ե Ր

Իրավագետ — փաստաբան, ազվակատ:

Մանուկ — յերեխա:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ


1. Վոտանավորի վերջին յերկու տան բառերը վանկերի բաժանիր և վանկերը գծիկներով բաժանած՝ արտագրիր տետրակիդ մեջ: Այսպես՝

Տաս-նու-յո-թին հըր-դեհ վառ վեց....

Յերբ ամբողջ բառը չի տեղավորվում տողավերջում, բառի մի մասը փոխադրում են հաջորդ տողը: Դա կոչվում է տողադարձություն:

Տողադարձության ժամանակ բառերը վանկերի յեն բաժանում և միայն ամբողջ վանկերն են փոխադրում հաջորդ տողը:

Յերբեմն «ը»-ն արտասանում ենք, բայց չենք գրում. որինակ՝ Մկրտիչ, սկսել և այլն (արտասանում ենք, Մըկըրտիչ, ըսկըսել): Տողադարձության ժամանակ «ը»-ն գրում ենք, յեթե «ը» ունեցող վանկն ընկնում է տողի վերջը. որինակ՝ Մըկըրտիչ (յեթե «Մը» վանկն է ընկնում տողավերջը), կամ Մկըրտիչ (յեթե «կըր» վանկն է ընկնում տողավերջը):



5. Մեր ակումբը

Յերեկոյան դպրոցից հետո հաճախ գնում եմ մեր ակումբը: Ակումբում թերթ եմ կարդում: Յերբեմն դասախոսություն ու զեկուցում եմ լսում: Շաբաթը մի-յերկու անգամ ել կինո կամ ներկայացում ե լինում:

Ակումբում կան զանազան խմբակներ, ինչպես՝ ինքնագարգացման, ֆիզկուլտի, յերաժշտական, թատերական և այլն: Յես մասնակցում եմ թատերական խմբակին:

Կան նաև խաղեր: Սիրում եմ յերբեմն շախմատ խաղալ:

Ակումբում տեսնում եմ ընկերներին: Ինչպես գործարանումն ենք միասին, այնպես ել ակումբում: Այնտեղ միասին աշխատում ենք, այստեղ դարձյալ միասին հաճելի և ոգտավետ ժամանց ենք ունենում: Ձգում ես, վոր մեր կյանքն ել բեկ է, մեր աշխատանքն ել: Ձգում ես, վոր վոչ միայն գործի մեջ, այլ նաև կենցաղով բոլորս մի մեծ ընտանիքի անդամ ենք:

ՀԱՐՑԵՐ

— Վոր ակումբի անդամ ես: Ի՞նչ են անում ձեր ակումբում:

— Ի՞նչ խմբակներ կան ձեր ակումբում: Դու վոր խմբակին ես մասնակցում:

— Ի՞նչ լավ և վատ կողմեր ես նկատել ձեր ակումբում: Ի՞նչ ես արել ձեր ակումբի թերությունները վերացնելու համար:

— Հեղափոխությունից առաջ ովքեր եյին գնում ակումբ: Ի՞նչ եյին անում հին ակումբներում: Ի՞նչ տարբերություն կա նախկին և մեր ակումբների մեջ:

— Բացի ակումբից ուրիշ ի՞նչ ոգտավետ ժամանցի վայրեր կան: Ի՞նչ են անում այնտեղ:

Բ Ա Ռ Ե Ր

Հաճախ — շուտ-շուտ կրկնվող:

Ձեկուցում — տեղեկատու

դասախոսություն:

Ֆիզկուլտ — ֆիզիկական դա-

ստիարակություն, վորի

նպատակն է մարմնի ուժն

ու առողջությունը դար-

գացնել:

Ժամանց — ժամանակ անց-
կացնելու հաճելի զբաղ-
մունք:

Կենցաղ նիստ ու կաց
Թերություն — պակասու-
թյուն:

Վայր — տեղ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր ամբողջական խոսքից հետո մեր ձայնն իջնում ե, և մենք դադար ենք առնում: Կարդալիս հետևիր, թե վնդտեղ ե ձայնդ իջնում և ի՞նչ կես է դրված ամբողջական խոսքից հետո:

Ամբողջական խոսքերից հետո գրվում է վերջակետ (·)

2. Արտագրելը առաջին հատվածի վերջին (յերրորդ) պարբերութունը (նոր տողից—նոր տող):

Արտագրելուց առաջ պետք է՝

1. Արտագրելիք խոսքերը վարժ կարդալ սովորել:
2. Դիտել, թե ինչպես է գրվում ամեն մի բառը, վորտեղ ինչ կետ է գրված:
3. Արտագրելիս պետք է ամբողջ բառը գրել մի անգամից՝ առանց ընդհատելու (առանց գրիչը վերցնելու) գրել:
4. Գրել մաքուր և պարզ:

6. «Շուստով» յեւ «Արարատ»

I

Բանվոր էյի Շուստովի գործարանում:

Կինս ծանր հիվանդ էր: Վատ սնունդ, խոնավ, նեղլիկ բնակարան,—եւ առողջութիւնն կմնա: Փող եւ չունեցի՝ բժշկին տայի: Բանի գնում՝ գրութիւնը վատանում էր: Չորս տարեկան Բենիկիս թողնում էյի ծծկեր քրոջ և մոր մոտ, գնում էյի գործարան:

Մի որ եւ յուր բերին, թե՛ տղադ ընկել է կառքի տակ: Ջրի գնալիս եր աղետը պատահել:

Խելագարի պես դուրս թռա: Յերեխային գրկեցի ու վազեցի տուն: Արնակոյտ յերեխան հիվանդ մոր գրկում շունչը փչեց:

Մայրը չգիմացավ հիվանդութեանը և սրտի ցավին:

Հազը սաստկացավ: Մոմի պես հալվեց: Հալվեց, հալվեց... ու մի որ եւ մարեց:

Իմ ոճախն եւ մարեց.—մորն հետևեց շուտով ծծկերը:

II

Այժմ եւ նույն տեղում բանվոր եմ: Գործարանը հիմա կոչվում է «Արարատ»: Նորից ամուսնացա: Կինս եւ բանվորուհի յե մեզ մոտ:

Առավոտյան թեյից հետո կինս մեր նինելին տանում է մսուր: Յես եւ հինգ տարեկան Ստեփանիկին տանում եմ

մանկոճախ: Այնուհետև հանգիստ սրտով գնում ենք գործարան:

Գործից հետո հայր և մայր գնում ենք Ստեփանիկին վիրցնելու: Յերեխան մեր գեմն է վազում և մեկիս գրկից մյուսի գրկին է թռչում: Ուրախ է նա ու կայտառ: Բայց ողում խաղալուց այտերը կարմրել են: Համբուրում ենք նրա կարմիր այտերը և միասին գնում ենք նինելին վիրցնելու:

Ուրախ, զվարթ վերադառնում ենք տուն:

Յերը հիշում եմ «Շուստով»-ը, կասես սև ամպ է անցնում սրտովս:

ՀԱՐՑՅԵՐ

— Վճր շրջանին է վերաբերում առաջին հատվածը և վորին՝ յերկրորդը:

— Ի՞նչ վերնագիր կդնեք առաջին հատվածին և ի՞նչ՝ յերկրորդին:

— Ուրիշ ի՞նչ վերնագիր կարելի չե դնել ամբողջ հոգվածին:

— Յերբանից է բանվորի գրութիւնը լավացել և ինչի՞ հետևանքով:

Բ Ա Ռ Ե Ր

Խոնավ—թաց, նամ:

Աղետ—մեծ դժբախտութիւն:

Խելագար—գիժ:

Մարեց—հանգավ:

Այնուհետև—նրանից հետո:

Կայտառ—ժիր և առողջ:

Մսուր—պետական հիմնարկ, վորտեղ մինչև 3 տարեկան յերեխաներին են խնամում:

Մանկոճախ—3—7 տարեկան յերեխաների մանկապարտեզ, վորտեղ յերեխաներն ստանում են սնունդ և ուսում:

Այտ—թուշ:

Դիմում

ԱԶՈ մանկապարտեզի վարչութեան,

Յերկաթուղային բանվորուհի Յեսթեր Հարութիւնյանից

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ իմ աղջիկ Կիմային ընդունեք յերկաթուղայինների մանկապարտեզ:

Գրությանս կից ներկայացնում եմ՝

1. Իմ ծառայության №... վկայականը.
2. Յերեխայիս №... ծննդական վկայականը.
3. Յերեխայիս №... ծաղկի վկայականը:

Յեսթեր Հարությունյան

Յերևան, 1929 թ. հոկտեմբերի 5,

Մարքսի փողոց №27

7. Նամակ Դիլիջանի հանգստյան տնից

Ընկեր Վարդգես,

Ութերորդ սրն ե, ինչ Դիլիջանի հանգստյան տանն եմ: Ինձ շատ լավ եմ զգում: Քաշս 2 կիլո ավելացել ե: Մնունդը լավ ե: Առավոտյան թեյի հետ տալիս են մեզ ու կարագ, պանիր, ձու: Նախաճաշին՝ կաթի կամ կակաոյի հետ՝ նույնը: Ծաղը յերկու տեսակ ե և սննդարար: Յերեկոյան լավ ընթրիք ենք անում:

Մաքրությունն ու առողջապահական պայմանները լավ են: Ունենք փորձված բժիշկ, վոր աշախույժ հսկում ե ամեն բանի վրա:

Կազմակերպում ենք հաճելի ժամանցներ. խաղ, յերգ, զրույց, եքսկուրսիա և այլն: Ինչ գեղեցիկ ե Դիլիջանի շրջակայքը, անտառապատ սարերն ու հովիտները, ծաղկավետ դաշտերն ու մարգագետինները: Յերեք ընության գեղեցկությունն այսպես չեյի զգացել: Սև հացի հոգսը թույլ տալիս եր անցյալում, վոր իմանայինք՝ ինչ ե ընության վայելքը...

Ունենք պատի թերթ: Հետաքրքիր ե հանգստյան տան ալբոմը: Յեկողներն իրենց տպավորություններն են գրել այնտեղ: Ինչ յերախաղաղություն կա նրանց խոսքերի մեջ գեպի խորհրդային իշխանությունը, ինչ վոգևորություն:

Անցյալ որը մեր Հոսիկին տեսա սանատորիայում: Թոքերի թուլության վոչ մի հետք չի մնացել: Կազդուրվել գերացել ե:

Չնախանձեք: Շուտով հերթը ձեզ ել կհասնի:

Ընկերական բարևներով բոլորիդ՝

25/VI 29 Դիլիջան

Մարգիս Մարգարյան:

ՀԱՐՑԵՐ

- Ո՞վքեր եյին (հեղափոխությունից) առաջ ամառանոց գնում:
- Ի՞նչ տարբերություն կա հիմիկվա և հին ամառանոցների մեջ:
- Գնացել ել հանգստյան տուն կամ սանատորիա՞ Պատմիր՝ ինչպես եր այնտեղ:

Բ Ա Ռ Ե Ր

- Սննդարար—լավ սնունդ ունեցող՝ Յերախաղաղություն — լավու-
Աշախույժ—ուշագիր: Թյունը հմուտնալը:
Հաճելի—դուրեկան: Սանատորիա — բուժավայր, ուր
Անտառապատ—անտառով պատած: հիվանդները բժշկվում և կազ-
Հովիտ—յերկու սարի մեջտեղ կամ դուրվում են:
գետի յերկու ափին կանաչա- Կազդուրվել—առողջանալ և ամ-
վետ տարածություն: րանալ:
Ալբոմ—գիրք՝ հուշեր և գիտողու- Գերանալ—չաղանալ:
թյուններ գրելու համար: Հետք—նշան (վոտքերի թողած),
իդ՝

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սրա նմանողությամբ գրելը մի կարճ (6—8 տող) նամակ:

1. Գրելուց առաջ քեզ համար պարզիր՝ ինչ հարցերի մասին պիտի գրես:
2. Հարցերը մտքումդ դասավորիր (առաջ ինչի մասին պիտի գրես, հետո՝ ինչի, հետո ինչի), կապակցիր, անպես գրիր:
3. Գրելը կարճ խոսքերով (3—4 բառից բաղկացած): Ամբողջական խոսքերից հետո վերջակետ (.) դիր: Նոր հարցի մասին վոր կգրես, նոր տողից սկսիր: Նոր տողից սկսելիս տողի սկզբից չսկսես գրել, այլ մի քիչ խորքից:
4. Բառը գրելուց առաջ նախ իմացիր՝ ինչպես ե գրվում (գրքի մեջ փնտրիր այդ բառը, կամ ուսուցչից հարցրու), հետո գրիր: Միշտ աշխատիր՝ առաջ ճիշտն իմանալ, հետո գրես, վոր սխալ գրելու չվարժվես:

Հայրապետապետ

..... փողոց N....

Լևոն Պարբերյանին

Դ. Պարբերյանի, Յիբևան, Պաճճի փ. 16

Տարիս

Կարգադրում

Յիբևան

Ներսիսյան փող. N 87

N 1 համակարգարարի փարիզին

Հայրապետ (փաստ. Լուսու գալ.)

Խառնար Արապյանի

Տարիս

8. Դառար Գրիգոր

1.

Հայրս հիվանդ եր.
 Խեղճ մայրիկս գլուխը կորցրել եր.
 — Ձնւր,—հառաչում եր հայրս.
 — Խաչիկ,—ձայն տվեց մայրս,—գնա դալար Գրիգորին
 բեր:
 — Մայրիկ, դալարներն սպանում են մարդկանց. Գնամ
 բժիշկ բերեմ:
 — Ձե, չե, ասում են՝ բժիշկները գիտամբ գեղ են տա-
 ւիս հիվանդին սպանում, փոր ուրիշները չվարակվեն:
 — Բժիշկն այդպիսի բան չի անի, մայրիկ:
 — Շատ մի խոսի, գնա կանչի:
 Ճար չկար. Գնացի դալարին բերի:
 Դալարը տնտղեց հորս և ասաց, փոր մրսել ե.
 Պահանջեց տաշտ: Հայրիկիս շապիկը հանեց և պառկեց-
 րեց: Հետո ամեկիով միբանի տեղից մեջքը ծակեց:

Արյունն սկսեց հոսել տաշտի մեջ:
 Հայրիկս նվաղեց ու թուլացած ընկավ.
 — Հիմի պետք ե արյունը կանգնեցնել: Տաք ջուր բե-
 րեք, աղ բերեք, սարդի փոստայն բերեք,—սկսեց գոգոռալ
 դալարը:
 Մայրս դեռ ու դեռ եր վազում:
 Տեսնելով, փոր հայրիկս արնաբամ ե լինում, վազեցի
 բժիշկի յետևից:
 — Ընկեր Մկրտչյան, դալարը հայրիկիս մեջքը ծակել ե,
 արյունը չի կանգնում: Խնդրեմ գաս, հայրիկիս աղատես,—
 ասացի յես:
 Բժիշկն իսկույն փեր թուով տեղից, վերցրեց անհրա-
 ժեշտ դեղերն ու ասաջ ընկավ:
 — Հենց փոր դալարը պատուհանից տեսավ՝ բժիկը գալիս
 ե, ամեն ինչ թողեց ու փախավ:
 — Ես հիվ ե դալարին կանչել,—գոռաց բժիշկը տուն
 մտնելով:
 — Տես եմ կանչել, բժիշկ ջան, անգետ մարդ ենք,—
 պատասխանեց մայրս,—կներես:
 — Դալարին ել դատի կտամ, բեզ ել:
 Բժիշկն արյունը կանգնեցրեց:
 Հայրիկս յերկու շաբաթից փոսի կանգնեց:

ԱՌՍՁԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Խոշոր տառերով արտագրիր ամեն մի լոգունդ
 մի թղթի վրա և փակցրու պատերին:

Չիտիր, յիրադ և մարմնուդ միշտ
 մաքուր պահիր:

Սպիրտակոլորտ յուր յուր փոխիր.
 Բնակարանուդ միշտ մաքուր ող
 և արև թող լինի:

Զուր, ողր և արևը մի բարիկան
 նիրն ին:

Ուր արև չի մըմում բժիշկ կհրմի:

9. Ուստա Պզուկը

Ա.

Ուստա Պզուկի բեֆին բեֆ չեր հասնի. փողն իրեն-
իրեն եր գալիս. կերածն ել միշտ մեղր ու կարագ, տուփա
ու բուֆթա:

Խանութը բաղաբի բանուկ փողոցի վրա, ինքը մկրատը
ձեռին ձեռում եր, չորս-չորս աշակերտներն ել նստած կա-
րում եյին, հա կարում:

Բ.

Ժամանակն անցավ...

Աշխարհը փոխվեց...

Թեև մեղրն ու կարագը, տուփան ու բուֆթան անպա-
կաս եյին Պզուկի սեղանից, բայց ել «աղա» կանչող չկար,—
«ընկեր» եյին ասում:

Բայց ահա մի որ աշխատանքի տեսուչը խանութ մտավ:

— Վարպետ, բանի՞ աշկերտ ունեք:

— Չորս:

— Ամսական ի՞նչ եք տալիս:

— Ամ...սա...կան,—կմկմաց Պզուկը, ու լեզուն կապ
ընկավ:

— Ի՞նչ ամսական, ի՞նչ բան—ձայն տվեց աշկերտնե-
րից մեկը,—ես չորս տարի յե ձրի ծառայում եմ:

— Վարպետ, ես աշկերտներին ամսական բսան ուղբի
փող պիտի տաս: Բացի այդ, կգնաս ապահովագրական գան-
ձարկը և կապահովագրես: Հակառակ դեպքում խանութը
կփակենք:

Ասաց ու գնաց:

Վարպետ Պզուկը կարծես կայծակնահար յեղավ, ձայն
չհանեց:

— Ուստա Պզուկ, բեֆդ վճեց ա,—ասացին աշկերտ-
ներն ու մի կուշտ ծիծաղեցին:

Ս Տ Ա Յ Ա Կ Ա Ն

1928 թ. 30-ին հոկտեմբերի: Արաչա Կառու-
յողների Միության Վարչությունից ի՞մ արարա-
ժանյա աշխատանքի վարչապետությունը — վեց
օրվա 13 կուպեկ (6 օրվա 13 կուպեկ):

Ասրգիս Գալոյան

10. Կորչի չադրան

Հոկտեմբերի 11-ը տարեդարձն եր:

Ժամի 10-ին հավաքվեցին աղումբը:

Անսովոր կենդանություն եր տիրում. չադրաների մեջ
փաթաթված թրքուհիները խոսում, փնտում եյին: Տրամա-
դրությունը տոնական եր:

Ներս մտավ կին-հրահանգչուհին: Ժպտալով բարևեց
բոլորին և բեմ բարձրացավ:

— Ընկերներ, — սկսեց հրահանգչուհին:

Տիրեց խորին լուռություն: Բոլորի աչքերը սևեռվեցին
ճառախոսի վրա: Նա խոսում եր խոր համոզումով: Լսող-
ներին վարակում եր իր փոքերով թյամբ: Խոսում եր Հոկ-
տեմբերի նվաճումների մասին, նոր կենցաղի մասին:

— «...Չադրան ծածկում ե աշխարհը մեր հայացքից,—
չադրան տգիտության նշանն ե: Կրոնը չի ուզում, վոր
մենք լույս աշխարհ տեսնենք: Դրա համար նա ծածկել ե
մեր աչքերը:—Չադրան խավարի նշանն ե: Ներսում մեզ
բանտարկել եյին հարեմի պատերի մեջ: Այդ դեռ բազմական
չեր: Դրսումն ել ուզում եյին մեզ չադրայի մեջ բանտար-
կել:—Չադրան ստրկության նշանն ե: Հոկտեմբերը խորտա-
կել ե տգիտության և ստրկության բոլոր շղթաները: Կորչի
չադրան, տգիտության և ստրկության այս նշանը...»

— Կորչի, չադրան,—վորոտաց ամբողջ դահլիճը:

— Կորչի չադրան,—գոռաց 60-ամյա Զեյնաբը և դեն
շպրտեց իր չադրան:

Բուռն ծափահարութիւններէց թնդաց դահլիճը:
Յեզ ներկա կանանցից շատերը հետեցին Զեյնաբի
որինակին:

ՀԱՐՅԵՐ

- Ի՞նչ բանի նշան ե չազբան:
- Ինչո՞ւ չե կրօնը հովանավորում հին սովորութիւնները:
- Հին սովորութիւններէց ովքեր ելին առժամ կամ ողա-
վում—մոլաներն ու բեկերը, թե՛ աշխատավորութիւնը: Ինչո՞ւ:

ԲԱՌԵՐ

- | | |
|--|-----------------------------------|
| Տարեդարձ—այն որը, չերբ տա-
րին լրանում ե: | Հայացք—տեսողութիւն: |
| Անսովոր—վոր սովորականին նման
չե: | Մարկութիւն—գերութիւն: |
| Կենդանութիւն—աշխուժութիւն,
չեռ ու գեռ: | Խորտակել—ջարդ ու փշուր ա-
նել: |
| Սկեռվել—մեխվել: | Վորոտալ—ամպի նման գոռալ: |
| Նվաճում—ձեռք բերած հաջողու-
թիւն: | Տուժել—փնտս քաշել: |
| | Դահլիճ—մեծ սենյակ, դալ: |

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրիբ հրահանգչուհու խոսքերը:
Դյուղերի, քաղաքների, գետերի և սարերի անուններն սկըս-
վում են մեծատառով, որինակ՝

- 1 Բանասիր, Բյուրակյան, Վարդի:
- 2 Զրեան, Զ իմանակյան, Գորիս:
- 3 Նրաֆ, Նրաֆաշայ, Զանգու:
- 4 Նրապար, Նրազամ:

11. Ապրի—տո՛ւր, մեռնի—տո՛ւր

I

Կլեկչի Մարկոս բիճի թուր ծանր հիվանդ եր:
Նոր եր ծնվել, բայց գեռ չեյին մկրտել:
— Մկրտենք, մկրտենք,—փնթփնթում եր տատը: Սուրբ

մեռնի գորութիւնը մեռնեմ. սուրբ մեռնը կազատի
տղիս:

— Բայց փող չունենք. տերտերին ի՞նչ տանք,—ասաց
հարսը՝ հառաչելով անկողնում:

— Ամանեղենից մի բան կծախենք,—պատասխանեց
կեսուրը: Այ մարդ, վազի տերտերի՛ յետեից,—դարձավ նա
Մարկոս բիճին:

Մարկոսը տերտեր կանչեց:

Կնուներից հետո սեղանի նստան.

— Տերտեր ջան,—ասաց Մարկոս բիճին ճաշելուց հետո:
— Զեռիս փող չկա: Կսպասե՛ս՝ պղնձեղեն ունեմ, ծախեմ—տամ:

— Վորդի, ինչի՞ յես ծախում: Նն ե՛ս փլավի պղին-
ձը տուր ինձ: Երեցկինն ասում ե միշտ՝ փլավի պղինձ չու-
նենք:

— Լավ ե ասում տեր-հայրը,—ձեն սլահեց տիրացուն:
— Թավեն ել ինձ տուր՝ պրծնի—գնա:

Ու բեռնավորված՝ տերտերն ու տիրացուն գնացին:

II

«Սուրբ» մեռնը չոգնեց: Կնքելու ժամանկ դեռ մրսեց
եւ յերեխան: Տարութիւնը բարձրացավ: Յերեխան չղիմա-
ցավ և մեռավ:

— Տերտեր ջան, արի յերեխին թաղի:

— Թաղման ծախսերն ունի՞ս, վորդի:

— Դու վարձի տեղ պղնձներդ կկեկեմ:

— Եղ իր կարգին: Բայց մենք լվացքի պղինձ չունենք:
Երեցկինը միշտ ասում ե...

— Բայց մենք ունենք-չունենք՝ մի լվացքի պղինձ:

— Ե՛ ի՞նչ արած: Թաղումն ավելի ծանր ե կնուներից:

— Բա մեզ ապրուստ պետք չի:

— Զհանդամը թե պետք ե,—բարկացավ տերտերը:

Մարկոս բիճին գույնը գցեց: Ել չհամբերեց:

— Զհանդամը դո՛ւ գնաս, թալանչի: Զուր չեն ասել՝
«սար ու ձոր—տերտերի փոր»: Ապրի—տո՛ւր, մեռնի—տո՛ւր:
Զահրումա՛ր կտամ քեզ,—գոռաց Մարկոս բիճին ու դար-
ձավ տուն:

Տանը հավաքվել ելին մեծ թոռան պիտներ ընկերները:
Նրանք փառավոր թաղում կազմակերպեցին իրենց ըն-
կեր՝ յեղբորը:

— Վնաց լվացքի պղինձը ձեռիցս գնաց, — մտածում եր
տերտերը տխրությամբ:
— Վնաց յես առաջուց պիտենեներին չգիմեցի, — մտա-
ծում եր Մարկոս բիձեն տխրությամբ:

ՀԱՐՑԵՐ

— Ինչո՞ւ չե Մարկոս բիձեն տերտերին «թալանչի» անվանում:
Այդպիսի թալանչիության ել ի՞նչ դեպքեր գիտես:
— Ի՞նչ տարբերություն կա տերտերի և Մարկոս բիձի
տխրության մեջ:
— Ի՞նչ ե առաջին հատվածի գլխավոր նշութը. ի՞նչ՞ չերկրոր-
դինը: Ի՞նչ վերնադիր կգնես առաջին հատվածին. ի՞նչ՞ չերկրորդին:

ԲԱՌԵՐ

Կազմակերպել — սարքել:

Հատված — կտոր, մաս:

12. Տերտերի արտասուքը

Տերտերը նստել
մի մութ անկյունում,
ունքերը կիսել
ու լաց եր լինում:
Մոտիկ ե գալիս
մի կուլակ պապի.
— Ինչո՞ւ չես լալիս,
աչքս խավարի...
— Ի՞նչ անեմ ապա,
վոր լաց չլինեմ,
անաստված մարդիկ
ժամա խլեցին,
ինձ ախպես անճար
ու խեղճ թողեցին:
Կար ժամանակ,
վոր յես ել
հազար ու բյուր
հարզանքով
շքեղազարդ
փեսի պես
անցնում եյի

Թաղերես:
Ու թաղերից
անցնելիս,
բանի անփորձ
Չահեղներ,
սիրո՞ւն, սիրո՞ւն
աղջիկներ
կախվում եյին
թիկերես...
Ի՞նչս մնաց
են որից,
վոր շեն ու լի
ծխերս,
վորը սիրուն
կանանցից,
վորը գառ ու
բելեխից...
Այժմ, յեթե
ցերեկով
ման եմ գալիս
թաղերով,

ամեն կողմից
թափվում են,
հարայ տալիս,
ծաղրում են:
Ել անփոխան
պիտեներ,
եյ անհավատ
կոմսոմոլ,
գյուղի ահել,
Չահեղներ,
ձեռ են առնում
ծիծաղում...
— Հը, ո՞ր մնաց,
ասում են, —

են աստվածը
քո շինած,
վոր մեզ խաբում,
կթում եր,
ու քո փորը
լցնում եր...
Ա՛խ, բանի վոր
այս յերկրում
կոմունիստներն
են իշխում,
ինձ միշտ սգվոր
կտեսներ, —
այս ե վերջին
իմ սուրբ ուխտ...

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ ե տերտերի տխրության պատճառը:
— Ո՞ւմն ե նա զանգատվում: Ի՞նչ նմանություն կա նրա և
կուլակի վիճակի մեջ:
— Ի՞նչ նշանակություն ունեք աստվածը տերտերի համար:
— Անաստվածների բջիջ կո՞ւն ձեզ մոտ. անդամակցում ես նրան:
— Ի՞նչ նպատակ ունի Անաստվածների Ընկերությունը:

ԲԱՌԵՐ

Շքեղազարդ — շքեղ զարդարված:
Սգվոր — սգավոր, սուգ անող:

Շեն — հարուստ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անաստվածների Ընկերության կանոնադրությունից արտա-
գրելը Ընկերության նպատակին վերաբերող կետերը: Վերնագիրը
գրել՝ «Անաստվածների Ընկերության նպատակը»:

13. Մի յեկեղեցու պատմությունը

1920 թվին մի վարդապետ գնաց Լոնդոն — առաջնորդ:
Հոգևոր հոտը նրան փառավոր բնակարան տվեց: Պակասում
եր կինը, այն ել վարդապետն ինքը մտածեց ճարել ժողո-
վրդի ուշադրությունն իրենց կանանցից հեռացնելու դի-

տուժով մի յեկեղեցի շինելու հարցը հրապարակ գործեց։ Ժողովուրդը հանձն առավ յեկեղեցու ծախսը բաշել։ Վարդապետը ժողովրդի աչքերը յերկինք ուղղեց, իսկ ինքը յերկրի վրա սկսեց նրանց կանանցից ընտրութիւն անել։ Ով փնտռի—նա կգտնի։ Յե՛մ մեր վարդապետը մի կին գտավ, 4000 ստերլինգ ել հետը։

Յեկեղեցին ոճեցին սեպտեմբերի 24-ին։ Վարդապետն ել կնոջ վրա ոճվեց սեպտեմբերի 25-ին։ Ոճվեց ու Փարիզ փախավ։

Մի տոմս գրեց աստծուն, թե՛

«Լոնդոնում քեզ համար տուն եմ շինել։ Հասցեյով գնան, ապրիր այնտեղ։ Գուցե այլևս չաեսնվենք։ Կին ունեմ այժմ և փող։ Մի քիչ ել սրանց պաշտեմ, տեսնեմ՝ ինչ գուրս կգա»։

Հետևյալ նամակն ել գրեց կաթողիկոսին.—

«Վեհափառ տէր, տասնութ տարի աստված պաշտեցի, ինձ մի բան չտվեց։ Բայց մի ամիս մի կին պաշտեցի,— ինձ 4000 ստերլինգ տվեց։ Մի քիչ տարիքով ե կինը։ Վո՛չինչ։ Աստվածը, վոր առաջ պաշտում եյի, ավելի ծեր եր։ Վեղարիս հետ ուղարկում եմ հարգանքս»։

ՀԱՐՅԵՐ

- Ի՞նչ նպատակի ծառայեց յեկեղեցին շինելը։
- Վարդապետն ինքը հավատում եր աստծուն։ Իսկ ինչո՞ւ յե նրան ձեռնառու, վոր ժողովուրդն աստծուն հավատա։
- Ի՞նչ տարբերութիւն կա աղուժքի և յեկեղեցու մեջ։
- Վճիռ դասակարգելի շահերին ե ծառայել յեկեղեցին։
- Ի՞նչ նպատակ ունի մեր աղուժքը։

ԲԱՌԵՐ

Հոտ—վոչխարի խումբ, սուբու։	Ստերլինգ—անգլիական փող,
Դիմում—մտադրութիւն։	վոր անում ե մոտ 10
Պլակատ—մեծ-մեծ տառերով	ոտրելի։
գրված լողունգ, վոր փակ-	Վեղար—վարդապետի պոպոզ։
ցնում են պատերին։	

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հակաիրոնական լողունգներից (որինակ՝ կրոնը—թույն ե, կրոնը մթաղնում ե մասսաների գիտակցութիւնը, և այլն) կազմիր պլակատներ։

14. Աստված, ծխախոտ յե՛վ ալկոհոլ

I

Պատերազմի տարին եր։ Կովի դաշտը լիքն եր մարդու դիակներով։ Գազանները շատ հաշտ եյին ապրում իրար հետ. ուտելու միս շատ կար։ Առյուծի հրամանով՝ բանի մարդու միս կար, արգելված եր իրար միս ուտել։

Յերբ մի գյուղացի գազաններին հյուր գնաց, շատ սիրով ընդունվեց։ Նրանք կարծում եյին, թե մարդիկ իրար կոտորում են՝ գազաններին կերակրելու համար։

— Ի՞նչ կա-չկա մարդկանց մոտ,—հարցրին կենդանիները։ Հո՞ պատերազմը շուտ չի՞ վերջանա ձեզ մոտ։

— Չե՛, —պատասխանեց գյուղացին։—Հոգ մի անեք։ Վողջ լինեն Չեմբուլենը, Պուանկարեն... Ձեր մասին հոգացող շատ կա։ Միշտ ուտելու բան կունենաք։

Գազաններն ուրախացան և լավ հյուրասիրեցին մարդուն։ Ինչ վոր մարդու սիրտն ուղում եր,—պատրաստ եր։ Մարդուն պակասում եր միայն յերեք բան՝ ծխախոտ, աստված և ալկոհոլ։ Նա պահանջ եր գզում թմրեցնելու իր ուղեղը...

II

- Մի աստված տվեք պաշտեմ,—աղաչեց մարդը։
- Աստված ի՞նչ բան ե. վո՞րտեղից ճարենք,—ասացին կենդանիները։
- Եստեղ յեզ չկա,—կարճ կտրեց մարդը։
- Չե՛.—ինչո՞ւ յես հարցնում։
- Ժամանակին յեզ ել եմ պաշտել։
- Յեթե անասունն ել կպաշտվի, բոլորս պատրաստ ենք քեզ ծառայելու։

Ու կենդանիները ժողովի նստեցին։ Կովը ձայն խնդրեց.

— Պարոններ,—ասաց նա.—յես առաջարկում եմ, վոր մարդն սպասի, մինչև յես մի հորթ ծնեմ։ Պատմութիւնից հայտնի յե, վոր մարդը հորթ ե պաշտել։ Պարոն եշը լավ գիտե վոսկե հորթի պատմութիւնը։ Չե՛ վոր պարոնը սրբազան պատմութիւն մեջ մեծ դեր ե խաղացել։ Յեթե նա լուում ե, ուրեմն անձնական հաշիվ ունի իմ դեմ։

— Դու ի՞նչ կասես, պարոն կապիկ,—ձայնը տվեց կապիկին նախագահ առյուծը։

— Ահա մարդու աստվածը,—ասաց կապիկը և մի քսակ փոսկի դրեց մեջտեղը.—Իմ տերերս՝ բանկիր Մորգանը, գեներալ Հարինգտոնը և միսիոնար Դեմիսը, յերբ աստված եյին ասում, այս քսակին եյին նայում։ Մարդիկ, ինչպես յերևում ե, ուրիշ աստված չունեն։

Կենդանիները շատ վիճեցին, շատ չարչարվեցին, բայց չկարողացան իրենց հյուրի համար աստված, ծխախոտ և ալկոհոլ ճարել։

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ ընդհանուր բան կա աստծու, ծխախոտի և ալկոհոլի մեջ։

— Ինչո՞ւ կենդանիները չեյին հասկանում աստծու պահանջը։ Այդ պահանջը բնական և անհրաժեշտ ե։

— Վճր դասակարգերն են գյուղացու և քաղաքի աշխատավորության մեջ կրոնի պահանջը պատկաստել, հրահրել։ Ի՞նչո՞ւ։

— Ի՞նչ են պաշտում Մորգանը, Հարինգտոնը և Դեմիսը։ Ի՞նչ դասակարգի չեն նրանք պատկանում։

— Ի՞նչ վերնագիր կդնես առաջին հատվածին. ի՞նչ վերնագիր լերկրորդին։

ԲԱՌԵՐ

Ալկոհոլ—հարբեցնող նյութ,
վոր կա գինու, ողու, կոնյակի մեջ և այլն։

Ձեմբուկ—անգլիական մի-
նիստրի անունն է։

Պուանկարե—ֆրանսիական
մինիստր-նախագահն է։

Սրբազան պատմություն—

կրոնի պատմություն։
Ընդհանուր բան—նմանու-
թյուն։

Պատկաստել—պատրուսել։
արհեստական կերպով կըս-
ցնել աճեցնել։

Հրահրել—բորբոքել, զարգաց-
նել։

ԲԱՐՉՐԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Կուեկտիվ աշխատանքը

Յերեք ամիս ե, ինչ Միսոն աշխատում ե կաշվի գործարանում։ Բայց նա չգիտե, թե ուր են գնում իր մաքրած մորթիները։ Նա չգիտե, թե իր աշխատանքն ինչ թե-
լերով ե կապված մյուս բաժանմունքների հետ։ Նա իրա-
վունք խնդրեց և շրջեց գործարանը։ Նա տեսավ, թե ինչ-
պես իրենց բաժանմունքում մաքրված մորթիները մշակ-
վում են մյուս բաժանմունքներում։ Յերբ մտավ վերջին
բաժանմունքը և տեսավ պատրաստի կաշիները, անշափ
զարմացավ։ Անհավատալի յեր թվում, վոր այն կեղտոտ,
անպետք մորթիներից այդպիսի գեղեցիկ կաշիներ են
ստացվել։

— Միսո,—ժպտաց բանվորներից մեկը,—կարո՞ղ ես սրան-
ցից բու ձեռքի տակով անցած մորթիները ջուկել։

Ջուկել մորթիները, Դա անհնար ե։ Հարյուրավոր ձեռ-
քեր են աշխատել դրանց վրա։ Նրանք անցել են տասնյակ
մեքենաների միջով, իր անհատական աշխատանքը ձուլվել
ե կուեկտիվի աշխատանքի մեջ։ Միսոն առաջին անգամ իր
կյանքում զգաց, վոր կապված ե ուրիշ մարդկանց հետ։
Յեվ այդ կապի պատճառը՝ աշխատանքն է։

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչն ե կապում բանվորներին։

— Կուեկտիվ աշխատանքի ու կյանքի ուրիշ ի՞նչ դեպքեր
գիտես։

ԲԱՌԵՐ

Շրջեց — ման յեկավ: Կոլեկտիվ — խմբական, հավաքա-
Մշակել — փոխել, սարքել: կան, միասնական:
Անհատական — մի մարդու, անձնա-
կան:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին պարբերությունն արտադրիչ քո բերանից (իբր թե Մխոն դու յես)՝ այսպես: — Յերեք ամիս ե, ինչ յես աշխատում եմ....

Պարբերություն. — Միքանի խոսքերից բաղկացած ամբողջություն, վոր վերաբերում ե մի խնդրի ե վորին կարելի յե մի վերնագիր դնել: Յերե այդ ամբողջությունը վերջանում ե, դնում են վերջակետ ե նոր տողից են սկսում:

16. Արտադրական հանձնաժողովի նիստը

I

Ակումբը լցված եր բանվորներով: Մխոն ել այնտեղ եր: Նա առաջին անգամն եր, վոր մասնակցում եր բանվորական ժողովին: Որակարգի հարցն եր՝ արտադրական հանձնաժողովի հաշվետվությունը: Մխոն վորպես նոր բանվոր, դեռ ամաչում եր: Մտքերի փոխանակությունն սկսվեց: Յուրաքանչյուր խելոք առաջարկ ընդունվում եր ծափահարությամբ: Մխոն ուշադրությամբ հետևում եր: Նա մտածում եր. — ահա այս թերությունն ել ցույց տվին: Յեթե այդ թերությունը վերանա, ինչքան լավ կլինի: Վոգեկորության հոսանքը տանում եր Մխոյին: Նա յել եր ծափահարում: Նա յել բղավում եր՝ «ճիշտ ե»: Հանկարծ նա հիշեց մի բան, վորի մասին հաճախ մտածել եր: «Տեսնես այդ մասին կխոսե՞ն», — մտածեց նա ե սկսեց սպասել: Բայց այդ մասին վոչվոր չհիշատակեց: Նախագահն ուզում եր անցնել ուրիշ հարցի, յերբ Մխոն ձեռք բարձրացրեց:

— Ինձ ձայն տվեք:

Բոլորը լռեցին: Ուզում եյին լսել թե ինչ կասի նոր ընկերը:

ԲԱՌԵՐ

Ակումբ — կուլբ, Հաճախ — շատ անգամ:
Որակարգ — ժողովում քննելիք Հիշատակել — հիշել:
հարցերի շարքը:

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ հարցեր ե քննել ձեր արտադրական հանձնաժողովը:
— Ի՞նչ վորոշումներ են դորժադրվել:
— Ի՞նչ թերություններ ես նկատել ձեզ մոտ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Այս հոգվածը պատմիր քո բերանից (իբր թե Մխոն դու յես):
2. Արտադրիչ հետևյալը՝

ՍՈՒԼԻՉՆԵՐԸ

Առավոտյան ճիշտ ժամը 7-ին ամբողջ միլիոնի համար ե սուլվիչը ճչում:

Աշխատանքն ամեն տեղ սկսվում ե միևնույն ժամին:

Միլիոնավոր մուրձեր միատեղ ե միևնույն վայրկյանին են բարձրանում:

Մեր առաջին հարվածը միատեղ ե թնդում:

Բայց ի՞նչ են յերգում սուլիչներն առավոտյան: Նրանք յերգում են յերգը Միություն:

17. Արտադրական հանձնաժողովի նիստը

II

Մխոն քիչ շփոթված սկսեց. —

— Յես մի բանի վրա շատ եմ մտածել: Չծիծաղեք, յեթե ասեմ: Գուցե փոքր բան ե: Գուցե կարևոր ե: Ո՞վ գիտե...

— Ասա, ասա, — բացականչեցին բանվորները:

— Մեր բաժանմունքից մորթիները գնում են հետևյալ բաժանմունքը: Այնտեղ մորթիների վրայից մնացած մազն ու բուրդը բերում են: Միքանի բանվոր հենց դրանով են զբաղված: Այստեղ կարելի յե տնտեսել: Ինչի՞ցն ե այդ ավելորդ աշխատանքը: Մորթու վրա մազ ե մնում, վորովհետև լավ չի խորասուզվում գեղի մեջ: Դա նրանից ե, վոր գեղը քիչ ե գուռի մեջ. կամ ել բանվորն անփուլթ ե աշխատում:

— Ճիշտ ե, — լավեց այս ու այն կողմից: Մխոն սիրա-
տուով և շարունակեց:

— Ավելի լավ ե՛ր դեղը մի քիչ շատ լինի: Մեկ ել՝ վոր
բանվորն ավելի ուշադիր աշխատի: Այդպիսով մյուս բա-
ժանմունքում աշխատանքը կքշանա, և կարելի կլինի կըր-
ճատում անել...

— Ճիշտ ե:

— ... Բացի դրանից՝ յերբ մազը դանակով են բերում,
կաշին բերձվում ե և նրա վորակն ընկնում:

— Ճիշտ ե, ճիշտ ե...

Մխոյի խոսքերը ծածկվեցին ծափահարությունների
տակ: Նա ամաչկոտ խնդությամբ նստեց:

ԲԱՌԵՐ

Խորասուզվել — սկզբել, մանել

Վորակ — (լավ) հատկութուն:

հեղուկի տակ:

Խնդություն — ուրախություն:

Անփութ — անուշադիր, անհոգ:

Նորաստեղծություն

Կաշվի գործարանի արտադրական

համաձայնագրի

1929 թ. հուլիսի 27-ին

Լսիչին	Վերադարձին
Նորաստեղծ. համա- ձայնագրի նախագահ ընկ. միջնաշրջանի պ. կապույտ կաշվագործա- րանում նկարված թի- րությունների մասին:	1. Նմանաշրջանի ընկեր- ության նկարագրություն ամսիկ. 2. Նմանաշրջանի պ. ուսուց. թված վնասը նի վնաս պարտադե- ղի ունեցիկ.

Նախագահ միջնաշրջան

խորհրդարան միջնաշրջան

18. Մարտիար Զաքարյ

Այն որ ել ուշ տուն դարձավ սլաքավար Զաքարյ:

Փոքրիկ Լենան վաղուց արդեն մուշ-մուշ ընել եր:

Պիոներ Կարլենը շուռումուռ եր գալիս անկողնում.
չերևում եր՝ խոր ընած չե:

Մարթան նայեց մարդուն և... մի սև ամպ անցավ դեմ-
քով. — Զաքարն ելի հարբած եր:

— Ինչո՞ւ յես ուշացել: Զե՛ր դու այսօր ժամի 1-ին հեր-
թապահ ես. իսկ դու վոտքի վրա կանգնել չես կարող: Մի
ժամից հետո ինչպե՞ս պիտի գործի գնաս:

— Զենդ կարի. քո ի՞նչ բանն ե իմ գործերին խառնը-
վել: Ի՞նչ ե, կարծում ես՝ հարբած եմ: Զե՛ր Միքայիլ շիշ
եմ միայն խմել, քեֆ արել: Լավ եմ ավել, դուշմանի աչքն
եմ հանել: Հիմա յել կերթամ գործիս:

— Դու եգ դրությամբ տեղ չես գնա, — խիստ տոնով
ասաց Կարլենը և դուրս թռավ անկողնից: Նա սուտ ըուն
եր դրել և լսում եր տեղի ունեցող խոսակցությունը:

— Լակոտ, դո՞ւ ինչ ես, վոր վրես խոսում ես, — գոռաց
Զաքարը և Կարլենի վրա հարձակվեց, վոր ծեծի: Կարլենը
ճարակությամբ դուրս պրճավ տնից և դուռը դրսից
փակեց:

— Հայրիկ, դու ես գիշեր ել տնից դուրս չես գա:
Մայրիկ, մի վախենա, յես կայարան եմ գնում: Գնում եմ
իմաց տամ, բոլորին իմաց տամ: Առավոտյան կգամ, դու-
ռը բաց կանեմ և կազատեմ յերկուսիդ: Հիմա գնում եմ
կայարան՝ հայրիկիս «ազատելու», — ասաց Կարլենը պա-
տուհանի վանդակներից և կորավ մթության մեջ:

Առավոտյան Զաքարը չեր հիշում՝ ինչ ե պատահել յե-
րեկ: Յերբ կայարան գնաց ամենքը խոսում եյին... Զա-
քարն ամոթահար՝ չեր կարողանում մարդու յերես նայել:
Այս դեպքից հետո՝ Զաքարին ել խմելիս չեն տեսել:

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ կլիներ, յեթե Զաքարը հարբած գործի գնար
(պատմիր):

— Ուրիշ ի՞նչ փաստներ ունի հարբեցողությունը:

— Ի՞նչ մտքով ես ասված՝ «հիմա գնում եմ կայսրան հայրիկիս ազատելու»:

Բ Ա Ռ Ե Ր

Տոն—խոսելու լեզանակ:
Բնորոշ—շատ պատահող և
կարևոր:
Ամոթահար—ամաչելով:
Առանցք—սոնի, կենտրոն, վորի
շուրջը պտտվում է միացածը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրիբ մի փոքրիկ շարագրություն (մոտ 10 տող) «Հարբած սլաքավարը» վերնագրով: Այդտեղ գրիբ, թե ի՞նչ կլինեիր (քեզանից սարքիբ մի բնորոշ դեպք), լեթե Զաքարը հարբած գնար դործի:

Գրելուց առաջ պետք է՝

1. Պարզել, թե ի՞նչն է լինելու շարագրության առանցքը (գլխավոր նյութը) և համապատասխան վերնագիր դնել:
2. Գլխավոր նյութի մասին ասելիքները դասավորել:
3. Կարճ խոսքեր կազմել մտքում, հետո գրել: Ամբողջական խոսքերից հետո դնել վերջակետ:
4. Բառերի զրուկյունն առաջուց ստուգել, ճիշտն իմանալ (գրքից, բառարանից, ուսուցչից), անպես գրել:

19. Նոր բանվորը

Մխոն գիմում տվեց և ընդունվեց պրոֆ միության մեջ: Հազիվ տաս որ անց, նա անձամբ գգաց, թե ի՞նչ է պրոֆմիություն և բանվորական փոխադարձ ոգնություն:

Մի որ, յերբ դողալով ներս եր մտնում իր բաժանմունքը, բանվոր Ռհանը հարցրեց.

- Այ տղա, վերարկու չունե՞ս:
- Չե՛: Փող չունեմ, վոր առնեմ:
- Արի հետս,—ասաց Ռհանը: Նա Մխոյին տարավ տեղիումի բարտուղարի մոտ:
- Քարտուղարին տեսնելուն պես Ռհանն սկսեց.
- Դուք մարդ եք փետացնում: Միությանը տոկոս ենք տալիս, վոր մեր ընկերը ցրտից վնասում:
- Ի՞նչ է յեղել...—չփութվեց բարտուղարը:
- Մարդին ինչո՞ւ փող չեք տալի, վոր վերարկու առնի:

— Մխո, դու ինձնից փող ուզել ե՞ս.

— Չե՛...—ասաց Մխոն.

— Բա ել ի՞նչ ես հավարը բցել,—դարձավ բարտուղարը Ռհանին:

— Ինչքան ես ուզում, Մխո:

— Քառասուն մանեթ,—մեջ խառնվեց Ռհանը:

— Դու ի՞նչ ես պոչը կտտրած գդալի նման մեջ ընկնում,—կատակով ասաց բարտուղարը Ռհանին:—Ինչքան ես ուզում, Մխո:

— Հիսուն մանեթ,—դարձյալ մեջ ընկավ Ռհանը:

Քարտուղարն ակամայից ծիծաղեց: Դարակից 40 ուրլի հանեց և տվեց Մխոյին:

— Հերի՞ք ե՛:

— Հերի՞ք ե, շնորհակալ եմ:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչի՞ համար ես արհմիությունը:
2. Ուրիշ ի՞նչ միություններ ու հասարակական կազմակերպություններ կան ձեզ մոտ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Արտագրիբ ա՛յն խոսքերը, վորոնց մեջ հարցական բառեր կան:
2. Դիտիր, թե վճռեղ ե տողի սկզբին գիծ դրված. ինչո՞ւ:

Չիբուսանի կաշիգործարանի գործարկուին
նույն գործարանի բանվոր Ա. Վաչյանից
Պիստոն

Խնդրում իմ ինչ ընդունի՛ք կաշիգործ
նիքի արտախոսքյան շարքիբը:
Միտքյան կանոնադրոսքյան ինչ
ծանոթ ի:

Նիքկաշյապնում իմ լրայրած եւրպա
թիբը:
Ա. Վաչյան
1929 թ. 20/Վ Չիբուսան.

Դիմում գրելու համար պետք է իմանալ՝

1. Ի՞նչ բանի համար ես դիմելու. և այդ պարզ պետք է ասված լինի դիմումի մեջ (դիմումի բովանդակությունը):

2. Ո՛ւմ ես դիմելու (վարիչին, նախագահին, վարչությանը, խորհրդին և այլն): Այն պաշտոնատար անձը կամ հիմնարկը կարող է և իրավունք ունի՝ քո հարցը վճռել, նրան է վերաբերում քո խնդրի լուծումը: Այդ անձի կամ հիմնարկության լրիվ և ճիշտ հասցեն—անունը պիտի գրել դիմումի վերևը:

3. Ի՞նչ փաստաթղթեր ու այլ գրություններ ե պահանջվում, վոր պետք է դիմումի հետ ներկայացնել: Դիմումի հետ ներկայացված փաստաթղթերի անուններն ու համարները պիտի հիշատակել դիմումի մեջ:

20. Անիվի յերգը

Շոգիդ ու շունչս
իրար են ձուլվում,—
անիվ իմ, դարձիր:

Դեռ նոր կոշտացած
իմ բազուկները
քեզ հետ են կապված,—
անիվ իմ, դարձիր:

Կարծես թե կյանքում
յերկուսս եսպես
մեկտեղ ենք ծնվել,—
անիվ իմ, դարձիր:

Անսանձ ու անզուսպ
սեր կա մեր սրտում,
իրար ենք սիրում,—
անիվ իմ, դարձիր:

Կյանքի փոթորկում
իրար մենք գտանք
ու չենք բաժանվի,—
անիվ իմ, դարձիր:

Շոգիդ ու շունչս
իրար են ձուլվում,—
անիվ իմ, դարձիր:

ՀԱՐՑԵՐ

— Այս յերգը նոր բանվորի բերանից է, թե՛ հին. վոր խոսքերից է յերևում:

— Ի՞նչ տրամադրություն է իշխում այս յերգի մեջ:

Բ Ա Ռ Ե Ր

Ձուլվել—հալվելով միմյանի:
Բազուկ—թեկ, ձեռք:

Անսանձ—վոր սանձել չի կարելի:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ցածը բերած «սիրել» բառի որինակով ինքդ կազմիր միքանի ուրիշ բառերի (որինակ՝ գրել, աշխատել, կարգալ և այլն) փոփոխված ձևերը և գրիր տետրակիդ մեջ: Ուշք դարձրու, թե վորտեղ «լ» է դրվում, վորտեղ՝ վոչ:

լես սիրում եմ	լես սիրելու լես
դու » ես	դու » լես
նա » ե	նա » լե
մենք » ենք	մենք » լենք
դուք » եք	դուք » լեք
նրանք » են	նրանք » լեն

Յերբ «եմ, ես, ե, ենք, եք, են»-ի հետ միասին կարգացվող բառը ձայնավորով է վերջանում, դրանք արտասանվում և գրվում են յ-ով:

Ձայնավոր են՝

ա, ե, ու, ի, ը, ո:

Բաղաձայն են մյուս բոլոր հնչյունները՝

բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն,
շ, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, ը, ց, փ, ք, ֆ:

21. Նոր բանվորը

Մխոյի աշխատանքը փոխեցին: Այժմ նա պիտի մաքրեր մորթիների տակ մնացած ճարպային մասերը: Աշխատանքը բարդ էր. մի սխալ շարժում—և ահա՝ մորթին փչացավ: Մխոն հպարտ էր, վոր իրեն այդ աշխատանքը վստահում էին:

Ութերորդ ամսից սկսած՝ ոտնիկը բարձրացավ 47 ուղեղու: Մխոն ուրախանում էր, վոր այստեղ վորեւեւ անհատի աշխատանքը գնահատում էին: Ուրախանում էր, վոր ավելի

պատասխանատու աշխատանք ե կատարում ե զրա համար
եւ ավելի յե ստանում:

Այդ դեպքից յերկու ամիս անց՝ նա սենյակ ստացավ:
Սենյակը գտնվում եր նոր շենքի յերկրորդ հարկում:
Ունեւ լուսամուտ՝ բաց դաշտի վրա:

Այստեղից յերկու եյին նոր շենքերի կառուցումները:
Հեռվում բարձրանում եյին մի ուրիշ գործարանի
բանվորական տները...

Փայտահատի յերգը

Ինձ հաց տվող աշխատանք,
սիրելի յես, թանգ ես, թանգ:
Յես քեզնով եմ միշտ հպարտ,
հեռնւ ինձնից ցավ ու դարդ:

Սև որերը գնացին,
ինչքան սուր ես, իմ կացին:
բարձրանում ես վեր չափով
ու իջնում ես ցած թափով:

Սուր կացնիցս եւ ավելի
սուր սղոցս ե սիրելի
հաստ գերանն ե սղոցում
ինձ հետ անուշ զրուցում:
Խզ՝զ, վզ՝զ, խզ՝զ, ոգնում եմ քեզ,
խզ՝զ, վզ՝զ, խզ՝զ, ընկերդ եմ յես:

Կացին, սղոց, աշխատանք,
սիրելի յեք, թանգ եք, թանգ:

ԲԱՌԵՐ

Ճարպ—ճրագու:
Բարդ—դժվար, միջանի մա-
սերից կազմված:

Գնահատել—արժեքը հասկանալ:
Փայտահատ—փայտ կտրող:

ՀԱՐՑՆԵՐ

— Ի՞նչպես եյին բանվորի բնակարանային պայմանները հեղա-
փոխութենից առաջ ե հետո:

— Ի՞նչ նոր շենքեր են կառուցվել ձեզ մոտ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Յես մաքրում եյի» խոսքի որինակով կազմիր միքանի ուրի-
շը ե արտագրիր տետրակումդ: Ուշադրութիւն դարձրո՛ւ, թե վոր-
տեղ ե «յ» գրվում:

յես մաքրում եյի	մենք մաքրում եյինք
դու մաքրում եյիր	դուք մաքրում եյիք
նա մաքրում եր	նրանք մաքրում եյին:

22. Բամբակագորի գործարանը

Անցանք բակով ե մտանք գործարանը:

Դա մի յերկար սրահ եր: Իրար կողքի շարված եյին
մեքենաները:

— Սրանք ջին մեքենաներն են, ասաց մեզ ուղեկցող
բանվորը: Այս մեքենան բամբակը դուռում ե: Փափուկ բամ-
բակը ջոկ ե տեղավորվում, հունդը՝ ջոկ:

Բանվորը բացեց մեքենայի խուփը: Ներս նայեցինք:
Բամբակի սպիտակ քուլաները դարսվում եյին իրար վրա,
անցնում խողովակով մի այլ բաժանմունք: Իսկ հունդը մի
այլ խողովակով թափվում եր ներքևի հարկը:

Գնացինք մամլելու բաժինը: Բամբակը հոսելով դարս-
վում եր մի յերկաթե արկղի մեջ: Ապա մի ծանր մամուլ
իջնում եր, սեղմում բամբակը, կապում ու մի կողմ
նետում:

Կապված հակերը դուրս եյին բերում ե դարսում
տախտակամածի վրա:

Յերկաթուղին հենց կողքով եր անցնում:

— Այստեղից հակերը դարսում ենք վազոններում ե
ուղարկում Լենինական, Մոսկվա,—ասաց մեր ուղեկիցը:
Իսկ հունդի մի մասը տալիս ենք գյուղացիներին իբրեւ
սերմացու, մյուս մասն եւ հանձնում «Զեթ-ոճառ» գործա-
րանին:

ԲԱՌԵՐ

Բամբակագորիչ—բամբակ դուղ,	Մամուլ—ճզմող մեքենա:
մաքրող:	Սրկղ—սնդուկ:
Սրահ—դահլիճ, մեծ սենյակ:	Հակ—մեծ կապոց, տուկ:
Ուղեկցող—միասին գնացող ե	Տախտակամած—տախտակե հա-
ճանապարհ ցույց տվող:	տակ ունեցող տարածու-
Մամլել—ճզմել, սեղմել:	թիւն:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Բանավոր նկարագրիր ձեր գործարանը կամ տեսածդ մի
ուրիշ գործարան:

2. Տետրումդ արտագրիր ե ավելացրո՛ւ՝

«յե»-ով սկսվող բառեր, ինչպես՝ յերկար, յերկաթ...

«յու» ունեցող բառեր. ինչպես՝ յուրաքանչյուր, հյուր, մեծու-
թյուն....

«յա» ունեցող բառեր. ինչպես՝ սենյակ, Տոնյան....

23. Չուգունի յեւ յերկարի գործարանում

I

Ամենից առաջ տեսանք հալոցները:
Դրանք ահագին բաներ եյին, կարծես գետնից բուսած:
Յերբեմն հնոցների կոկորդիներից դուրս եյին թռչում
կրակի խուրձեր:

Սանդուղքով ցած իջանք: Մտանք հալոցի առաջ գտնու-
վող տեղը, ուր յերկաթուղով հանք են բերում:

Հատակի վրա մի անցք կար: Նայեցինք այդ անցքով և
տեսանք մի փթխարի յերկաթե տագար:

Անցքին մոտեցավ հանքով լիքը մի փոքրիկ վագոն: Մի
րոպե—և վագոնը շուռ յեկավ ու հանքը թափվեց տագարի
մեջ: Գետնի տակի միջանցքով տագարը յետ քաշվեց: Նրա
տեղը յերեսաց մի ուրիշը: Այդ եւ վոր լցվեց, մոտեցավ յեր-
րորդը, չորրորդը, հինգերորդը... մի ամբողջ գնացք:

II

Հանքը հալվում էր: Հալված չուգունը կրակե սպիտակ
գետակով հոսում էր:

Կրակե գետը վերջանալու տեղը ուելներ էր ձգած, և
տագար էր դրված: Հալված մետաղն այդ տագարի մեջ էր
հոսում: Ուրիշ տագարներ բերող մի փոքրիկ շոգեշարժ մո-
տեցավ: Բանվորները կարթերի ճարպիկ շարժումով առա-
ջին տագարը շուռ տվին յերկրորդ տագարի մեջ: Յերբ
տագարները լցվեցին, շոգեշարժը ճանապարհ ընկավ:

— Ինչպե՞ս էր այս չուգունից յերկաթ ստանում,—հարց-
րինք մենք:

— Չուգունի մեջ շատ ածխածին կա,—ասաց մի բան-
վոր:—Չուգունն անց են կացնում ողի հոսանքի միջով: Ողը
դուրս է հանում ածխածինը: Հետո մաքրված չուգունը վո-
րոշ ժամանակ քցում են յերկու հազար աստիճան տաքու-
թյան մեջ: Այդտեղ չուգունը բոլորովին մաքրվում է և
ստացվում է յերկաթ:

— Իսկ ինչպես է յերկաթը պողպատ դառնում:

— Յերկաթը վորոշ աստիճանի շիկացնում ենք,—ասաց
բանվորը,—հետո միանգամից իջեցնում սառ ջրի մեջ. և
յերկաթը դառնում է պողպատ:

ԲԱՌԵՐ

Կոկորդ—բողազ:

Վիթխարի—շատ մեծ:

Միջանցք—կորիդոր:

Գետակ—փոքրիկ գետ:

Շոգեշարժ—պարավոզ:

Կարթ—չանգալ, կեռ յերկաթ:

Ածխածին—գազ է:

Շիկացնել—թեժացնել, կարմրացնել:

ՀԱՐՑՆԵՐ

Ինչի մասին է խոսում I հատվածում: Ի՞նչ վերնագիր
կդնես I հատվածին:

Գլխավորապես ինչի մասին է խոսում II հատվածում: Ի՞նչ
վերնագիր կդնես II հատվածին:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին հատվածից արտագրիր այն խոսքերը, վորոնց մեջ
կան յերկձայն ունեցող բառեր:

1. Յերկձայն են կոչվում՝ այ, ույ, ոյ, եյ, յա, յու, յո,
յե, յի, յը:

2. Մի վերջակետից մինչև մյուս վերջակետը յեղած բա-
ռերը կազմում են մի խոսք:

24. «Չեթ-ոճառ» գործարանում

«Չեթ-ոճառ»-ում բամբակի հունդից ձեթ են հանում:
Մաքուր ձեթը գործածվում է ուտելու համար, իսկ կեղ-
տոտ ձեթից ոճառ են պատրաստում:

Ամենից դժվար աշխատանքը ձեթի բաժանմունքումն
էր: Այստեղ հունդն աղում, բովում եյին: Բոված ալյուրը
դնում եյին քաթանի կտորների մեջ ու դարսում մի մե-

քենայի մեջ: Մեքենան սղմում եր ալյուրը, և ձեթը հոսում եր ամանների մեջ, այստեղից ել հավաքվում մի մեծ ավազանի մեջ:

Քաթանի մեջ մնացած կարծր ալյուրը կոչվում ե քուսպ:

Անցանք ոճառի բաժինը: Հսկայական ամանների մեջ ոճառ ելին յեփում: Ոճառի հեղուկը լցնում ելին կաղապարների մեջ ու սառեցնում: Ապա հանում ու դարսում՝ չորացնելու համար:

Բոլոր բանվոր-բանվորուհիները մասնագիտական հագուստ ունեյին:

Նրանք ամեն ուր բաղնիք են գնում:

Գործարանից դուրս յեկանք: Դիտեցինք բանվորների բնակարանները, ճաշարանը, ակումբը, բժշկի սենյակը, բանկոտը, բաղնիքը:

Բնակարանները մաքուր ելին ու լուսավոր:

ԲԱՌԵՐ

Ոճառ—սապոն:

Դիտել—ուշադրությամբ, քննելով

Կարծր—պինդ:

Նայել:

Զխայրազիր

Զխայրազիր ընկ. Վարգար Յիշուս
յարյանին արամայու 1930թվի փետր.
վար ամսի ութիկը, ընդամենը յերեսուն
և ինն օրվա 48 կույ. (39 ու 48 կ.)

Գորգի Պամիրյան

24/1 1930թ.

Յիշուս

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեղադրված մեջ արտադրի միջանի՝

«ալ» ունեցող բառեր. ինչպես՝ սալ, լեղբալը....

«ուլ» ունեցող բառեր. ինչպես՝ լույս, համբուլը....



25. Դարբինը

Ձեռներիս զուլգ թաթման ունեմ,
կրծքիս կապած կաշվե գոգնոց.
մուրճը ձեռքիս հավատարիմ
և ընկերս կարմիր հնոց:

Բով եմ դրել ջեռ քուրացում
սև մետաղե մի մեծ զանգված.
բայց համառը վոչ արթնանում,
վոչ հուզում ե կյանքի մի կայծ:

Բայց տես՝ ահա հուրհրատող
արևի պես նա արթնացավ.
և խավարի մեջ խարխափող
արհեստանոցը լուսացավ:

Յեվ կայծերի տարափի տակ
բերին նրան դրին սալին:
Դեհ մուրճարներ, լեկեք ձև տանք
ուշքի լեկած այս համառին:

ԲԱՌԵՐ

Ձեռ—տաք, բարկ:

Չանգված—գունդ:

Համառ—անհնազանդ, հաստակող:

Կյանքի կայծ հուզել—կյանքի

նշան ցույց տալ:

Հուզել—շարժել, խառնել, ալեկոծել:

Հուրհրատող—փայլփլող:

Խարխափող—մթության մեջ
(վախվածություն) ման լեկող:

Մուրճար—մուրճ խփող
դարբին:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Յես զարկում ելի»-ի որինակով կազմիր ուրիշ բառեր և գրիր տեսարակումդ: Ուշք դարձրո՛ւ, թե վորտեղ ե «յ» գրվում:

յես զարկում ելի	յես զարկելու ելի
դու զարկում ելիր	դու զարկելու ելիր
նա զարկում եր	նա զարկելու յեր
մենք զարկում ելինք	մենք զարկելու ելինք
դուք զարկում ելիք	դուք զարկելու ելիք
նրանք զարկում ելին	նրանք զարկելու ելին

Ուշադրութիւն դարձրու ընդգծածի գրութեան ձևի (նա զարկում եր, բայց՝ նա զարկելու յեր) տարբերութեան:

26. Դա պղինձն ե...

Ծառերն են: Ծառերի տակ՝ հողն ե: Հողի տակ՝ մարդիկ: Հողի հետ խառը մի մետաղ կա, վոր արևի պես դեղին ե: ... Դա պղինձն ե:

Իջել են բանվորները պղնձի մոտ ու քանդում են:

Մուրճերը յերգում են նրանց ձեռքերում:

Ահա մեկը պղնձախառն առաստաղն ե քանդում:

— Յես ահա քանդում եմ պղինձը, — յերգում ե մուրճը, — և պղինձն ուրախ ե դրա համար: Յես քանդում եմ պղինձը և կույտեր անում: Կգա ստորերկրյա վազոնը և կտանի: Իսկ հեռու քաղաքներից մեկում — մի նոր շենք կբարձրանա:

... Դա պղինձն ե:

— Պղինձը, — ասում ե մուրճը, — կգնա գործարան: Նա այնտեղ կմշակվի, կգտվի: Իսկ յես նոր կույտեր կուղարկեմ: Յեվ հեռու մի գյուղում գյուղացին պանիր կուռնենա իր հացի հետ:

... Դա պղինձն ե:

Մարդն ե: Մարդի վերևը հողն ե: Հողի վրա՝ ծառերը:

Ծառերի տեղ վաղը գործարաններ կբարձրանան: Կանաչի տեղ տներ կաճեն: Անտառը քաղաք կդառնա:

... Դա յեւ պղինձն ե:

ՀԱՐՑԵՐ

«Հեռու քաղաքներից մեկում մի նոր շենք կբարձրանա».

«Գյուղացին պանիր կուռնենա իր հացի հետ».

«Անտառը քաղաք կդառնա» — ասում ե հեղինակը: Ի՞նչ կապ ունի այդ բոլորը պղնձի հետ:

— Ուրիշ ի՞նչ ոգուտ ունի պղնձի արդյունահանութիւնը:

— Ուրիշ ի՞նչ հանքային արդյունաբերութիւն գիտես:

ԲԱՌԵՐ

Առաստաղ — ոճորք, առիք:

Կույտ — դեղ:

Ստորերկրյա — գետնի տակի:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրի հետևյալ խոսքը և լրացրո՛ւ (ավելացրո՛ւ քու իմացած մյուս մետաղների անունները):

Մետաղ են՝ պղինձը, յերկաթը...

27. «Յեվրոպացի»

Ֆրանսիայից մի վարպետ եր յեկել Ալլահվերդի:

Պղնձաձուլարանում եր աշխատում:

Անունը դրել ելինք «Յեվրոպացի»:

— Յեվրոպացի, դու լավ վարպետ ես: Եդ վճրտեղ ես աշխատել:

— Ել վճրտեղ չեմ աշխատել: Շատ եմ աշխատել: Քսանու՝ մեկ տարի:

— Պատմիր քու տեսածներից, քու կյանքից, Յեվրոպացի:

— Ի՞նչ պատմեմ: Դե՛, Քսան տարի աշխատեցի: Քսաներորդ տարին նույնքան վատ եր, վորքան առաջին տարին: Կինս լուցկու գործարանում եր աշխատում: Հետո՝ կոմունիստների պրոպագանդը: Գործադուլ: Բանաւ: Աքսոր: Կնոջս ասացի. — «Գնում եմ բանվորների իսկական հայրենիքը: Քեդ փող կուղարկեմ: Հետո դու յեւ կգաս»:

— Չե՛ս ձանձրանում այստեղ, Յեվրոպացի:

— Ինչո՞ւ ձանձրանամ: Սա իմ հայրենիքն ե: Մերն ե գործարանը: Մենք կընդարձակենք մեր գործը: Յեվ դա հոգուտ մեզ կլինի: Այնտեղ մենք իտալական գործադուլ ելինք անում: Գիտե՛ս՝ ի՞նչ ե դա: — Ասենք՝ դու որական մի պղնձաթերթ ես պատրաստում: Լսում ես — մեկ: Ծիծաղում եք: Բայց գործարանատերը չեւ ծիծաղի:

— Յեվրոպացի, կարծում ես՝ այստեղ ամեն բան լավ ե:

— Իհարկե՛ վո՛չ: Պակաս բաներ դեռ շատ կան: Որինակ՝ հանքափոր Սերգույի ընտանիքը 6 հոգուց ե բաղկացած, բայց միայն մի սենյակ ունի: Այդ վոչինչ՝ Բոլորս ել գիտենք, Սերգոն ել գիտե, վաղը մի սենյակը կդառնա յերկու, հետո՝ յերեք: Իսկ այնտեղ՝ մեկ սենյակը կմնա մեկ: Այս ե տարբերութիւնը:

ՀԱՐՑԵՐ

- Ինչո՞ւ չե՞ր «Յեվրոպացի» թողել Յեվրոպան:
- Ինչո՞ւ չե՞ նա այստեղ «Իր հայրենիքը» համարում:
- Ինչո՞ւ չե՞ր նա այստեղ առում գործարանը, իսկ այստեղ սիրում ե՞:
- Ինչո՞ւ նա դժգոհ չե՞ր այստեղի կյանքից:

ԲԱՌԵՐ

պղնձաձուլարան — պղինձ իտալական գործադուլ — բանվոր-
ձուլելու (հալելու) գործա- ներն աշխատում են, բայց
րան: այնպես, վոր գործարանա-
տերը ֆլապի:

Կրայրանի չրգգործկոթի
հարագավոր գյուղի բնակիչ
խաղ. Սիրսի Բալայանի
շիրում

Խնդրում եմ ինչ անշնական փկայա-
կան փայլ Սիլվարիորիի համաժողով աշ-
խարհային գնալու հարևար:

Սի. Բալայան

1928 թ. դեկտեմբ. 15

28. Տեքստիլ ֆաբրիկում

Տեքստիլ ֆաբրիկում մինչև իրիկուն
բանում ենք մեկտեղ լես ու նա.
քրտնում ենք մեկտեղ, շարժվում որնիրուն,
վորպես նոր, աշխուժ մեքենա:

Անցնում ե որը խինդ ու ծիծաղով,
որը արևոտ ու ժպտուն.
մեքենայի մոտ ուղտի, ծիծաղկոտ
նրա աչքերն են վառ ժպտում:

Սիրում եմ նրան վորպես սրտակից,
այդպես ե սիրում նա չե՞ր ինձ.

մենք իրար ընկեր, մենք իրար մոտիկ—
աշխատանքի բանակից:

Տեքստիլ ֆաբրիկում մինչև իրիկուն
բանում ենք մեկտեղ լես ու նա.
քրտնում ենք մեկտեղ, շարժվում որնիրուն—
վորպես նոր, աշխուժ մեքենա:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ տրամադրություն ե իշխում այս վոտանավորի մեջ (ուրախ,
թե տխուր, վողեղոված, թե ընկճված):
- Հեղափոխությունից առաջ ե գրված այս վոտանավորը, թե՞ հետո:
Ինչո՞ւ:
- «Խինդ ու ծիծաղով» կանցներ բանվորի որը հեղափոխությունից
առաջ: Ինչո՞ւ:

ԲԱՌԵՐ

Տեքստիլ ֆաբրիկ — մանածագործա- Խինդ—ուրախություն:
րան, անկվածաբան: Ընկճված — հուսահատությունից
Որնիրուն—ամբողջ որը: Թուլացած:
Աշխուժ—կայտառ, զվարթ, ժիր:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև հիմա անցած հողվածներում քեզ պատահած դժվար հասկանա-
լի բառերից կազմվել բառարան:

ԲԱՌԱՐԱՆ ԿԱԶՄԵԼԻՍ ՊԵՏՔ Ե՝

1. Բառերը դասավորել այբբենական կարգով (այբբենական
կարգը տես էջ՝ 43):
2. Նախ գրել անծանոթ բառերը, հետո նրանց դիմացը՝ բա-
ցատրությունները (Լինչպես գրքումն ե արված):

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Մեր բանվորներն առնասարակ քիչ են գրում արտադրության բարձրացման մասին: Բանվորները վաղ միջին պետք է ցույց տա մեր բացերը, այլ պետք է կոնկրետ առաջարկներ ել անի: Այլապես հնարավոր չէ մեր բացերը վերացնել: Կան թղթակիցներ, վոր քաղվում են, դիցուք, վարպետի, չենթամարտի կամ գիրենկորի մասին գրելուց: Դա փոքրագույնում է: Տվեք ճշմարտությունը: Իսկ հալածողներին պրոլետարական դատաստան իրենց արժանի տեղը ցույց կտա:

Ինքնաքննադատության լուրջագիտակ խարաղանցքը ծուլությունը, քաղքուկը, բուրդողորմությունը: Մորակեցնք կենցաղային թերությունները: Ինքնաքննադատությունը կառողջացնենք մեր կյանքն ու աշխատանքը: «Մանածագործը» ձեր առողջացող խոսքին է սպասում, ընկեր բանվորներ:

ԲԱՆԹՂԹԱԿԻՑ

1. Դու պիտի կապես թերթը բանվորական մասսաների հետ: Իսկ այդ կարող ես անել, չե՞րք ինքդ սերտ կապ ես հաստատել տղ մասսաների հետ:
2. Գրի՛ր գործարանի և բանվորների կյանքի մասին, նրանց կարիքների, կուլտաշխատանքների, արտադրության վիճակի մասին: Բարեխղճությամբ դիտիր և ուսումնասիրիր շրջապատը: Լսիր բանվորների տրտուռներին:
3. Գրելուց առաջ տես՝ չե՞ կարելի արդյոք նկատածդ բացը տեղնուտեղը վերացնել: Յեթե այդ չի կարելի, հետո դիմիր թերթին: 4. Թերթը մի որ և ապրում: Դիտողություններից շուտ դրի՛ր, վոր չհնանան: 5. Մերկացումներից պետք է փաստերով հիմնավորված լինեն: Զրպարտության համար դու պատասխանատու չես: 6. Թղթակցությունը պատճենը մոտոգ պահիր: Տպագրելուց հետո համեմատիր և տես՝ ի՞նչ փոփոխումներ են արվել:

ԻՆՔՆԱՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՏԱԿ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎՈՐԱՅԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Մեզ մոտ վորակալ բանվորներ պատրաստելու գործին բավականաչափ ուշադիր չեն:

Նոր աշակերտ է գործարան մտնում: Նա դեռ ծանոթ չէ մեքենաներին ու նրանց կազմությանը:

Աշակերտը խնդրում է մեքենավորին:

— Ընկեր, բացատրես ինձ այս մեքենայի կազմությունը:

— Ինքս շատ գիտեմ, վոր բացատրեմ, — պատասխանում է մեքենավորը:

Այս բացը վերացնելու համար՝ անհրաժեշտ է պարապմունքներ կազմակերպել: Այդպիսի պարապմունքներ խկապես սկզբում չեղան, բայց կհասնանապարհին մնացին: Ինչո՞ւ:

Բանվոր. ԹՈՐՄԱՍ

ԱՆՓՈՒՅԹ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՐ

Տեքստիլում մեծ թվով ծծմալ բանվորուհիներ են աշխատում: Ըստ որևերի՝ նրանք 3½ ժամը մի անգամ իրավունք ունեն գնալ մոտեր չեքիսաներին ծիծտալու: Նրանք սովորաբար 10—15 րոպե շուտ են գնում: Վերադառնալիս ել անպատճառ 10—15 րոպե ուշանում են:

Մեջտեղը տուժում է արտադրությունը:

Միթե դժվար է այս անվույթ վերաբերմունքին վերջ տալ:

ԱՐՄԻԿ

ԱՄԱՋՆԵԼ ԿԱՎՈՐ ԱՄՈՒՐ

Մեր աղջիկներից փոմանք նախաձաշին սեղանատուն չեն գալիս: Նրատում են պատուհաններում կամ հենց գազգաճների վրա ու մի կերպ նախաձաշում: Ամաշում են աղաներից...

Դիտակից բանվորուհու համար այս ամաշին ամոթ է:

Բանվոր. ՄԱՐՏԻԿ

Գ Ր Ա Կ Ա Ն
ՏԵԲԱՏԻԼ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ

ՎԱՐԱՋԱՏ ԲՋՆՈՒՆԻ
Քաղաքի այն դաշտում ընդարձակ, ուր առաջ արշուն եր ու ավեր, ձրվել է հաղթական, համարձակ, մանածի գործարան անվիներ:

Յերազ չես, հեքյաթ չես մեղ համար, կյանքի պես իրական ես հիմա. աժգահա կանգնել ես հաղթ կամար, չչակներդ սուլում են ահա:

Ամենուր աշխատանքն է չեղում. բանվորներն ձեռքերով հաղթական Նոր կյանքի հիմունքներն են կռում ու նայում դեպի վառ ապագան:

Ծ Ի Ծ Ա Ղ

— Ընկեր տեսուչ, ինչո՞ւ միայն ամիսը մի անգամ ես գործարան մտնում:

— Շորերս կփոխալեն:

Դիզվեք, դիզվեք իրար վրա, մեր բաղնիքի դուր գործեր, ծրագիրներ հաստ ու բարակ, դիզվեք, կազմեք մեծ խուրճեր: Վարչությունը նամուս չունի, տված խոստումն ձեր մնաց: Գործարկում ել միջոց չունի, միշտ անում է սուղ ու լաց: Դիզվեք, դիզվեք իրար վրա, մեր բաղնիքի դուր գործեր, ծրագիրներ հաստ ու բարակ, դիզվեք, դարձեք մեծ խուրճեր:

ՎԱԼԻԿ

ՓՈՂՈՑՈՒՄ

— Սա մեր Մաթոն չէ:

— Հա, Մաթոն ե:

— Բա շրթունքներն ինչո՞ւ չեն այդպես կարմիր:

— Պամիդոր է կերել:

— Հը՞:

— Պոմադ է քսել:

— Կասես հիվանդ լինի. մեռելի գուլն ունի:

— Չե, այրուտել է:

— Ի՞նչ:

— Պուզրի չե քսել:

— Ել ի՞նչպես է ման դալի. կասես վոտքերին բան է պատահել:

— Դարազ և ընկել:

— Ինչպե՞ս թե:

— Նեղ կոշիկներից մաղոլ է ստացել:

— Բայց Մաթոն գործարանում համատ է չեղում:

— Գործարանում՝ ուրիշ բան է, փողոցում՝ ուրիշ: Փողոցի կանոններն ուրիշ են:

— Եղ բարձրակրունկ կոշիկներով ինչպե՞ս վեր չի ընկնում:

— Փողոցի կանոնով շարժվողը մի որ կընկնի. կընկնի ու փխ կընկնի...

ԲՆՆՈ

ՓՈՍՏ-ԱՐԿԻ

Մ. Պ.-ին. — Փաստեր չկան: Գրեցեք փաստերով:

Պ. Պ.-ին. — Ձեր հոդվածը չի տպվել: Խնդրե՛ք մեր արտադրության ու մեր կենցաղին չի վերաբերում:

ԲՆՆՈՅԻՆ. — Շարունակեցե՛ք ծաղրել մեր կենցաղական թիրուխյունները. Կտպենք:

Գասպարին. — Ձեր թղթակցությունն ուղարկված է ԲԳՏ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

ԲԱՆԾԻՐ

Բաց — պակասություն, թերություն:
Խոնկրեհ — շոշափելի, պարզ, վորու:
Պիցու՛ — ասենք, որինակ:
Փոփոխություն — փոխկառույցություն:
Խարազանիկ — մարտիկ, ծաղրել, հարվածել:
Մեկացում — պակասությունները բաց անել:
Անվույթ — անհոգ:
Հաղթական — հաղթողի պես, ուժեղ:
Անվիներ — անվախ:
Հաղթ — ուժեղ, մեծ, ամուր:
Ամենուր — ամեն տեղ:
Աժգահա — հսկա:
Կռել — ամուր շինել (մեծաղեց):
ԲԳՏ — Բանագրություններ թույլ:

ՀԱՐՑՆԵՐ

1. Պատի լրագիր ունե՞ք: Ի՞նչ հոդվածներ կան վերջին համարում:
2. Ի՞նչ խնդիրներով ե զբաղվում ձեր պատի լրագիրը:
3. Ի՞նչ բաժիններ ունի ձեր պատի լրագիրը:
4. Ինչո՞ւ ես մասնակցում ձեր պատի լրագրին:
5. Ի՞նչ ե ուղում ասել Բենոն՝ «Փողոցի կանոնով շարժվողը մի որ կընկնի» խորքերով:
6. Ի՞նչ բացեր ես նկատել ձեր կենցաղի և աշխատանքների մեջ:

30. Նավթաշխարհում

Նավթահանքում սկսվեց աշխատանքը: Գործարաններում կա-
տաղի արագութեամբ շարժվում էին մեքենաները, կարծես ուր վար
շտապելիս լինելին:

Վիշկանների միջին նստած նավթահան բանվորները՝ աչքները
հառած չերկաթե պարանին՝ նավթ էլին քաշում: Յուր քսող բան-
վորը բուրգի ծալքին նստած՝ մի կողմից լուրում եր անիվը, մյուս
կողմից՝ նայում հանքի վրա: Գանի-քանի մարդկանց կյանքն եր
կերվել այստեղ:

Վիշկանների միջից այս ու այն կողմից լսվում էին գործակա-
տաների և կառավարիչների հաջողանքները բանվորների հասցեյին:

Նավթահանքում հնչում էին զիլ ու քաղցր ձայնով գործի
կանչող սուրիչները: Գնացքներից իջնող բանվորներն ուրախ-ուրախ
ցրվեցին նավթահանքերը: Մի քանի բոկայից նավթահանքը կենդա-
նացավ: Իրար էլին խառնվել նավթահան մեքենաների շրխիցը,
գործարաններում չերկաթագործների մուրճերի ձայնը և քաղցր
չերգը լուրդ-բանվորի, վորը բարձրացած վիշկայի գլխին՝ հպարտ
նայում եր չորս կողմ տարածվող վիշկանների վրա: Նա չերգում եր
բոլորի սրտից:—

— Դու խորթ էլիր մեզ, այ նավթաշխարհ: Այժմ հարազատ
ես: Չկան նրանք, վորոնք միայն ստացվող արդյունքն էլին սիրում:
Հիմա քեզ շրջապատել ենք մենք—մազուլթավորներս, վորոնց ձեռ-
քով դու կառուցված ես...

ԲԱՌԵՐ

Վիշկա—նավթահորի վրա կառուցված շենք:

ՀԱՐՑՆԵՐ

- Վերտեղ ե գտնվում նավթաշխարհը:
- Ո՞վ ե ձեզնից չեղել Բագվում. նկարագրեցե՞ք:
- Վեր ժամանակաշրջանին ե վերաբերում հողվածի առաջին մասը.
վորին՝ չերկրորդը:
- Ինչո՞ւ չե ասում. — «Դու խորթ էլիր մեզ, այ նավթաշխարհ, իսկ
այժմ հարազատ ես»:

31. Բաշխարհի

Կասպից ծովան ծովի ափին
մեծ անտառ կա սև ու մթին:
Եղ անտառում
հոտ չեն բուրում
վառ ծաղիկներ
հազարագույն —
վոչ ել փոված գալարուն սեղ
քո վորքի տակ դու կտեսնես:
Ու ծառերն ել են անտառի
տերևներով չեն զարդարվի:
Եղ անտառում նավթահանքի
հոտն ե բուրում կապույտ նավթի,
և գալարուն կանաչի տեղ
մազուլթն ե սև փովել աջտեղ:
Իսկ ծառերը եղ անտառի —
վիշկաններն են՝ սև, վիթխարի:

ԲԱՌԵՐ

Բուրել—լավ հոտ տալ: Գալարուն—ճկուն, դալար:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Այս վոտանավորի բառերը վանկատիւր և վանկերը գծիկներով բա-
ժանած՝ արտադրել:

Այսպես.—

Բա-լա-խա-նի

Կաս-պից ծը-վան ծո-վի ա-փին

մեծ ան-տառ կա սև ու մթ-ին:

Վանկատելիս (վանկերի բաժանելիս) ը-երը, վոր հնչում,
բաց չեցինք գրում, պետք ե գրել. որինակ՝ ծը-վան, մթ-ին:

2. Վանկերի բաժանած արտադրելուց հետո ուղադրութեամբ դիտել,
թե ամեն մի վանկի մեջ քանի ձայնավոր կամ չերկձայն կա, և կտեսնես, վոր՝

Յուրաքանչյուր վանկի մեջ միայն մեկ ձայնավոր կամ մեկ
չերկձայն կարող ե լինել:

3. Դիտել, թե բաղաձայներն ինչպե՞ս են բաշխվում ըստ վանկերի և
կտեսնես, վոր՝

- ա) Մի բաղաձայնը (վոր ընկնում է յերկու ձայնավորների կամ յերկձայնների մեջ) անցնում է հաջորդ վանկին, որինակ՝ Թա-լա-նա-նի:
- բ) Յերկու բաղաձայններից մեկը մնում է, մյուսն անցնում, որինակ՝ Կաա-պից, աճ-ճառ:
- դ) Յերեք բաղաձայնից յերկուսը մնում է, մեկն անցնում, որինակ՝ դառթ-ճիկ, կառծ-րու-թյուն:

32. Բանգյուղորդակիցների հանրապետական խորհրդակցությունը

(Թղթակցութուն)

Բանգյուղթղթակիցները հանրապետական վերջին խորհրդակցութունն զբաղվեց հետևյալ խնդիրներով. —

1. արտագրականության բարձրացում,
2. սոցիալիստական մրցության աշխատանքների կազմակերպում,
3. պետապարտի գտում,
4. պալքար աշխդիսցիպլինայի համար,
5. ինքնաքննադատության թափի ուժեղացում,
6. պալքար թղթակիցների քողարկված հալածանքի դեմ,
7. թղթակիցների կազմակերպում և նրանց կուլտուրական դաստիարակում:

Խորհրդակցութունը ցույց տվեց, վոր թղթակիցները թե՛ վորակով և թե՛ քանակով բարձրացել են:

Քննության առնվեցին մեր նվաճումներն ու բացերը:

Մշակվեց առաջա անելիքների պլանը:

Մեր թղթակիցներն աշխատում են և պիտի աշխատեն կուսակցության քաղաքականութունը յուրացնել և կյանքում գործադրել: Դրանով նրանք կկարողանան սոցիալիստական շինարարությանը մասնակցել:

ԲԱՌՆԸ

- Բանգյուղթղթակից — բանվոր և դուր — Պալքար — կով:
- դացի թղթակից: Աշխդիսցիպլին — աշխատանքի դիսցիպլին, աշխատանքի մեջ կարգապահութուն:
- Թղթակից — թերթին մասնակցող, հոգ- ցիպլին, աշխատանքի մեջ կարգապահութուն:
- վաճներ գրող: Բողարկված — ծածուկ, թաքուն:
- Պետապարտ — պետական ապարատ. Դաստիարակել — կրթել:
- պետական ծառայողների կողմը:

Վորակ — (լավ) հատկություն:
Նվաճում — ձեռք բերած հաջողու-
թյուն:

Բաց — պակասութուն, թերութուն:
Պլան — ծրագիր:
Յուրացնել — լավ հասկանալ:

ԱՌԱՋԱՆԻՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրիւր այս չորս տողը

Դիրքսայանաւոր կամչոյմ ի «վաղվա համար».
Նիւրոյկանը կարկաչոյմ ի վաղվա համար
Քանի՜ հաւասար վաղիր Կիւսար «Եւրոպայի».
Պաւիր ահիլ ու ահում իս վաղվա համար:

Հիշիր արտագրության կանոնները (տես էջ 50)

33. Կհասներ յեվ կգերագանցներ

I

Բիբի-Հելլաթի 12-րդ նավթահանքումն ենք: Շտապում ենք ակումբը:

Ճանապարհին մեզ ընկերանում է Իսմայիլը՝ վաչելակազմ և յերիտասարդ մի բանվոր:

— Այժմ մեր տղերքն իրենց լավ են թափ տվել, — ասում է Իսմայիլը, — գործալքումները նվազել են: Հարբեցողութունն ել ե պակասել: Մեզ մոտ աշխատում են հայեր, թուրքեր, ռուսներ, լեզգիներ, հրեաներ: Մենք բոլորս ապրում ենք ընկերական կյանքով. կարծես մի համերաշխ ընտանիք լինենք: Հիմա աշխդիսցիպլինայի բարձրացման արշավն ենք սկսել և սոցիալիստական մրցության կոչն ենք ուղղել մյուս նավթահանքերին:

Հարցերի տարափ է, վոր թափում ենք Իսմայիլի գլխին: Նա ժպտալով պատմում է իրեն հարազատ նավթահանքի պատմութունը, նրա նվաճումները, Բիբի-Հելլաթի մասին: Վաղուց չէ, վոր Բիբի-Հելլաթում ծփում եր Կասպից ծովը: Իսկ այժմ ջուրը 200 մետր չեա է մղված: Ծովը համառորեն դիմադրում եր: Նա չեր ուզում ապատել հողը գերութունից: Նա հեղեղում եր աշխատանքները: Բանվորները դաժան կռիվ մղեցին կույր տարերքի դեմ: Կովեցին և հաղթեցին: Այժմ ծովից նվաճել ենք հարուստ նավթաշերտը և ոգտագործում ենք:

Մտանք ակումբը: Սրահը լցված էր բանվորներով:

«Վիշկա» թերթի ներկայացուցիչը զեկուցում է գործարկումների վերջնադրություն մասին: Ձեկուցումը տևում է կարճ՝ ընդամենը 10 րոպե:

Հավաքույթի կենտրոնը բանվորների աջն նամակն է, վոր ուղարկել են Ամերիկա՝ նստված զործին ծանոթանալու համար: Այդ նամակում բանվորները համեմատում են իրենցն ու ոտարինը, թե՛ ի՞նչն է լավ մեզ մոտ և ի՞նչը պիտի ուրիշից ընդորինակել:

— Կհասնենք և կգերազանցենք, — վերջացնում են նրանք իրենց նամակը:

— Այո, — կանչում են ամեն կողմից վոգևորված:

Յերը որակարգն սպառվեց, ցնծագին հնչեց ուսական գարմոշկան: Ապա սկսվեց լեզվինկան: Պարում են լուրջ ու կենտրոնացած: Դժվար է հավատալ, թե այդ մարդիկ հենց նոր են աշխատանքից յեկել:

Վոգևորություն ալիքն ինձ էլ է տանում: Միտս է գալիս բանվորների համառ կռիվը ծովի դեմ:

— Այո, կհասնենք: Կհասնենք և կգերազանցենք...

ԲԱՌԵՐ

Գերազանցել — անցնել, առաջ տալ:	Նվաճում — ձեռք բերած հաջողություն:
Վալելիակալ — սիրուն կազմված ունեցող:	Համառորեն — անհնազանդ կերպով:
Գործալքում — գործից փախչելը, գործը թողնելը:	Դաժան — խիստ:
Համերաշխ — հաշտ, սիրով:	Բնության տարերքն են՝ ջուրը, փոթորիկը և այլն:
Աշխատակալին — աշխատանքի կարգապահություն:	Ընդորինակել — նմանվել, որինսկին հետևել:
Արշավ — արշավանք, հարձակում (մի բան նվաճելու համար):	Ցնծագին — ուրախ:
	Սրահ — դահլիճ, մեծ սենյակ:

ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է բանվորների վերաբերմունքը դեպի արտագործությունը: Ինչպե՞ս է ձեզ մոտ:

— Ինչպե՞ս է պակասել գործալքությունը, հարեցողությունը: Ինչպե՞ս է ձեզ մոտ:

— Ինչպե՞ս են վերաբերվում բանվորներն իրար՝ ալատեղ և ձեզ մոտ:

— Ի՞նչ հարցերով ե զբաղվել ձեր գործարկումը:

— Ի՞նչ ե արված ձեզ մոտ սոցիալիստական մրցության համար:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Զուգ-ձուգ վերնագիր դիր առաջին և յերկրորդ հատվածներին:

34. Առաջ յեղ հիմա

Բանտում ելինք մենք որնիրուն
 ու սև հացից զուրկ մնում:
 շինում ելինք պալատ ու տուն, —
 ինքներս ապրում նկուղում:

Ազատությունն աշխատանքի
 բերեց Կարմիր Հովտեմբեր
 ու յերջանիկ մի նոր կյանքի
 կռից հիմքերն աներեր:

Հիմա հաճույք է աշխատանք, —
 չե՞ մեզ համար ենք հոգնում:
 ու պակասել է չարչարանք, —
 մեքենան է մեզ ոգնում:

Գործարանները նորանոր
 լենինյան վառ դրոշի տակ
 շահկների ձայնով հզոր
 յերգում են զիլ, համարձակ:

Տարեցտարի դառնում ամուր,
 աճում ենք մենք զարգանում
 և ուժերով միահամուռ
 դեպ սոցիալիզմ ենք գնում:

ՀԱՐՑԵՐ

— Վերջը շրջանին է վերաբերում վոտանավորի առաջին տունը, վերջը շրջանին՝ յերկրորդը, յերրորդը, չորրորդը և հինգերորդը:

— Ինչպե՞ս համար «հիմա հաճույք է աշխատանք», ու պակասել է չարչարանք: Ի՞նչպե՞ս եր հեղափոխությունից առաջ:

ԲԱՌԵՐ

Որնիրուն — ամբողջ որը:	Հզոր — զորեղ, ուժեղ:
Նկուղ — գետնահարկ, պաղվալ:	Չարգանալ — առաջ գնալ:
Կռից — շինեց — ամրացրեց (մետաղի պես):	Միահամուռ — միասին, ընդհանուր ուժերով:
Աներեր — անխախտ, ամուր, անսասան:	Վերածել — փոխել, դարձնել:
Շահկ — գուլգուլ, սուլիչ:	

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս վոտանավորն արձակի վերածիր և այդպես գրիր տետրումդ:

Վոտանավորն արձակի վերածելիս պետք է՝

1. Բառերը դասավորել ալնպես, ինչպես խոսելիս ենք անում:
2. Դժվար բառերի տեղ դնել գործածական բառեր:
3. Հեղինակի կողմից կրճատված տահրաթեշտ բառերն ավելացնել, կրկնվածները կրճատել:

Բացի այս 3 կետից ուրիշ վճի մի փոփոխություն չպիտի անել:

35. Սոցիալիստական մրցության խնդիրները

(Ըստ Համկամկուսի (Բ) կենտկոմի վորուսման)

Սոցիալիստական մրցությանը կիրառործվի հնգամյա պլանը։
Արհմիությունները պիտի դեկավարեն մրցությունների կազմակերպումը։

Մրցությունների նախաձեռնողը լայն մասնակցություն պիտի լինեն։
Մասնակցները դրանով սոցիալիստական գաղափարակազմություն ձևեր կբերեն։

Մրցության փորձը պետք է ոգտագործել նաև խորհրդային տնտեսությունների, կոլտնտեսությունների, կոոպերատիվների, խորհրդային հիմնարկների և այլ հաստատությունների մեջ։

Մրցության խնդիրներն են՝

1. Արդյունաբերական ֆինանսների հաստատումը և գործադրումը։
2. Ինքնարժեքի իշխում և աշխատանքի արտադրողականության բարձրացում։
3. Արտադրանքի վերակի բարձրացում։
4. Պայքար գործալքության և բրախի դեմ։
5. Վերադիր ծախքերի կրճատում։
6. Արտադրական որինակելի կարգադրություն։
7. Տեխնիկական կատարելագործումների լայն գործադրում։
8. Արտադրության ուսցիոնալացում։
9. Բանվորական գյուղատնտեսության ներդրումը։

ԲԱՌԵՐ

Խնդիր—անելիք, նպատակ։	Գործալքություն — առանց հարգելի պատճառի գործը թողնելը։
Դեկավարել—ուղղություն տալ։	Բրախ—անպետք ապրանք։
Նախաձեռնել—ամենից առաջ մի գործ սկսել։	Վերադիր ծախք—ավելորդ ծախք։
Դաստիարակել—կրթել։	Տեխնիկական կատարելագործում — մեքենաների լավացում։
Ֆինանս—ֆինանսական պլան։	Ուսցիոնալ—ավելի լավ, տնտեսող։
Արտադրանք—արտադրած ապրանք։	Գյուղատնտեսություն—գյուղատնտեսություն։
Վերակ—հատկություն։	Ներդրում—ներս քաշել, մասնակցել տալ։
Պայքար—կռիվ։	

ՀԱՐՑԵՐ

1. Վորժնը են սոցիալիստական մրցության խնդիրները։
2. Ի՞նչ չափով է ձեռք մոտ ալը խնդիրներն իրագործված։
3. Զեկուցումներ լեզվի են ձեռք մոտ ալը խնդիրների մասին։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտադրելի վերջին մասը՝ «Մրցության խնդիրներն են»-ից սկսած մինչև վերջը։

36. Հնգամյա պլանի մասին

(Ըճկ. Ռիկովի յեվ ըճկ. Կոմիտանովսկու գեկուցումներից)

I

Մենք կառուցում ենք Դեկադրի ելեկտրակայանը։ Նրա շուրջը կանգնելու յեն վիթխարի մետաղագործարաններ։ Գյուղ են մուտք գործում տասնյակ հազարավոր տրակտորներ։ Աճում են կոլտնտեսությունները։

Արդյունաբերության ասպարիզում մենք մինչպատերազմյան մակարդակը գերազանցեցինք մոտ 30 տոկոսով։ Բարձրացավ բանվորական մասնակցության կազմակերպվածությունը և գիտակցությունը։

Կոլտնտեսությունները և կոոպերացիան գրավել են հսկայական դիրքեր։ Մասնավորը համարյա բոլորովին դուրս է քցված առևտրից։

Մենք ընդունել ենք ելեկտրիֆիկացիայի տեխնիկական պլան, վորը Լենինն անվանել էր «մեր կոլտնտեսության յերկրորդ ծրագիրը»։ Հինգ տարուց մենք կունենանք 40 ելեկտրակայան։

Յերբեմի հարց են տալիս, թե ինչու այնքան շատ միջոցներ են հատկացվում ծանր արդյունաբերությանը, իսկ գյուղատնտեսությանը՝ քիչ։ Նախ սխալ է, թե մենք քիչ միջոցներ ենք տալիս գյուղատնտեսությանը։ Յերկրորդ՝ գյուղատնտեսության վերելքը կախված է նրանից, թե կտանք մենք գյուղատնտեսությանը լավ մեքենաներ, պարարտանյութեր և այլն, թե՛ վոր։ Այդ ամենը գյուղացուն կարող է տալ արդյունաբերության զարգացումը միայն։

Այս տարի մենք կարտադրենք 210 միլիոն ո. գյուղատնտեսական մեքենաներ։ Հնգամյակի վերջում կարտադրվի 610 միլ. ո.։ Այդ կատարվում է գյուղատնտեսությունը բարձրացնելու նպատակով։

Այդպիսով յերկրի ինդուստրացումից շահում է նաև գյուղատնտեսությունը։

II

Այժմ Դեկադրը տալիս է տարեկան 27 միլիոն տոնն ածուխ։ Հինգ տարուց հետո կտա 53 միլիոն։ Կուլանցելի (Միբիր) ավազանում քարածուխի հանույթն ավելանալու յե յերեք անգամ։ Միության ելեկտրակայաններն հինգ տարուց հետո չորս ու կես անգամ ավելի են երգիա կտան։

Հնգամյա պլանը փոփոխություն է մտցնելու նաև գյուղատնտեսության մեջ, Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների թիվը բազմապատկելու յե։ Տրակտորների գործարանները հնգամյակի վերջում բաց են թողնելու տարեկան 70 հազար տրակտոր։

Կառուցվելու յեն 20 հազար կիլոմետր նոր յերկաթուղիներ։ Կառուցվելու յեն նոր գործարաններ։ Գործադրվելու յեն յերկաթուղիներ։ Աշխատավարձը կբարձրանա 70 տոկոսով։ 7-ժամյա բանվորական որը կգործադրվի Միության բոլոր գործարաններում։

ԲԱՌԵՐ

Վիթխարի—հսկա, շատ մեծ:
Մինչպատերազմյան—պատերազ-
մից առաջվա:
Մակարդակ—գրութուն, աստի-
ճան:
Վերելք—բարձրանալը, զարգացում
աճում:
Ծանր արդյնաբերութուն—խոշոր
արդյունաբերութուն:
Պարարտանյութ—հողը պարար-
տացնելու (փեխնելու) նյութ
(աղբ, քիմիական նյութեր
և այլն):
Ավազան—գետի հովիտ, շրջակայք
եներգիա—ուժ:
Բազմապատկվել—մի քանի անգամ
շատանալ:
Կնվազի—կպակասի:

37. Գալիք աշխարհը

Ե՛յ, հազար-հազար ավտոմոբիլներ,
նավ, այերուպլան, հանքեր ու ցանքեր,
լեռնաթուղիներ, ազատ աշխարհում
— ո՛ւմ եք պատկանում:
— Հանձնը մարդկության:
Ե՛յ, հազար-հազար լույսեր ելեկարյան,
վոր գիշերները արև եք վառում,
— ո՛ւմ եք պատկանում:
— Հավասարության:
Յե՛վ դուք աշխարհի գեղեցկուհիներ՝
հաղթ մեքենաներ ու գործարաններ,
վոր քար ու հողից բարիք եք ծնում,
— ո՛ւմ եք պատկանում:
— Բանվոր մարդկության:
Համալսարաններ, չքնաղ թատրոններ,
վոր Նոր Աշխարհի պարծանքն եք կազմում,
— ո՛ւմ եք պատկանում:
— Մեկին, ամենքին, իրար հավասար,
ուր հազարն է մեկ, ու մեկը՝ հազար...

ԲԱՌԵՐ

Հանուր—ընդհանուր, ամբողջ:
Հաղը—մեծ և ուժեղ:
Չքնաղ—շատ գեղեցիկ:

ՀԱՐՑԵՐ

1. Իսկ առաջ ում ելին պատկանում:
2. Ի՞նչ և նշանակում՝ «ուր հազարն է՝ մեկ, ու մեկը՝ հազար»...

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրի՛ր՝

Մարդկություն, հավասարություն

և ավելացրե՛ւ «ութուն» վերջավորութուն ունեցող մի քանի ուրիշ բառեր:

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

38. Յեղբայրներ

Յեղբայրներ ենք մենք են գլխից—
յես՝ բանվոր, դու՝ գյուղացի.
մեր սերտ, ամուր միությունից
հին աշխարհը թող սարսի:

Յես կոփում եմ չերկաթ, պողպատ,
տալիս քեզ խոփ, գերանդի.
դու մշակում այգի ու դաշտ,
տալիս հացը քո հանդի:

Յեղբայրներ ենք մենք են գլխից—
յես՝ բանվոր, դու՝ գյուղացի.
մեր կուռ, ջուռ բազուկներից
կապիտալը թող սարսի:

ԲԱՌԵՐ

Սերտ—պինդ, ամուր, խիտ: Կուռ—ամուր:
Սարսի—վախենա, սարսափի: Ճլուտ—պինդ ջղեր ունեցող:
Կոփել—շինել, ձև տալ (մետաղին): Բազուկ—ձեռք, թև:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրի՛ր հետևյալ բառերը.—

առաջին	վեցերորդ
յերկրորդ	յոթերորդ
յերրորդ	ութերորդ
չորրորդ	իններորդ
հինգերորդ	տասերորդ

և շարունակիր մինչև քսաներորդ

«Յերրորդ» և «չորրորդ» բառերի մեջ չերկու «ր» և կողք-կողքի՝
«Հնգից» սկսած՝ բառի վերջին ավելանում «երրորդ» մասնիկը.—
որինակ՝ տասնութերորդ, յոթանասուներորդ, հարյուրերորդ և
այլն:

39. Մանիշը

Մանիշը թոնրի առջև չոքած՝ հաց եր թխում։ Կեսուերն ել մանում եր։

— Մանիշ, — կանչելով ներս մտավ Աշխենը, — քեզ գլուղխորհրդի անդամ ընտրեցին...

— Եղ եր պակաս, — բղավեց Մանիշի կեսուերը, — ել վոչ ամոթ ե մնացել, վոչ արուռ։

— Ե՛հ, դուք՝ պառաջներդ եղպես ապրել եք, եղպես ել պիտի մեռնեք։ Մեզ ջանքերիս համար նոր ե ծագել կյանքը։ Ե՛հ, յես՝ գնացի, Մանիշ ջան, ուղք մի դարձնի, — ասաց Աշխենն ու դուրս գնաց։

Ներս մտավ Մանիշի մարդը՝ Փիլոն։

Պառավը վորդուն տեսնելուն պես վրա վազեց և ծնկներին խփելով՝ բղավեց.

— Տներս քանդվեց, բալա ջան։ Հերիք չե, վոր Մանիշը կանաց ժողով ե գնում, հիմի յեղ ուղում ե տղամարդկանց հետ ընկնել։

— Հա, աղչի՝ աչքերը չոքելով գոռաց Փիլոն, — են անհամուռ Աշխենը ճիշտ վոր քեզ ճամպից հանել ե։ Մեկ ել վոր նրան ետտեղ տեսա, քեզ կսպանեմ. լսում ես, թե չե։

— Սխալ եք, Աշխենը վոչ մի մեղք չունի։ Ինձ գլուղն ե ընտրել, և յես պարտավոր եմ աշխատել։ Անցել են այն ժամանակները, յերբ կնոջը կարելի չեր վիրավորել ու ծեծել։ Խեղդ գլուխդ ժողովի, աչքերդ բաց արա և տես նոր կյանքը։

Փիլոն լուռ դուրս յեկավ։

40. Ագիև

Չնայած իրա
ճերմակուղ մազին՝
քուրսուռ տակ մենակ
գեղջկուհի ազին՝

Շատ դժվար հարց ե։ —
հա մարդն ե վնջում,
լացկան մանկիկը
հանգիստ չի ննջում,

ձմռան գիշերը
նստել ե արթուն,
ամուսնուց ծածուկ
գրում ե, կարգում։

— Բնիք, ա կնիկ,
հերիք ե կարգաս.
դու որ ծերության
տերտեր պիտ դառնաս։

Խնդրելով մարդուն,
կաթ տալով վորդուն,
մեր գեղջուկ ազին
գրում ե, կարգում։

ՀԱՐՑԵՐ

— «Մանիշը» և «Ագիև» հողավածներում ի՞նչ փոփոխություններ են մտել գեղջկուհու կյանքում։

— Ուրիշ ի՞նչ փոփոխություններ պիտես։

ԱՌԱՋԱՂԻՐՈՒԹՅՈՒՆ

«Մանիշը» արձակ գրվածք ե, «Ագիև»՝ վոստիվոր։

Համեմատել և գտնել արձակի և վոստիվորի տարբերությունները։

41. Անծած հարսը

Վաղ ժամանակ մի հայ շենում
մի հարգևոր հարսն ե լինում։
Նրա բերնից կեսուր, կեսու
չելին լսել մի շունչ, մի բառ,
չելին տեսել շուրթը մի որ...
եսպես խոնարհ ու հարգևոր։
Մի որ մենակ տանը նստած,
իր ճութ մագերն արձակ թափած,
ազատ, անփուլթ, սանրում, հյուսում,
հեռն ել ձենով յերգ ե տսում.
«Աշխարհը բանա»,
մեջը անբախտ
յես մի գերի անխնդում.
սիրուն շորեր,
ջանել որեր
ինչ եմ անում ես բանաում։
Երնեկ ծրախն,
ճյուղքի միջին
ծըվելում ե, թըրթըռում,
թռչում սիրած,
ընկերն առած,
ազատ, կանաչ արտերում։
Ա՛խ, սե ըլի,
չքվի, փըլի
ծնված որը աղջկա,
ցավ ու խնդում
փակված սրտում,
ծիծաղ չկա, «ախ» չկա...

Մին ել հանկարծ բացվեց
դուռը,
ու ներս մտավ ծեր կեսուերը։
— Հո, պո, պո, պո, — կանչեց
խեղճը,
գետին, պատուի, մտնեմ
մեջը...
— Հոպոպ դառնաս,
անամոթ հարս։
Մի տես, մի տես,
թե լըրբի պես
գլուխը բաց,
ազատ նստած
վո՛նց ե կանչում,
չի ամաչում...
Լեզուդ լալի,
մազդ թաղբի,
դլխիդ կպչի
սանրը միջի։

Ասավ, չասավ,
մին ել տեսավ,
սանրը գլխին՝
հարսն առաջին
հոպոպ դառավ,
յերդկից թռավ
ու վերացավ
վեր, հեռացավ։

ԲԱՌԵՐ

Ճոխ—առաս, հարուստ:

Անփութ—անհոգ:

Խնդում—ուրախութիւն:

ՀԱՐՑԵՐ

— Ինչպէս ե հարսի դրութիւնն այս դրվածքի մեջ: Համեմատել աշտ հարսի դրութիւնը Մանրի, Աշխենի, Շուշանի և Մարոյի (նախորդ և հաջորդ հոգովածներում) դրութեան հետ: Կինը լինի դարձաւ ազատ քաղաքացի: շնորհիվ ինչ բանի:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Դիտել, թե վորտեղ ե սկսվում հարսի յերգը և վորտեղ վերջանում: Ի՞նչ նշան ե դրված սկզբին և վերջին:

Ուրիշի բերանից բերված խոսքերը, մտքերն ու բառերը պատմողը գրելիս դնում ե հակերտների (« ») մեջ: Չակերտը բաց են անում խոսքի սկզբին («), փակում են՝ վերջին (»):

2. Դիտել, թե հարսի և կեսուրի խոսքերից առաջ շարունակութեան մեջ ինչ նշան ե դրված:

Չակերտի փոխարին կարելի չե դնել նաե գիծ (—)՝ միայն տողի սկզբին (նոր տողից):

42. Կեսուրն ու հարսը

— Շուշան ջան, մի ուրախ բան ասեմ. վաղը կանանց ժողով ե: Միասին կգնանք: Դու չե՞լ կգրվես և միշտ կգնաս ժողովներին: Ե՛լ չեք բեք չես ախրի. նոր-նոր շատ բան կսովորես: Մեր թաղից մի քանի հարսներ ել եմ տանելու: Հերիք ե փոսներդ կապ՝ տանը նստեք, որորոցն ու իլիկը շարժեք: Դիտե՛ս, վոր նոր կարգերն ազատութիւն բերին կնոջը: Ել լաշակը բերաններիդ չպիտի նստեք: Պիտի գնաք ժողով, ձայն տաք խորհուրդներին:

Առաջին անգամը չեք, վոր Մարոն այդպես եր խոսում. նա Շուշանին շատ բան եր սովորեցրել:

Մի տարի չեք՝ Մարոն կոմսոմոլումն եր. աչքի չեք ընկնում իր ընդունակութիւններով: Միբում եր ընկերների հետ վիճել, ժողովներին մասնակցել:

Վաղը գլուղը ճանաչում եր Մարոյին: Մոտիկ գլուղերն եր

գնում, խոսում, միտինգներ անում, աղջիկներին կոմսոմոլի մեջ քաշում:

Շուշանն ու Մարոն դեռ խոսում եյին, չեք ներս մտա՞վ Մարոյի մայրը: Նա շալն առա՞վ գլխից ու անհամբեր դարձա՞վ Մարոյին:

— Ես ինչե՞ր են պատմում. ամբողջ գլուղը բամբասում ե քեզ: Ասում են՝ աշխարհում ել բան չի մնացել՝ գլխիդ ես հավաքել: Ինչից ես խոսում: Եդ քոնցոմոլ ա, ինչ գահրումար ա՝ քեզ փչացրեց: Վա՛ւ, ասա՞վա՞՞մ, չեքեսս վոտիդ տակ. ես տարիքի կնիկ եմ, ես բանը տեսած չեյի: Կապդ կտրել ես, գուրս ընկել, հիմի չե՛լ հարսիդ ես գլխահան անում:

— Ագի, հերիք ե, իգուր մի բարկանա: Հազար թող խոսեն, բամբասեն: Յես իմ ճամպեն ունեմ—նոր աշխարհի հետ եմ գնում:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրի հետևյալը և յուրաքանչյուր սյունակի (շաբթի) տակ ավելացրու սյունակի վերև դրված հարցին համապատասխան լոթական բառ:

Ի՞նչ արեց, ի՞նչ չեղա՞վ կամ ի՞նչ արվեց	Ի՞նչ արած, ի՞նչ չեղա՞ծ կամ ի՞նչ արված
1. գրեց, գրվեց	գրած, գրված
2. կարդաց, կարդացվեց	կարդացած, կարդացված
3.	
4. և այլն	

Ուշադրութիւն դարձրու, թե վորտեղ ե ից կամ այց գրվում, վորտեղ՝ ած:

43. Նոր գլուղը

Կարմիր գլուղի մեջտեղում նոր դպրոցն ե փառավոր, ուր մանուկներն են խաղում ու սովորում ամեն ոք:

Կոոպերատիվ ե գարձել մեծ խանութը Մարգարի, ուր գնում են ջահել, ծեր նավթի, աղի, շաքարի:

Հիմա Սոնան ե նստում գրասենյակում մոտակա. — նոր են ընտրել խորհրդում գլուղխորհրդի նախագահ:

Թեև շատ բան կա թերի, հինը դեռ շուտ չի կորչի. բայց փոխվել ե կյանք, կենցաղ. ել են նախկին գեղը չի:

44. Հին գյուղը

Մեր գյուղն էն է, վոր հալարտ
լեռների մեջ միգապատ,
խոր ձորերի քարափին,
ձեռքը տված ճակատին՝
միտք ե անում տխրադեմ.
Ինչ ե ուզում—չգիտեմ...

Պառ չենք ախտեղ մենք ուտում
ու ջերմեռանդ աղոթում,
ժամ ենք գնում ամեն քր,
բացի միշտ ցավեր նորանոր,
միշտ մի աղետ, մի փառ
գալիս են մեզ անպակաս:

ՀԱՐՑԵՐ

— Ինչ տարբերություն կա հին և նոր գյուղերի մեջ: Նախ ասա ալա-
վատանավորների մեջ հիշված տարբերությունները, հետո ավելացրե՛ք իմա-
ցածը:

— Ինչո՞ւ չե հին գյուղը «տխրադեմ» միտք անում: Վորո՞շ ե պարզ
ե, թե ինչ ե ուզում նա: Հապտ նոր գյուղը, պարզ ե նրա ուզածը, նրա-
ապագա ուղին. վերն ե ախ:

— Պատվ ու աղոթքով կարճը եր հին գյուղը ցավերից, աղետից, փա-
սից ազատվել, ինչպե՞ս և յերբ ազատվեց գյուղը:

ԲԱՌԵՐ

Նախկին—անցած, հին:

Միգապատ—մշտնջող պատած:

Մեզ—մշուշ, մըժ, դուման:

Տխրադեմ—տխուր դեմքով:

Ջերմեռանդ—հովատով:

Աղետ—գժրախտություն:

45. Գալուստի վիկր

Վիկր տուն կրելիս Գալուստի աչքովն ընկավ Ռուստամ ապերը,
վոր ժամի պատի տակ նստած թաղերն եր քաշում: Միտքն ընկավ
Ռուստամ ապոր խոսքը, թե՛

— Ես խոս... տեսնենք մեր տավարը կուտի:

Գալուստը հաջեց Ռուստամ ապոր կողմն ու ծիծաղելով
հարցրեց:

— Ռուստամ ապեր, մեր հողը կընդունի, թե չե:

Ռուստամ ապերը չպատասխանեց: Նա դեռ յերեկ եր լսել,
վոր Գալուստը 120 խուրձ խոտ ե հաբել իր փոքրիկ մարդից—
Լսել եր—չեք հավատացել...

Պատի տակից մեկը հանկարծ ասաց.

— Դու են ասա. եղ վիկի խոտը ձին կուտի:

— Բերենք, փորձենք,—վրա բերեց մի ուրիշը:
— Ռուստամ ապոր ձին բերեք,—ասաց մի յերիտասարդ:
Ռուստամ ապոր ձին բերին: Գալուստը մի խուրձ բերեց, դրեց
ճամպի մեջտեղը: Ձին դունչը կոխեց խուրձի մեջ և սկսեց ախոր-
ժակով ուտել:
— Ա՛, վոնց ե գելի պես ուտում,—ասաց մեկը:
— Ա՛, քեզ խոտ: Երնեկ ես ձմեռ քու տավարին, Գալուստ:
Մերը չոր դարման ե ուտելու...

46. Հնավորը

Տխուր ե գնդում գերանդին.
հասկերը շրշում են՝ «ուշ ե»...
ինչքան ել յեռա յեռանդից՝
գերանդին արդեն անուժ ե:

Յերը եստեղ հնավոր մաշինան
շափշափում ե շախին յեռանդից,
շարտում ե խուրձերը շինած,—
ել ուր ե գնդում գերանդին:

Ե՛լ, քոնն ե հունձը, մաշինա,
տխուր ե գնդում գերանդին:

ԲԱՌԵՐ

Մարդ—չալի:

Անուժ—ուժ չունեցող, թուշ:

Հասկ—կոտի:

Յեռանդ—աշխուժ:

ՀԱՐՑԵՐ

— Ինչո՞ւ չե տխուր գնդում գերանդին:
— Հունձը ո՞ւմն ե:

47. Կոլեկտիվ աշխատանք

Կոլեկտիվն իր արտերը հնձում եր: Հասկերը հեալով փոփում
էին:

Կոլեկտիվի նախագահ Ալեքսանը հագել եր իր հին բանվորա-
կան բլուզը: Յեռանդով ցած եր փռում հասկերը: Կոլեկտիվի ան-
գամներն աշխուժով հնձում ելին:

Յերեխաներն ոգնում ելին նրանց: Հայրերը նաչում ելին յերեխաներին և ուրախանում:

— Ապրեք, յերեխեր: Ես ձեր հացն եմ: Հողից վոսկի յենք հընձում: Մեծ ու փոքր իրար ոգնենք:

Մոտիկ կալերից գալիս ելին կոլեկտիվի աշխատանքներին նաչելու:

— Ոհան, — ասաց Պողոսն իր հարևանին, — տեսնո՞ւմ ես՝ կոլեկտիվն ինչ մեծ ուժ է:

— Հա, Պողոս ախպեր, — սխառասխանեց Ռհանը. — մի ձեռքը ծափ չի տա: Արի մենք ել մտենք կոլեկտիվի մեջ:

— Մտենք, մտենք, — ձայնակցեցին մյուս գյուղացիները:

Կուլակ Պապուշը նոթերը կիտած նաչում եր: Շրթունքները կրծելով նա մտածում եր. «Վա՛նք եկել եմ, ինձ տարել»:

ԲԱՌԵՐ

Աշխուժով — փրկ, լեռնադով: Զայնակցեցին — ձայն տվին:

ԱՌԱՋԱՆԴՐՈՒԹՅՈՒՆ

յես	հնձում եմ	յես	հնձելու չեմ
դու	հնձում ես	դու	հնձելու չես
նա	հնձում է	նա	հնձելու չե
մենք	հնձում ենք	մենք	հնձելու չենք
դուք	հնձում եք	դուք	հնձելու չեք
նրանք	հնձում են	նրանք	հնձելու չեն

«Հնձել» բառի նմուշով կազմիր՝ չես գնում եմ, չես նաչում եմ և արտադրիր տեղադրելի մեջ:

Ուշադրութուն դարձրու, թե վերտեղ և դրվում՝ եմ, ես, և և ալին, և վերտեղ՝ չեմ, չես, չե (այ՝ ե ալիլանում):

48. Սերմնացան

Հազար յերանի
քեզ, քաջ սերմնացան, —
դաշտը գեղանի
չես թողնում խոպան:
Վառ արշալուսին
որը բացվելիս՝
քեզ ե առաջին
վողջունը տալիս:

Իրիկնադեմին
որը մթնելիս՝
քեզ ե իր վերջին
բարևը տալիս:
Գետակը ձորում,
թռչունը ողում
բոլորն ել սիրով
քեզ են վողջունում:

Հազար յերանի
քեզ, քաջ սերմնացան, —

դաշտը գեղանի
չես թողնում խոպան:

ԲԱՌԵՐ

Գեղանի — գեղեցիկ, սիրուն:

Խոպան — անմշակ, ամալի:

ԱՌԱՋԱՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս վառանավորը վանկերի բաժանած արտադրեր:

Հիշե՛ր վանկատման կանոնները (տես էջ՝ 87, 88)

Վաղարշապատի վարկային ընկերության
Պիճուժ

Մենք Վաղարշապատի «Անաստիա» կո-
լեկտիվի անդամներս ինդրում ենք 500 ռուբ-
լու վարկ քաջ թեյ՝ սերմնացու չեմ լծկան գնե-
լու համար:

Պարտավորվում ենք հանգցնել պարտքը նոր
բերքին՝ 6 ամիս ետքո (Վրնչե սեպտեմբերի 1-ը):

Անաստիա կոլեկտիվի
Վարչության նախագահ՝
Բարսուղար՝

1939 թ. Մարտի 1-ին
Վաղարշապատ (էզ՝ գալիս):

49. Արտեր

Հայդուղկոտի հրահանգիչը մեր գյուղում գեկուցեց արտեր-
ների մասին: Ասաց, վոր մեր գյուղացիք կովերին վատ են պահում:

Ստեփանավանի շրջանում մի կովից ստանում են տարեկան
100—120 ուռք. ոպում:

Այդ նրանից է, վոր աչնաեղ արտել են կազմակերպել և կո-
վերին լավ են խնամում: Կաթից մեքենայով ստանում են լավ տե-
սակի յուղ, պանիր:

Արտելի մեջ մտել են բոլոր գյուղացիները:

Գյուղացին մենակ չի կարող մեքենա գնել, մասնագետ հրա-
վիրել, իսկ միասին կարող են:

Գյուղացիք ասացին.

— Վոր այդպես լավ է, չեկեք մենք էլ արտել հիմենք:

Քվեարկեցին: Անցավ միաձայն: Հրահանգիչը կարգաց կաթնա-
տնտեսական արտելի կանոնադրութունը:

Գրվեցին 40 գյուղացի: Վարչութուն ընտրեցին, անցան գործի:

50. Կոոպերատիվը բացվեց—Սերգոյի խանութը փակվեց

Յերեք ամիս է, ինչ Նորաշեն գյուղում բացվել էր կոոպերա-
տիվ խանութ:

Գյուղացիներն էլ հանգիստ չունեին. հենց վոր մի բան պա-
կասում էր, վազ ելին տալիս կոոպերատիվ:

— Ինձ մի կիլո շաքար կշռիր...

— Ալեքսան ախպեր, մի տուփ լոցկի տո՛ւր:

— Աղ...

— Աղը հատել է:

— 2 մետր բլազ...

Կոոպերատիվի առևտուրը քանի գնում ծավալվում էր...

Կոոպերատիվից քիչ հեռու գտնվում էր Սերգոյի փոքրիկ խա-
նութը: Կոոպերատիվի բացվելու ուրիշ նրա առևտուրը պակասել
էր: Որեքով նրա խանութը մի գյուղացի անգամ ներս չեք մտնում:
Ո՞վ էր գովիլ՝ Սերգոյի վատ ապրանքը թանգ գնով առնի:

— Չհղավ, — ինքն իրեն գլուխը թափ տալիս ու փնթփնթում
էր Սերգոյ: — Թե ապրանքս եժանացնեմ, են ժամանակ միաս կա-
նեմ: Լավ է վերջ տամ խանութին:

Գրիբ ձեռ կոոպերատիվում լեզած ապրանքների անունները.
որինակ՝

Թեյ, նալթ, սապոն, չիք, Տեխ...

29-ին հոկտեմբերի 1928 թ.

Հ Ա Շ Ի Վ

Վարդաձորի կոմունայի նախագահ՝ Սարգիս Մնացականյանից
«Արարատ» արեստին

Տարի, ամիս, թիվ	Վաճառված է	Քանակ	Արժեք		Գումար	
			Ռ.	Կ.	Ռ.	Կ.
1928 թ.	Խաղող սպիտակ	1 ¹ / ₂ տոնն	120	—	180	—
Հոկտ.	» սեվ	1 տոնն	100	—	100	—
10						
Գումար			—	—	280	—

Յերկու հարյուր ութսուն ութի — ստացա՝ Սարգիս Մնացա-
կանյան:

Արտագրիչ.

Կոոպերատիվի անգամին

Կոոպերատիվ մեր սիրով, վր թի միաս
այլ բնակիրով:

Կոոպերատիվից գնիր ամիս ինչ, իսկ
մասնավորից վր ինչ:

Խարուսթներին վարչությունից կանի,
վոր կոոպերատիվը լավ բանի:

51. Մեքենաների հունարը

Մեքենաները որ ե, վոր վարձակալանը բացվել ե գլուղում: Բոլոր մեքենաները նոր են ստացել: Կայանն ել են նոր շինել գլուղի գլխին՝ հանդը տանող ճանապարհի բերանին: Գլուղի նեղիկ և ծուռ փողոցները հարմարութուն հունեն՝ մեքենաները գլուղամեջ փոխադրելու:

Ընդարձակ կալում մի տեղ քամհարն ե աշխատում, փոշի չե հանում: Մեկը փոշու մեջ անընդհատ թիակն ե բարձրացնում, հարգախառն ցորենը լցնում մեքենայի մեջ:

Մաքրած ցորենը սերմագութի մեջ են լցնում: Ներքեից սերմացուն ջուկ ե թափվում, հավի կուտը՝ ջուկ, ուտելու ցորենը՝ ջուկ:

Հավաքվել են գլուղացիք: Նայում են զարմացած: Վոմանք կուանում են, տակից նայում, կամ վիզը չերկարացնում վերեից նայելու, վոր տեսնեն, թե միջին ինչ կա, վոր աշխատ լավ մաքրում ե:

— Հավատալս չի գալի, թե իմ ցորենն եսպես իստակ...

— Մուքի ամի, աստված կարա՝ մեղավորին արդարից եսպես ջուկի, — կատակում ե մի չերիտասարդ:

— Ձե, վորդի, աստվածն ել եղ հունարը չի ունենա, — պատասխանում ե Մուքի ամին:

— Մեր կնանոնց կոները դեշացան, — ասում են զանազան կողմից:

52. Տրակտորի յերգը

Հեյ ջան ախպեր, պողպատ ախպեր,
դե շուտ արի, գալի բարի,
արակտոր ջան, մեր նոր ընկեր,
քեզ փեշքեշ ե հանդը գլուղի:

Մեր սրտի հույս, մեր աչքի լույս,
բեր ճակատդ կարմիր կապենք,
ման չեկ գլուղում, չերթդ անուշ,
գութան ու չութ թող դարդոտվեն:

Դու վոր մերն ես, ել ինչ կուլակ,
ել ինչ գորբա մեզ կնեղի.
սարքը վրա տասը գութան
վոչինչ բան են քո առաջին:

Դու վոր չեկար, մեր նոր ճամպան
շատ հեշտացավ, ել դարդ հունենք:
Դե, քեզ ցույց տուր, տրակտոր ջան,
հինը քանդենք, նորը շինենք:

53. Ելեկտրիֆիկացիա

Մեր քաղաքներում ելեկտրական ուժը գործադրում են գործարանի մեքենաները շարժելու, լուսավորութան, տրամվայի, հեռագրի, հեռախոսի, կինոյի և ուղիտի համար:

Ելեկտրական ուժ ստանալու համար անհրաժեշտ ե գնել դինամո-մեքենա:

Այնուհետև զլիսավոր ծախսը վառելիքն ե, վոր հարկավոր ե դինամո շարժելու համար:

Մեծ ելեկտրական կայաններ շինում են ախպիսի տեղերում, ուր վառելիքն եժան ե: Այդ կայաններից լարերի միջոցով ելեկտրական հոսանքն անցնում ե հարյուրավոր կիլոմետրներ:

Մարդիկ քամին և հոսող ջրերն ոգտագործում են աղորիքների համար: Քամին և ջուրը պտտացնում են աղորիքների անիվները:

Կարելի չե գետակի մոտ մեքենա դնել աղորիքի անիվի նման, և նա անդադար կաշխատի: Ամենափոքր գետակն անգամ կարող ե ելեկտրական ուժ տալ ամբողջ գլուղին: Վառելիքի ծախս չի լինի, և ելեկտրական լամպը կվառվի ամեն մի խրճիթում, ամեն մի արհեստանոցում: Ելեկտրական ուժը կարելի չե ոգտագործել ուրիշ շատ կարիքների համար:

ԲԱՌԵՐ

Աղորիք—ջրաղաց, հողմաղաց,
ելեկտրաղաց:

Լար—չերկաթե թել (մավթուլ):
Տրամվա—ելեկտրաքարշ:

54. Լենինի անվան ջրանցքը

Գնում ենք տեսնելու «Լենինի» ջրանցքը: Ծիծաղով ու կատակով հասնում ենք ջրանցքի բերանը:

Մայրաքաղաքի գուրս ե լինում ջուրն իր հարազատ մոր գրկից և առաջ ե հոսում իր նոր հունով:

Ամբողջ յերեք կիլոմետր ջրանցքն անցնում է մայր գետին գոլգահեռ: Նրա առջև ցցված բարձունքն աշխատել է խափանել նրա ընթացքը: Բայց աշխատավորի ձեռքը փորել է նրա կող ու կուշար և ճանապարհ բացել իր սիրելի ջրանցքի համար:

Ջրանցքն իջնում է դեպի ցած և դուրս է գալիս ազատ ուղի մեջ: Նա հոսում է 85 մետր խորության հունով և այդպես ամբողջ 6½ կիլոմետր:

Հունն այստեղ շինված է քար ու կրով:

Ջրանցքը դուրս է գալիս Նշմիածին և աշխատավորությանը նոր կյանք է ավետում: Նա խոտոտանում է կենդանացնել նրանց այրված ու խանձված դաշտերը և փոռոզել 2500 հեկտար հող: Նա գարկ կտա բամբակի ու խաղողի մշակութային:

ԲԱՌԵՐ

Կատակ—հանար: Ավետիք—ուրախ լուր:
Խաչտակ—խաղալ: Վրոզել—ջրել:
Հուն—գետի տաշար (արխ):

55. Բայրեզիկ և Շիր-կանալը

Մատաղ լինեմ յես այն որին, մատաղ լինեմ յես այն ժամին,
յերբ ինձ նորից կփծակվի այցի գալու Շիր-կանալին:
Տեսա նրա յերկունքը յես, պեղումները տարի առաջ:
այժմ՝ նրա բաղ ու բախչեն, արտն ու հոնդը, ծառ ու կանաչ:
Յե՛վ գիշերը հազարաչյա տաքածելով լուսի փշեր՝
ինձ կերևա հեռու անդից մի տաղազարդ հեքլաթ գիշեր:
Յե՛վ կսուլեն ֆաբրիկաների գուլպաները ուրախ կանչով,
փողջունելով գլուզ ու քաղաք ալ բոցերի հուր կանաչով:
Բայրեզիկ և Շիր-կանալը, մեծ գավակը Հայաստանի,
նրա վորդին՝ ջահը ձեռքին, լուսի աղբյուր մի ախտանի:

ԲԱՌԵՐ

Այցի գալ—տեսության գալ, ալ- Գեղում—փորելը, պեղել-փորել:
ցելել: Հազարաչյա—հազար աչքանի:
Յերկունք—ծնունդ, ծննդաբե- Ծածանչ—շող, ճառագայթ:
լության ցավ: Տխառն—հսկա, աժդահա:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս վրտանավորը զարճրու արձակ:

ԱՄՐԱՑՆԵՆՔ ՅԵՎ ԹԱՎԱԼԵՆՔ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆՎԱԺՈՒՄՆԵՐԸ

56. Առանց քաղափորի

Պողոսը հարբածի պես ներս մտավ խրճիթը: Դեմքին ժպիտ կար: Աչքերը շաղված էլին:

Ալմաստը զարմացավ.

— Ի՞նչ է, Պողոս, խմե՛լ ես: Ի՞նչ է պատահել:

— Ի՞նչ խմել, ի՞նչ բան: Ենպիսի լուրեր են չեկել քաղաքից՝ վոր յեթե լսես, դու չե՛լ կհաբբես: Թագավորին քցել են...

— Վճնց թե. եղպես բան կլինի, — չհավատաց կինը:

— Հանաք չեմ անում: Դիր և չեկել քաղաքից: Ա՛յ, հիմա հրապարակով կկարդան, կիմանաս: Ել թագավոր չկա: Մեկը հրաժարվեց. մյուսը մերժեց:

— Եղ բոլորը լավ, — պատասխանեց կինը: Բա քյոլվե՞ն, պրիստովը, վաշխառմեն. դրանք պիտի մնան, — հարցրեց վախենալով:

— Եղ ել դեռ հետո կտեսնենք...

Դպրոցում չտեսնված բազմութուն էր հավաքվել: Խոնավ էլին մուտքի մոտ, դռների ու պատուհանների առաջ, պատերի տակ:

Վարժուհին հուզմունքից խեղդված ձայնով կարդում էր. —

— «... ու մենք բարվոք համարեցինք հրաժարվել գահից...»:

Չեր լսվում: Կցկոտուր խոսքեր էլին հասնում լսողներին:

— Չենք լսում, կա՛վ կարգա. նորից...

— Թող Վարդգեսը կարդա ձենը բարձր է:

Վարդգեսը լուրջ դեմքով սկսեց կարդալ մանիֆեստը և լրագիրը:

Լուռ էլին բոլորը, հուզված, վրեժավորված...

— Վեր հեղափոխութեան և վերաբերում այս հողվածը՝ Փետրվարյան, թե՛ Հոկտեմբերյան:

— Ինչո՞ւ չե՞ կինը վախենալով հարցնում՝ «բա քոխվե՞ն, վաշխառո՞ւն, պրիստովը»: Փետրվարյան հեղափոխութեանը դրանց վերացրեց:

— Ի՞նչ ե՞ ուզում ասել Պողոսը, թե՛ «եղ ել դեռ հետ կանանհնք»: Այդ «հետ»-ն չե՞րք չեղավ:

— Վերադառնալիս և կատարվում հողվածի առաջին մասը, վերադառնալիս չե՞րք:

— Ի՞նչ վերադառնալիս կգնես առաջին մասին, ի՞նչ՝ չե՞րք վերադառնալիս:

57. Կիսատ տունը

I

Եղ եմ ժամանակն եր, չե՞րք ամեն ինչ շարժվեց: Բոլոր փակ քերանները բացվեցին: Յերկիրը լցվեց նոր ազմուկով:

Սարգիսը քաղաքից վերադարձավ գյուղ: Նա վերադարձված հայտարարեց գյուղում:

— Ել հարուստ-աղքատ չկա: Սրանից դենը բոլորս մին ենք: Ու պատմում եր քաղաքի բաներից: Գյուղացիներին շնորհակալ եմ բերած նոր մտքերով:

Նոր հովերով չեկան շուտով և ուրիշները: Ու ամբողջ գյուղը զրդաց նոր խոսքերից:

Եղ սրերին եր ահա, չե՞րք Սարգիսն սկսեց շինել իր նոր տունը: Նա բարձրացրեց պատերը, բայց չկարողացավ վերջացնել տունը:

II

Անցել եր եղ ժամանակը: Կյանքը նորից նախկին հունն եր մտել: Գյուղի հին տերերը դարձյալ գլուխ բարձրացրին: Վաշխառու Սանդրոն ու կուլակ Մարտիրոսը նորից իրենց գիրքերը գրավեցին:

Սարգիսը գլուխը կախ, ախուր անցնում եր:

— Սարգիս, կարելի չե՞ փող ե հարկավոր. արի՛ տամ, տունդ վերջացրու, — ասում եր Սանդրոն և հեգնալով ժպտում:

Հաստափոր Մարտիրոսն ել մյուս կողմից եր ձեռք առնում:

— Սարգիս, բա ասում ելիր՝ ել հարուստ-աղքատ չկա: Բա ինչո՞ւ տունդ չես շինում. ախր կիսատ ե մնացել:

— Ամբողջ աշխարհի տունն ե կիսատ մնացել. մենակ իմը հո

չի: Սպասե՛ք, տունը վերջացնելու ժամանակն ել կգա: Մի առավոյ վոր ջուր ե գնացել, ելի կգա:

ՀԱՐՅԵՐ

— Յե՛րք սկսվեց Փետրվարյան հեղափոխութեանը:

— Աշխատավորութեան սպասարկներն արդարացին: Փետրվարյան հեղափոխութեանից վեր դասակարգերն ուղղվեցին:

— Ի՞նչ մտքով ե ասված «կիսատ տունը»:

— Գյուղի վեր շերտերի ներկայացուցիչն ե Սարգիսը:

— Փետրվարյան հեղափոխութեան վեր որերին ե վերաբերում առաջին հատվածը. վորին՝ չե՞րք վերադառնալիս:

— Ի՞նչ ե ուզում ասել Սարգիսը, թե՛ «մի առավոյ վոր ջուր ե գնացել, ելի կգա»:

— Յե՛րք վերջացրեց Սարգիսն իր տունը:

ԲԱՌԵՐ

Հուն—գեաի փոսը, վորով ջուրն ե հոսում. արխ:

Վաշխառու—վոր փողը շատ բարձր տեղում ե փոխ տալիս:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Լրացրու քեզանից «Կիսատ տունը» հողվածի շարունակութեանը և գրի՛ր տետրակիդ մեջ:

1. Գրելուց առաջ կազմիր ծրագիր, թե՛ առաջ ինչի՞ մասին պետք ե գրես, հետո՞ ինչի:
2. Գրի՛ր կարճ խոսքերով՝ մի քանի բառից բաղկացած:
3. Ուշք դարձրու՛ կետադրութեան:

58. Մեծն Հոկտեմբեր

1917 թ. նոյեմբերի 7 (հին տոմարով՝ հոկտեմբերի 25)

Փետրվարյան հեղափոխութեանն աշխատավոր ժողովրդին հաղթեց իր ցանկացածը. հողն ու գործարանները մնացին հարուստներին ձեռքին: Պատերազմը շարունակվում եր: Աշխատավորութեան դրութեանը քանի գնում, վատանում եր: Գործարանները փակվում եին, բանվորները գործազուրկ մնում: Սով, թանկութեան:

Բանվորներն ու գյուղացիները տեսան, վոր ել եսպես աղբել չի լինի: Բայց ինչի՞նք բաց արին նրանց աչքերը: Հասկացրին, վոր միակ փրկութեանը՝ իշխանութեանը աշխատավորներին հանձնելն ե:

Ապստամբութեան տրամադրութիւնը հասունացել եր: Նոյեմբերի 7-ին բանվորներն ապստամբութիւնն սկսեցին: Բանակն ու աշխատավոր գյուղացիութիւնը միացան նրանց: Ժամանակավոր կառավարութիւնը տապալվեց: Իշխանութիւնն անցավ խորհուրդներին: Հեղափոխութիւնը վերջ տվեց պատերազմին: Հողը տվեց գյուղացիներին, գործարանները՝ բանվորներին:

ԲԱՌԵՐ

Տոմար—տարեհաշիվ:

Տապալել—ցած բցել:

ՀԱՐՑՆԵՐ

— Փետրվարյան հեղափոխութիւնը բուրժուազիային բան տվեց, թե՛ աշխատավոր ժողովրդին: Ինչո՞ւ:

— Ո՞ւմ շահերն եր պաշտպանում ժամանակավոր կառավարութիւնը:

— Ի՞նչպե՞ս սկսվեց հոկտեմբերյան հեղափոխութիւնը, վճիռ խափերի գործակցութեամբ և ի՞նչ կուսակցութեան ղեկավարութեամբ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրի մինչև 20 թիվը և մնացած թվերը բառերով շարունակիր գրել (10—20-ի նման).

մեկ	տասնմեկ	21	31
չերկու	տասներկու	22	42
չերեք	տասներեք	23	53
չորս	տասնչորս	24	64
հինգ	տասնհինգ	25	75
վեց	տասնվեց	26	86
յոթ	տասնյոթ	27	90 (իննսուն)
ութ	տասնութ	28	97
իննը	տասնինը	29	102
տաս	քսան	30	(չերեսուն)

59. Հոկտեմբերը գեղջուկին

Յես ձեզ կասեմ, թե ինչ տվեց
Հոկտեմբերը գեղջուկին,
են որերը թե ինչ տվին
տանջված, թշվառ խեղճուկին:

Մինչ եզ որը վիզը ծռած
գեղջուկը՝ խեղճ, կիսամեռ
աշխատում եր, գերի դառած՝
գարուն, ամառ ու ձմեռ:

Նա չուներ հող, նա չուներ արտ,
վոչ ել հանդիստ ու դադար,
տանջանք ուներ և միայն դարդ
ու չարչարանք անդադար:

Բայց ահա մեծ Հոկտեմբերը
նրանց կապերն արձակեց,
նրանց համար ազատութեան
վառ արշալույս ստեղծեց:

ԲԱՌԵՐ

Արշալույս—արևածագ:

Գեղջուկ—գյուղացի:

60. Հեղափոխությունը կատարվեց

(Լենինի հառից, Պետրոգրադի խորհրդում, 1917 թ.
հոկտեմբերի 26-ին)

Ընկերներ,

Բանվորական և գյուղացիական հեղափոխութիւնը կատարվեց:
Այսուհետև մենք ունենալու լենք մեր սեփական իշխանու-
թիւնը՝ առանց բուրժուազիայի մասնակցութեան—խորհրդային իշ-
խանութիւն:

Մեր հերթական խնդիրն է՝ վերջ տալ պատերազմին: Մենք
պետք է մեր հաշիվը կապիտալի հետ վերջացնենք:

Գյուղացիութեան մեծ մասն ապում է.—մենք բանվորների հետ
ենք: Գյուղացու հավատը մենք ձեռք կրերենք, լերը կոչնչացնենք
կալվածատերերի սեփականութիւնը:

Գործարաններում մենք կմտցնենք իսկական բանվորական հրա-
կողութիւն:

Մենք սովորեցինք կուռ և համբարաշխ գործել. որինակ — այս
հեղափոխութիւնը:

Մասսաների կազմակերպված ուժը մեր կողմն է:

Այդ ուժը կհաղթահարե ամեն ինչ և պրոլետարիատ/
դեպի համաշխարհային հեղափոխութիւնը:

Այժմ մենք պետք է սոցիալիստական պրոլետար
թիւն կազմակերպենք:

Կեցցե՛ համաշխարհային սոցիալիստական հե

ՀԱՐՑԵՐ

— Առաջ ո՞ւմ էր իշխանությունը. իսկ Փետրվարյան հեղափոխությունից հետո՞. իսկ Հոկտեմբերից հետո՞:
— Ի՞նչ հերթական խնդիրների մասին ե հիշված այստեղ:

ԲԱՌԵՐ

Հերթական խնդիր—խնդիր, վորի Համերաշխ—սիրով, միաբան:
Ժամանակն ե այժմ լուծել: Կուռ—ամուր, մետաղի պես ձուլված:
Կուռ ե համերաշխ—միասին, միացած:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմիր ե տետրումդ գրիր Հոկտեմբերի տոնակատարության լուսնագրեր:

61. Վլադիմիր Իլիչ Լենին

I

Վլադիմիր Իլիչ Ուլյանով-Լենինը ծնվել ե 1870 թ. Սիբիրսկ քաղաքում: Նրա հայրը ժողովրդական դպրոցների տեսուչ եր:



Լենինը միջնակարգ ուսումն ավարտեց 17 տարեկան հասակում: Լենինը թեև համալսարան մտավ, բայց աջատեղից շուտով արտաքսվեց՝ ուսանողական շարժման մասնակցելու համար: Միայն 4 տարուց հետո նրան հաջողվեց համալսարանում քննություն տալ:

II

1893 թվին Լենինը գնաց Պետերբուրգ (այժմ՝ Լենինգրադ) ե աջատեղ սկսեց աշխատել բանվորական գործի համար: Նա կազմակերպեց բանվորների

գաղտնի միություններ ե նրանց սովորեցնում եր Մարքսի ուսմունքը: Բայց շուտով Լենինին իր ընկերների հետ ձերբակալեցին ե մի տարուց ավելի բանտում պահելուց հետո՝ 1887 թվին աքսորեցին Սիբիր: Յերեք տարի Սիբիրում մնալուց հետո Լենինը գնաց արտասահման: Այստեղ նա սկսեց կազմակերպել բալշևիկների կուսակցությունը: 1905 թվին սկսվեց ուսական առաջին հեղափոխությունը, բայց գրնվորների ե գյուղացիների անգիտակից լինելու պատճառով չհաջողվեց:

Լենինն անընդհատ ղեկավարում եր բանվորական շարժումները: 1917 թվին կատարվեց փետրվարյան հեղափոխությունը: Թագավորը տապալվեց, բայց իշխանությունը մնաց բուրժուաների ե կապիտալիստների ձեռքը:

III

Լենինն այդ ժամանակ վերադարձավ արտասահմանից, անցավ բանվորական շարժման գլուխը ե ղեկավարեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը: Իշխանությունն անցավ խորհուրդների ձեռքը: Բանվորները, գյուղացիներն ու կարմիր բանակը միացյալ ուժերով ձեռք բերին իրենց ազատությունը Լենինի առաջնորդությամբ: Բայց չեղկարատե աշխատանքը ե կրած տանջանքները կարճեցին մեծ մարդու կյանքը: 1924 թվի հունվարի 21-ին Լենինն այլևս չկար:

ԲԱՌԵՐ

Արտաքսվեց—գուրս արվեց:

Տապալվեց—ընկավ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրիր քու համառոտ կենսագրությունը:

1. Գրելուց առաջ քու կյանքը շրջանների բաժանիր ե հաջորդաբար կապակցիր: Նոր շրջանին անցնելիս՝ սկսիր նոր տողից (տողի խորքից):
2. Գրելը պարզ, հասկանալի ե կարճ խոսքերով (միքանի բառից բաղկացած):
3. Յուրաքանչյուր ամբողջական խոսքից հետո դի՛ր վերջակետ. առհասարակ ուշադրություն դարձրո՛ւ կետադրության:

62. Իլիչը մեզ ոգևեց

(Մի գյուղացու պատմածը)

Մոտեցա Կրեմլի դռներին, ուր անցատոմս ելին տալիս: Ինձ չսպասեցրին. տոմսն ստացա ե մտա ժողկոմխորհի ընդունարանը: Դեռ չեյի ջոկջկել թղթերս, յերբ ինձ վերև հրավիրեցին: Ներս մտա: Իլիչն ինքը մոտեցավ ինձ, ձեռքս սեղմեց ե խընդրեց նստել:

— Դե ասա, ինչ նորություն կա գյուղում:

— Յես ասացի, վոր ուզում ենք ելեկտրական շինել և մեզ միանում են ուրիշ յերեք գյուղեր: Իլլիչն ուրախացած ասաց.—

— Յես ել ձեզ կոպենմ:

Իլլիչի շնորհիվ ստացա մոտոր և գինամո:

Մի տեսնելիք՝ ինչպես ուրախացան գյուղացիք, յերբ յես ձեռքը դատարկ գյուղ չմտա:

Այժմ չկա Իլլիչը: Բայց նա ապրում է մեր սրտում: Յեզ նրա հիշատակին մենք ժողովրդական տուն ենք կառուցել մեր գյուղում:


ՀԱՐՑԵՐ

Մոտոր—շարժիչ մեքենա:

Դինամո—ուժամեքենա:



Ստեփան Շահումյան



Համ. Կոմ. կուս. (բ)
գլխ. քարտ. ՍՍՍՀԻՆ

63. Ստեփան Շահումյան

Ստեփան Շահումյանը Բազմում յերկար ժամանակ աշխատելով սիրելի դարձավ Բազմի բոլոր բանվորներին: Նրա գոները միշտ բաց ելին կուսակցական և անկուսակցական բանվորների առաջ: Նա սիրված էր իր ընկերներից, նա մեծ հեղինակություն էր վայելում: Նրա մեծությունն առաջ գինաթափ ելին լինում նույնիսկ հակառակորդները: Պատմում են, վոր մենշևիկների մի խմբակ վորոշել էր սպանել Շահումյանին. խմբակի անդամներից մեկը ծանոթանում է Ստեփան Շահումյանի հետ ու գնում նրա հայերեն գրասխռության:

Գրասխռությունը լսելուց հետո նույն այդ մարդը յերգվեց իր կյանքը չխնայել Ստեփանի համար և մտավ կոմունիստական կուսակցության մեջ:

1918 թվին Շահումյանը Կովկասի արտակարգ կոմիսարի պաշտոնով ապրում էր 2 փոքրիկ սենյակներում: Յերբ նրան հարց տվին. «Ինչպես ես ապրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի ընդեկարող են փնտսել քեզ»,—նա հանգիստ պատասխանեց. «Այդ բանով յես չեմ հետաքրքրվում»:

Շահումյանը Կովկասի բանվորության ղեկավարն էր, և այսպես ել հեղափոխությունը անվանեց նրան:

Բազմի կոմունայի անկումից հետո Ստ. Շահումյանը գնդակահարվեց իր ընկերների հետ 1918 թ. սեպտ. 20-ին:

ԲԱՌԵՐ

Ղեկավար—առաջնորդ:

Արտակարգ—հատուկ,
կարևոր գործերով:

64. Լենինյան գորակոչը

Դահլիճում հավաքվել ելին բանվորները: Խոսում, վիճում ելին:

Սեղանի վրա դարսված ելին դիմումները, բանվորներն ուզում ելին կուսաշարքերը մտնել:

Ժողովը բացվեց:

Մոտեցավ մի բանվոր, գլխարկը հանեց ու ձեռքերի մեջ արդրելով սկսեց խոսել.—

— Դե իմ կյանքն եսպես է, ընկերներ: Մանկությունից աշխատել եմ գործարաններում...

— Կարմիր բանակում յեղե՞լ ես,—հարցրեց նախագահը:

— Այո,—Բազմում, Դիլիջանում...

— Դե վոր եղպես է—մերն է,—լավեց չորս կողմից:

— Քվեարկում եմ: Ո՞վ է դեմ:—Վոչվեք:

Մոտենում է մի բանվորուհի.

— Յես ի՞նչ ասեմ,—շփոթված խոսում է նա կարմրելով.—Իմ մասին կինբաժնից հարցրեք:

— Ընդունել, ընդունել. Սաթոն լավ է աշխատել,—գոռում են այս ու այն կողմից:

Մոտ յեկան յերկու ծերուկ.

— Մենք թեև ծեր ենք, բայց ծնվել ենք 17 թվին: Առաջ աշխարհից մենք բան չենք հասկացել: Մեր աչքերը Լենինն է բացել: Մենք ուզում ենք մտնել նրա կուսակցության շարքերը: Բուռն ծափերից թնդում ե դահլիճը: Ընդունվում են: Մոտենում ե պատանի Հրաչը: — Յես ել եմ ուզում մտնել կոմկուսի շարքերը: — Ես մեկը չեղավ, — ասում են անապատառ ժպտալով: — Քու տեղը կոմսոմոլն է: Ենտեղից պետք ե սկսես, սիրելի Հրաչիկ:

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ ե նշանակում՝ «մենք թեև ծեր ենք, բայց ծնվել ենք 17 թվին»:
— Ձեզ մոտ ինչպե՞ս արձագանքեցին Լենինյան զորակոչին:

ԲԱՌԵՐ

Բուռն — ուժեղ:

Դահլիճ — սրահ, մեծ սենյակ:

65. Ի՞նչպես կազմակերպվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց եսերների, մենշևիկների ու դաշնակների իշխանության: Նախկին Ռուսաստանի տեղ կազմակերպվեցին Խորհրդային հանրապետություններ:

Նրանք փոխադարձ կապ ունեյին, միասին կռվում էին բուրժուաների և կուլակների դեմ ու նոր կյանք կառուցում:

1922 թ. դեկտ. 30-ին Մոսկվայում, Խորհրդային բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների համագումարում վորոշվեց կազմել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն:

Սրա մեջ սկզբում մտան Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը (ՌՖՍՀ), Ուկրաինան (ՌՆՍՀ), Բելոռուսիան (ԲՆՍՀ) և Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետությունը, Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը:

ԲԱՌԵՐ

Ֆեդերատիվ — դաշնակից:

Կառուցել — շինել:



ԽՍՀՄ-ի Կենտրոնական
նախագահ՝ ԿՍԼԻՆԻՆ

Ծնվել է 1875 թ. չքավոր գյուղացու
ընտանիքում:
14 տ. հասակից բանվոր ե լեզեր:



ԽՍՀՄ-ի Ժողովուրդների
նախագահ՝ ՌԻԿՈՎ

Ծնվել է 1881 թ. չքավոր գյուղացու
ընտանիքում:
Աշակերտ ժամանակից մասնակցել է հեղափոխական աշխատանքներին:

66. Ամրացիր, Մեծ պետություն

Խորհրդային Միություն
գյուղացու և բանվորի,
ամրացիր ու տարածվիր
չորս կողմերը աշխարհի:

Ստրուկների մեծ պաշտպան
մեր Միությունն ե հզոր,
վորին անթիվ տանջվածներ
ապավինել են այսօր:

Խորհուրդները Միություն,
ուժ ու միտք տուր աշխարհին,
ամրացիր ու զորացիր,
դարձիր համաշխարհային:

ԲԱՌԵՐ

Ստրուկ — գերի:

Ապավինել — հույսը դնել:


Համաշխարհային — ամբողջ
աշխարհի:

67. Ա. Ս. Ֆ. Խ. Հ.

(Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային
Հանրապետություն)

Անդրկովկասում շատ ազգեր կան:

Ցարական կառավարությունը նրանց ճնշում և լարում եր մե-
կը մյուսի դեմ: Նրանք ինքնուրույն չեյին. Անդրկովկասը ցարա-
կան իշխանության գաղութն էր: Ցարի տապալումից հետո իշխանու-
թյունն անցավ դաշնականների, մենշևիկ-
ների ու մուսավաթականների ձեռքը:
Բայց աշխատավոր ժողովուրդը դարձյալ
ճնշված դրություն մեջ մնաց:



Իրավունք ստացան: Նրանք կազմեցին իրենց ինքնուրույն հանրա-
պետությունները:

ԲԱՌԵՐ

Ֆեդերատիվ—դաշնակից:
Լարել—գրգռել:
Գաղութ—կալոնիա, շահա-
գործելու չերկիր:

Պաշար—կռիվ:
Ինքնորոշում—իր սեփական բախ-
տը տնտրելու իրավունք:
Ինքնուրույն—սեփական:

ԱՌԱՋԱՂՈՒԹՅՈՒՆ

Լրիվ բառերով գրիր՝


Կենսագործկամ	ՌԽՍՀ
Ժողկոմխորհ	ՌԽՍՀ
Համ ԿԿ (բ)	ԱԽՍՀ
ԽՍՀՄ	

68. Խորհրդային իշխանությունը Հայաստանում

1920 թ. նոյեմբերի 29-ից առաջ Հայաստանում իշխում էին
դաշնականները:

Դաշնականների ժամանակ Լոռում և Ղազախում աշխատավորները
փորձել են խորհրդային կարգեր մտցնել, բայց դաշնականները ճնշե-
ին այդ փորձերը: Որինակ՝ դեռ 1919 թ. սկզբին Լոռում կազմվեց
գյուղացիական պատգամավորական խորհուրդ՝ խորհրդային իշխա-
նության լուրջնգներով:

1929 թ. վերջերին և 20 թ. սկզբներին, չերբ Լոռին չեղոք
դուրի չեր, ահաեղ բալլըիկների դեկավարությունը կազմակերպվեց
ինքնավարություն նույն սկզբունքներով:



Կասյան

Հայաստանի առաջին Հեղկոմի
նախագահ՝ ալժմ Հայաստանի
Կենտրոնական Նախագահ, ծնվել
և 1876 թ.:

Տեր-Գաբրիելյան

Հայաստանի առաջին Հեղկոմի
անդամ՝ ալժմ Հայաստանի Ժող-
կոմխորհի նախագահ, ծնվել և
1886 թ.:

1920 թ. մայիսյան դեպքերից հետո Ղազախում կազմվեց ռազ-
մա-հեղափոխական կոմիտե, վորը փոփոխակի հաշտություններով
տեկեց մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Դաշնականների իշխա-
նության որոք Հայաստանում միշտ ազգամիջյան կռիվներ եյին լի-
նում: Գյուղացիների տնտեսությունը քայքայվել եր: Հայաստանում
աշխատավորությունը կտրված եր Խորհրդային Ռուսաստանից:

1920 թ. մայիսին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները
կրկին ապստամբեցին դաշնականների դեմ: Բայց լավ չեյին կազմա-

կերպվել: Այդ պատճառով դաշնակիները ճնշեցին աշխատավորներին ապստամբութիւնը:

Նույն տարվա նոյեմբերին Հայաստանի աշխատավորները նորից ապստամբեցին: Այս անգամ նրանց ոգնութիւն հասավ Կարմիր բանակը: Դաշնակիները փախան. Հայաստանում հայտարարվեց խորհրդային իշխանութիւն:

Այն որից մինչև այժմ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կառավարում են իրենց յերկրը:

Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը մտնում է Անդր-կովկասյան Ֆեդերացիայի մեջ՝ վորպես դաշնակից յերկիր:

Անդրկովկասյան Խորհրդային Հանրապետութիւնը մտնում է Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւն մեջ՝ վորպես դաշնակից պետութիւն:

ԲԱՌԵՐ

Ազգամիջյան—տարբեր ազգերի մեջ:

69. Առաջին որդ

Ալեքս աչքը տնկել է դեպի Բանաքեռի խճուղու տնակը: Այնտեղից մթի մեջ պիտի յերևա բալլշէիկների ավտոմոբիլի լույսը: Բայց դեռ չի յերևում:

Մտքերը պաշարեցին Ալեքին.—

Տեսնես ինչ է մտածում քարի նման լուռ ու մունջ կապիտան Իվանյանը: Ձե՛ վոր նա սպանում էր թրով բալլշէիկների գլուխը թոցնել: Հիմա ինչ սրտով նա նույն թրով բալլշէիկների մեծին պիտի պատիւ բռնի:

Նույն ժամին գիշերվա ցրտին նույն այդ միտքն այրում էր կապիտան Իվանյանին, վոր պետք է բալլշէիկներին ընդուներ:

Տեսնես՝ ինչ են մտածում հիմա զինվորներն իր մասին: Նա զիտեր, վոր շատերն անհամբեր սպասում էին բալլշէիկների գալուն: Հիշեց՝ ինչպես թրով կոտորեց սպարապետների թռուցիկները: Հիշեց, թե ինչպես ինքն ու քաղաքի պարետը հայհույում էին ձերբակալված բալլշէիկներին... Հիշեց ու սարսուեց: Այժմ զինվորներն ինչպես են մտքներում ծիծաղում «ընկեր կապիտանի» վրա:

Ավտոմոբիլի ազդականչն սթափեցրեց Իվանյանին: Լուսարձակի շողերը սահեցին ժառերի յերեսով:

— Յեկան,— անցավ Իվանյանի գլխով մի սուր, ծակող միտք:

— Յեկան,— անցավ Ալեքի մտքով, ու սիրտը լցվեց ուրախութիւն հորձանքով:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ էր մտածում կապիտանը. ինչո՞ւ:
- Ի՞նչ էր մտածում Ալեքը: Հասարակական վճիռ շերտին է պատկանում նա:
- Յէրբ է կատարվել այս դեպքը. վճիռեղ:
- Ո՞վքեր էին սպարապետները:
- Ձեզ մոտ «հուշերի յերեկո» կազմակերպել են: Մասնակցել ես. ինչով:

ԲԱՌԵՐ

- | | |
|-------------------|-----------------------------|
| Խճուղի—շող: | Ձերբակալված—բռնված: |
| Տնակ—փոքրիկ տուն: | Ազդականչ—սիգնալ: |
| Սպանալ—ահ տալ: | Սթափեցրեց—ուշքի բերեց: |
| Պարետ—կոմենդանտ: | Լուսարձակ—պրոժեկտոր: |
| Հուշ—հիշողութիւն: | Հորձանք—ուժեղ հոսանք, ալիք: |

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Պատմիր քեզ պատահած, քու տեսած կամ ուրիշից լսած մի դեպք խորհրդայնացման առաջին որերից:
2. Գրիր այդ դեպքը կարճ խոսքերով տետրիդ մեջ:

70. Հայաստանն առաջ յեկ հիմա

Աւթ տարի առաջ մեր յերկիրը ծանր որեր էր ապրում: Ամեն տեղ սով էր տիրում:

Խանութները դատարկ էին:

Նավթ ու լուցկի չկար. մարդիկ նստում էին մութ տներում:

Սովը սաստկանում էր: Տիֆից և ուրիշ հիվանդութիւններից շատ էին մահանում:

Հայաստանը կտրված էր դրսի աշխարհից:

Հայ գյուղացիները, բանվորներն ու զինվորները լավ էին տեսնում, թե վերջն ինչ է լինելու, և մտածեցին ազատվելու մասին: 1920 թ. աշունն էր:

Հայաստանում հեղափոխութիւն տեղի ունեցավ. ազգային կառավարութիւնը հաղթվեց, և իշխանութիւնն անցավ խորհուրդների ձեռքը:

Վերջացավ հայի, թուրքի և վրացու թշնամութիւնը:

Տաճիկները չես քաշվեցին Ալեքսանդրապոլից: Հայաստանը
կապվեց Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հետ:

Հետզհետե վերացավ սովը: Ժողովուրդը կազդուրվեց և նվիր-
վեց շինարար աշխատանքի:

Հողը տրվեց աշխատավոր գյուղացիներին:

Գործարանները պետական սեփականություն դարձան: Բան-
վորի և գյուղացու աշխատանքը ել վոչվոք շահագործել չեւ կարող:

Սաղաղ աշխատանքի պտուղները մենք հիմա տեսնում ենք:

Բազմանում են դպրոցները, շատ գրքեր են տպվում:

Ջրանցքներ ու ճանապարհներ են շինվում:

Ավերված տները նորոգվում են ու նորերն են կառուցվում:

Աշխատավորների վիճակը բարելավվում է:

Ամեն տեղ ելեկտրականություն է անցկացվում, վորը բոլորո-
վին փոխելու չե մեր կյանքը:

Կույանտեսություններ են հիմնվում, արտելներ են կազմվում:

Խրճիթ-ընթերցարանները շատանում են:

Ամենախուլ անկյուններում մտնում է ուսուցիչ, կինոն:

ԲԱՌԵՐ

Փնջոտի — պատառոտած շոր, քուրջ:

Կազդուրվեց — առողջացավ, ուժեղացավ:

Բազմանում — շատանում:

Կառուցվում — շինվում:

71. Նոր յերգ

— Սիրուն աղջիկ, մումս ես սիրում աշխարհում,
սավետական ես մեր սիրուն աշխարհում:

— Բաղբից եկած են աղին եմ չես սիրում,

կեպի դրած են աղին եմ չես սիրում,

աչքերը շող են աղին եմ չես սիրում,

մաշին քշող են աղին եմ չես սիրում:

— Ընչի համար դու չես սիրում են աղին,

բոլը սիրուն, տեսքը սիրուն են աղին,

հոնքը կիտած, բեղը սրած են աղին,

գլխին սև-սև փափախ դրած են աղին,

մաուզերը կողբից կախած են աղին,

մեր հանդերից հեռու փախած են աղին:

— Ընչի սիրեմ բեղերը ցից են աղին.

հոլը դնեմ աշխարհի ցեց են աղին,

մաուզերին ձեռքը դրած են աղին,

ըռանչարի շիվան ու լոց են աղին:

Յես են աղի լերգն եմ սիրում աշխարհում,

մաշին քշող ձեռքն եմ սիրում աշխարհում,

չես են աղի խելքն եմ սիրում աշխարհում,

սավետական ես մեր սիրուն աշխարհում:

72. Խորհրդային որեւքներ

1.

Ցարական որեւքները պաշտպանում էին հարուստների շահե-
րը: Նրանք ճնշում էին աշխատավոր գյուղացուն և բանվորին, իսկ
խորհրդային որեւքներն աշխատավորների շահերն են պաշտպանում:

Հազարի որեւքներով արգելվում է հողի մասնավոր սեփակա-
նությունը և վաճառքը: Խորհրդային լերկներում բոլոր հողերը
պատկանում են բանվորա-գյուղացիական իշխանության: Հողային
որեւքները բարձրացնում են գյուղացու տնտեսությունը և կուլակ-
ներից պաշտպանում աչն:

2.

Խորհրդային որեւքները լավացրին կնոջ դրությունը: Հին ժա-
մանակ կինն իր մարդու ստրուկն էր. նրա անունը գրվում էր
մարդու անցագրի մեջ: Կինն իրավունք չուներ թողնել մարդուն,
ինչքան ել դժվար լիներ նրա հետ ապրելը:

Խորհրդային որեւքները հավասարեցրին կնոջ ու աղամարդու
իրավունքները. նոր ընտանիքն ազատ է. մարդ ու կին հավասար
իրավունքներ ունեն: Խորհրդային իրավունքները պաշտպանում են
նույնպես լերեխանների շահերը:

3.

Խորհրդային որեւքներն ազատագրեցին բանվորի աշխատանքը
քաղաքներում և բաւրակիւնը՝ գյուղում: Այդ որեւքները խախտո-
ղները դատի չեն կանչվում:

Խորհրդային իշխանությունը պայքարում է աչն հանցանքների
դեմ, վոր պատահում են խորհուրդներում, կոոպերատիվներում և
այլ հիմնարկներում: Բաց աչդ պայքարն ավելի ուժեղ կլինի, չեթե
ամեն մի աշխատավոր ունի խորհրդային իշխանությունը:

73. Խորհրդային դատարան

Յարի ժամանակ դատավոր կարող ելին լինել միայն նրանք, վոր 6000 - 15,000 ու հող կամ տներ ունեյին:

Մեր որենքներով դատավորին պետք է ընտրեն աշխատավորները: Աշխատավոր կինն ել տղամարդու պես կարող է դատավոր և ժողատենակալ լինել:

Խորհրդային դատարանը մի դպրոց է, ուր բանվորն ու գյուղացին սովորում են հարգել Խորհրդային որենքները:

Բանվոր ու գյուղացի ժողատենակայինքը դատարանում սովորում են յերկիր կառավարելու գործը:

Ամեն մի շրջգործկոմում և գյուղխորհրդում կան որենքների ժողովածուներ և պետական գեկրետներ ու կարգադրություններ:

Բանվորին ու գյուղացուն ոգնելու համար քաղաքների ժողդատարաններին, քաղխորհուրդներին, գյուղացու տներին կից հիմնվում են Խորհրդատու մարմիններ: Այնտեղ ամեն մի բանվոր ու գյուղացի կարող է ստանալ տեղեկանք-բացատրություն, Խորհուրդ:

ԲԱՌԵՐ

Ժողատենակալ — միության անգամներին ընտրված դատավոր: Դեկրետ — կառավարության կողմից ճշգրտված դատավոր: Զրջանային գործադիր կոմիտե: Զրատարակված հրոման, կարգադրություն:

74. Ընտրական իրավունք

1.

Մեր յերկրում ձայնի իրավունքից զրկված է նա, ով շահագործում է վարձու աշխատանքը, որինակ՝ մասնավոր գործարանների և արհեստանոցների տերը, վոր ունի վարձու բանվորներ, կապալառուն և այլն:

Ձայնազուրկ է նաև նա, ով ապրում է փողի տոկոսով, կալվածների յեկամուտով և այլն:

Ձայնի իրավունք չունեն նաև մասնավոր վաճառականները, հողեկորականները, նախկին կալվածատերերը, ցարական վոստրիկանները, հողեկան հիվանդները, գողերը, ավազակները:

2.

Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն.

- 1) յերկու սեռի բանվորներն ու ծառայողները.
- 2) այն գյուղացիները, վորոնք շահ ստանալու նպատակով վարձու աշխատանք չեն ոգտագործում.
- 3) Կարմիր բանակայինները:
- 4) Ընտրական իրավունք ունեն նաև բանվորների ու ծառայողների կանայք, այլ և այն ծառայողները, գյուղացիք և կարմիր բանակայինները, վոր կորցրել են իրենց աշխատունակությունը: Ձայնի իրավունք ունեցողը 18 տարին լրացած պետք է լինի:

ԲԱՌԵՐ

Կապալառու — փողաթիշի:

Աշխատունակություն — աշխատելու կարողություն, ընդունակություն:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արտագրել և լրացրու.

ՄԵԿ (ՅԵԶԱԿԻ)	ՇԱՏ (ՀՈԳՆԱԿԻ)
Վաճառական	Վաճառականներ
Գող	Գողեր
Արհեստանոց . .	Արհեստանոցներ .
Սեղան	
Աթոռ	
Գիրք	
Դասագիրք . . .	
Տուն	
Մանկատուն . .	

Տես՝ վերտեղ և հոգնակիին «եր» ավելանում, վորտեղ՝ «ներ»:

«Մե» է ավելանում միավանկ բառերին (բացի դառ, մատ, վոտ, ձեռ և միքանի ուրիշ բառերից): Այն բարդ բառերին (յերկու բառից կազմված), վորոնց վերջին բառը «եր»-ով է հոգնակի դառնում:

75. Կարմիր բանակի կազմն ու խնդիրները

1. Կարմիր բանակը բաղկացած է բանվորներից և այն աշխատավոր գյուղացիներից, վոր չեն շահագործում ուրիշի աշխատանքը:
 2. Ձինվորական հասակ ունեցող անհարազատ տարրերը կանչվում են բանակ ոժանդակ աշխատանքների համար՝ առանց զենք կրելու իրավունքի:
 3. Կարմիր բանակը զինված մի ուժ է: Նրա նպատակն է խ. Ֆ. Մ. անկախութունը և ազատութունը պաշտպանել:
 4. Կարմիր բանակի մյուս նպատակն է՝ պաշտպանել բանվորների և գյուղացիների խաղաղ կյանքը և շինարար աշխատանքը:
 5. Յուրաքանչյուր կարմիր-բանակային պիտի հիշի, վոր հաշտութունն ու հաղթանակը ձեռք են բերվում կարմիր զինվորների փոխադարձ ոգնությամբ և համերաշխությամբ:
- Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի:
6. Մինչև այժմ վոչ մի բանակ չի ունեցել այնպիսի բարձր նպատակ, վորպիսին ունի մեր Կարմիր բանակը: Այդ նպատակն է՝ պաշտպանել ԽՍՀՄ և ոգնել ամբողջ աշխարհի բանվոր և աշխատավոր գյուղացիների ազատագրման գործին:

ԲԱՌԵՐ

Խնդիրներ—նպատակներ: Համերաշխ—հաշտ, սիրով:
Բաղկացած է—կազմված է: Ոժանդակ—վոչ գլխավոր, ոգնող:
Անհարազատ—ոտար, խորթ:

76. Կարմիր սատոր

Մուրճին, մաճին սովոր ձեռքով հիմա հրացանն էս բռնել:
Մեծ Միության համար փառքով չես միշտ պատրաստ եմ մեռնել:
Հողի, հանքի ու մաշինի ուժն է կիտված իմ ձեռքում.
մենք լեզրայրներ, քուլրեր ունենք ամբողջ անծալը աշխարհքում:
Աչերն հառած՝ գեղշուկ, բանվոր նայում են մեզ անհամբեր՝

հեռու հեռվից տեսնել մի որ ճակատս ասողը լուսաբեր:
Ու պիտ փայլի վողջ աշխարհքում լուսաստղը հինգ-թեմանի.
մուրճին, մաճին սովոր ձեռքում կյանքի ղեկը պիտ լինի:
Հառա՛ջ, վերջին անգ կռիվին գուրս գանք խիզախ, անտրտում,
թող ասողը ալ բոցով վառվի մեր ճակատին, մեր սրտում:

ՀԱՐՑԵՐ

- ՄՎ և Կարմիր բանակայինը (առաջին լեզու աներից):
- Ովքեր են սպասում «թշնամի» լեզվներում նրան (3-րդ տունը).
- Ինչո՞ւ (4-րդ տունը):
- Վերն է «վերջին անգ կռիվը»:

ԲԱՌԵՐ

Հառել—անթարթ մի կեսի նայել: Դեկ—ոտու, վորով ուղղութուն են լուսաբեր—լույս բերող: ասլիս (նավին, ավտոմոբիլին և այլն):
Լուսաստղ—առավոտյան աստղը, վոր արեհից առաջ է ծագում:

77. Ռազմական անկյուն

Մովսեսը բանակից տուն էր դարձել: Նա գյուղում կազմակերպեց ռազմական անկյուն: Գյուղացիք այնտեղ սովորում էին նշան խփել, թունավոր գազերից պաշտպանվել և վիրավորներին առաջին ոգնութունը ցույց տալ:
Հասավ Կարմիր բանակի տարեգարձի որը—փետրվարի 23-ը: Յերեկույան Մովսեսը վերցրեց 2 հրացան և հինգ կոտորակ արձակելու գործիք և գնաց դպրոց:
Ամբողջ գյուղն այնտեղ էր: Գյուղացիները վսրոշեցին կազմակերպել ռազմական անկյուն, Մովսեսին էլ ընտրեցին ղեկավար:
Հենց հետեյալ առավոտը Մովսեսն սկսեց իր դորձը:
Հարմար տեղ ընտրեց, նշաններ դրեց: Վողջ գյուղը հավաքվեց: Նշան էլին խփում և՛ հին կարմիր-բանակայինները, և՛ նախակույրիները, և՛ կոմսոմոլը:
Առաջին մրցանակը տարավ կոմյերիտուհի Նազիկը:
Բոլորը խոսք տվին, վոր նշան խփել սովորեն:

ԲԱՌԵՐ

Կոտորակ—սեչմա: Մրցանակ—պրիզ:

78. Կարմիր բանակային Միմոնի նամակը

Ապի ջան,

Ժամանակ չի լինում, վոր շուտ-շուտ նամակ գրեմ: Ինձ համար մեծ պարծանք է, վոր կարմիր-բանակային եմ: Այնպես եմ սովորել, վոր ել չեմ ուզում գլուղ գալ:

Ապի ջան, յես ինձանից զարմացել եմ. ժողովում աջնպես եմ առանց կապվելու ճառ ասում, վոր չես ասի, թե ես եմ Միմոնն է:

Մի ուրախութիւնն էլ, ապի ջան,—կուսակցութեան մեջ եմ մտել: Հիմա ավելի յեմ կարդում, վոր իմանամ, թե աշխարհում ինչ է անցնում-դառնում:

Մի ուրախութիւնն էլ աջն է, վոր իմացա՝ դու կոնկրետի տընտեսութեան մեջ ես: Ընկերներին առաջ պարծենում եմ, թե ապիս ել սոցիալիզմի համար ե կռվում:

Գարնանը արձակուրդ կգամ:

Բարևներ ազուն, յերեխաներին:

Կարմիր-բանակային
Միմոն:

Առաջին գունդ.

79. Ճիշտ նշանը

Կարմիր-բանակայինները վիճում ելին.

— Ով գիրք բռնել չի կարող, նա հրացան ել բռնել չի կարող,—պնդում եր Փիլոսոֆներ:

— Ի՞նչ կապ ունի գիրքը հրացանի հետ,—ասում եր Վարդանը:—Յես շատերին գիտեմ, վոր կարդալ չեն սովորել, բայց լավ նշան են բռնում: Ա՛յ, որինակ՝ ցարական բանակի զինվորները, Նրանք անգրագետ ելին: Ո՞վ եր նրանց ուսման մասին մտածում: Բայց շատ լավ հրացանաձիգներ կային մեջները:

— Չէ, սիրելիս, նրանք սխալ ելին նշան բռնում,—ժպտալով պատասխանեց Փիլոսոֆներ:—Ա՛յ, մեկը հենց յես: Յես ել սպիտակ բանակում յեղել եմ: Պահակ ելի: Կարծում ելի, թե իմ տեղումն եմ: Սպաներից մեկն ուզում եր ինձ իր մոտ սպասակ տանել: Տարափ: Կարդալ սովորեցրեց: Արդեն ազատ կարդում հասկանում ելի: Մի որ ել ձեռքս ընկավ «Կարմիր մարտիկ» թերթը, վոր կարմիրներն ելին թողել: Թաքուն կարդացի: Կարդացի ու գլխի ընկա, վոր յես մինչև եդ որը սխալ եմ նշան բռնել: Յես հրացանը չեմ ուղղել աջն կողմը, ուր հարկավոր եր: Պետք եր մեր իսկական թշնամիները՝ սպիտակների դեմն սղղել: Աչքս բացվեց: Ամեն ինչ հասկացա: Հասկացա ու մի որ ել փախա անցա կարմիրների կողմը: Հիմա արդեն յես նշանը ճիշտ եմ բռնում: Վա՛յ նրանց, վոր կընկնեն իմ նշանի տակ:

ԲԱՌԵՐ

Առարկել—մի բանի դեմ խոսել,
համաձայն չլինել:
Հրացանաձիգ—հրացան կրակող,
նշան խփող:

Սպասակ—դենշիկ, սպաներին
ծառայող հասարակ զինվոր:
Սպա—սֆիցեր:

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ ոգուտ ունի գրագիտութիւնը զինվորի համար:
— Ի՞նչ մաքուր է ասված «սխալ եմ նշան բռնել»:

Ուրիշ մտքով ասված բառը, խոսքը կամ պատմութիւնը կոչվում է փոխաբերություն: Փոխաբերութիւնն են որինակ՝ Բար սիւրճ մեծ գլուխ և այլն: Փոխաբերութիւնն են շատ հեքիաթներ, առակներ, լեգենդներ (հիշիր «Անիծած հարսը»):

Պատմիր մի փոխաբերական պատմութիւն և հետո գրի առ տետրակումդ:

80. Չապայեկ

Չապակը չքավոր գլուղացու վորդի յեր: Ցարական բանակում հասարակ զինվոր եր: Կարմիր բանակում դարձավ զինվորային պետ: Նա խիզախ հրամանատար եր: Անսահման վստահութիւնն եր վայելում: Հենց վոր յերևում եր շղթայում, կարմիր-բանակայիններն ասում ելին.

— Չապակն է. կհաղթենք:

Ու համարձակ առաջ ելին նետվում:

Չապակը սիրված եր զինվորների կողմից: Նրանց հետ ուտում, քնում, զրուցում, նրանց հետ կովի ամենավտանգավոր տեղումն եր: Հերոսի պես եր կռվում:

Աշնան մռայլ մի որ եր: Կարմիրները շրջապատված ելին: Չապակը մի բուռն քաջերի հետ պաշտպանված եր Ռւրալ գետի ափին:

Փամփուռները վերջանում են: Սպիտակները հետգհետե մոտենում: Ընկնում են կարմիրները մեկը մյուսի յետևից: Չապակը դեռ դիմադրում է՝ մի ձեռքին հրացան, մյուսին՝ ատրճանակ:

Չորս կողմը դիակներ, վիրավորների հառաչներ: Չապակը կանգնել է գետի ափին ու կրակում է: Մի ձեռքը վիրավորվեց: Մյուս ձեռքով սրբում է արյունը ու շարունակում է կրակել:

Մնաց վերջին փամփուռը:

— Վերջապես հիմա նա մեր ձեռքը կընկնի,—ուրախացան սպիտակները:

Բայց դժււր, նա չուղեց կենդանի ընկնել թշնամու ձեռքը: Վերջին փամփուռը կրակեց իր կրծքին և նետվեց գետը:

Պղտոր ալիքները կռւ տվին նրա մարմինը:

ԲԱՌԵՐ

Զքովոր — աղքատ:
Դիվիզիա — դորամաս:
Խիզախ — համարձակ, քաջ:
Հրամանատար — կամանդիր:

Անսահման վստահություն եր վայել-
լում — նրան շատ ելին վստա-
հում — հավատում:
Փամփուշտ — պատրոն:
Շղթա (դորքի) — շարք (զինվորների):

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Յեթև մասնակցել տեսել կամ լսել ես, քաղաքացիական պատերազմ-
ներից համառոտ պատմիր մի դեպք, հետո գրի առ տևորակումդ:

81. ԿԻՄ

(Յերիսասարգական Կոմունիստական Ինստիտուտում)

1917 թվին մեզ մոտ առաջ չեկան չեղիտադարդ բանվորների
կազմակերպություններ: Նրանք հարեցին կոմունիստական կուսակ-
ցության:

Այդ կազմակերպությունները կոչվեցին Կոմունիստական Յերի-
տասարգական Միություն (Կոմյերիտմիություն):

Կոմյերիտմիությունը մասնակցեց Հոկտեմբերյան հեղափո-
խության:

Քաղաքացիական կռիվներից հետո Կոմյերիտմիությունը դոր-
ծում է անտեսական և կուլտուրական ֆրոնտում:

Լենինյան Կոմյերիտմիությունը (ԼԿՅԵՄ) փոխանորդն է կոմու-
նիստական կուսակցության:

Բոլոր չեղիվների Կոմյերիտմիությունները միացած են Յերիտ-
Կոմունիստական Ինտերնացիոնալի (ԿԻՄ) մեջ:

ԿԻՄ-ի հիմնադիրն է Կարլ Լիբկնեխտը:

Կիմը Կոմինտերնի ղեկավարությունը կռիվ է մղում կապիտա-
լիստների դեմ:

82. Կոմսոմոլը բաց արեց իմ աչքերը

(Կոմյերիտի նամակից)

Ծնողներիցս զրկվել եմ դեռ 1915 թվին: Սարսափելի որեր
եմ անցկացրել: Սոված-ծարավ թափառում էի սրահնրա դուռը:
Հետո ընկա վորբանոց: 20 թվին Գանձակից տեղափոխվեցի Հա-
յաստան:

Այս 8—9 տարվա ընթացքում մասնակցել եմ կոմսոմոլի աշ-
խատանքներին: Անձամբ զգացել եմ, թե ինչ մեծ ոգնություն է
ցույց տվել կոմսոմոլը կուսակցությանը, չեղիվի շինարարությանը:
Քանի ինձ նման աղջիկների աչքերը բաց է արել կոմսոմոլը:

Այժմ չես աշխատում եմ «Արարատ» գործարանում: Մեր պե-

տությունն ամեն կերպ աշխատում է մեզ համար տանելի պայման-
ներ ստեղծել: Հնարավորություն է տվել նաև սովորելու: Հաճա-
խում եմ բանվորական համալսարան:

Վարդանուհի Պետրոսյան

83. Իմ կյանքից

(Մի բաժնակի նամակից)

Ծնվել եմ բաղրակի ընտանիքում: Հայրս աղքատ դուռնացի է
չեղել: Ամբողջ կյանքն անց է կացրել սրան-նրան մշակություն աշ-
նելով: Մեռել է՝ առանց մի լավ որ տեսնելու կյանքում:

Յես ել խեղճ ու կրակ բաղրակ կնիսի, չեթե չգար խորհրդ-
դալին իշխանությունը և ինձ նմաններին չազատեր աղաների
ձանկերից:

Կոմյերիտմիության շարքերը մտա: Այնտեղ միայն հասկացա,
թե ինչ պետք է անեն ինձ նմանները, վոր ել անտեր չմնան:

Խաղելինս ինձ որ ու գիշեր աշխատեցնում եր, ծեծում, հաշ-
հոյում: Մեր միությունը միջամտեց, պայման կապեց խաղելինիս
հետ: Այժմ նա ինձ ութ ժամից ավելի չի կարող աշխատեցնել, —
աչքերս բացվել են: Աշխատավարձս ել ժամանակին է վճարում:

Լիկկայանն ել ավարտեցի: Աշխատանքից հետո զնում ելի դա-
սերիս:

Առաջ անդրադետ ելի, հիմա՝ գիտակից և գրադետ կոմյերիտական:

84. Գյուլիսանդա

«Պարսկուհի, աչքերդ նշի ձև են,

սաթի պես բիրերդ սե...»

Գյուլիսանդա, չարսավդ սե սաթին է,
ամպի պես պատել է քեզ:

— Այսպես են չեղել քեզ, պարսկուհի,
աֆիոնով հարբած Բրանում:

Բայց ուր է Բրանը քո հիմա,

դու ապրում ես ուրիշ մի չեղիվում:

Հիմա դու ԿԻՄ ունիս դոշիդ,

Գյուլիսանդա, ջահել կոմսոմոլկա:

Դու ցրել ես դարերի փոշին,

քեզ վրա ել չարսավ չկա:

Բայց դու գիտե՞ս՝ սերունդներ մեռան

թաղիքի ու խաների հյու,

ու նրանց շիրիմների վրա

նորարաց մի լավա չես դու:

Նուշ—բազմ:

Սաթ—քահուրար:

Բիբ—աչքի վոսպր:

Իրան—Պարսկաստան:

Աֆիոն—հարեցնող, թմրեցնող

բույս (խաշխաշի սկես):

Թաջիր—վաճառական:

Հյու—հնազանդ:

Շիրիմ—գերեզման:

Հալա—պուռ, խաշխաշի կարմիր
ծաղիկ:

85. Կոմունիստական Ինտերնացիոնալ

(Կոմիսերն)

Բուրժուական յերկրներումն ել կոմունիստական կուսակցու-
թյուններ կան:

Այդ կուսակցութիւնները զեռ թուլ են: Նրանք մեր փորձից
են սովորում, թե ինչպես պետք է կռիւ:

Բոլոր յերկրների կոմունիստական կուսակցութիւնները մի
միութիւն են կազմում: Այդ միութիւնը կոչվում է՝ Յերբորդ Կո-
մունիստական Ինտերնացիոնալ (Կոմինտերն):

Կոմինտերնը հիմնվեց 1919 թ. Մոսկվայում՝ Լենինի ղեկավա-
րութեամբ:

Կոմինտերնի մեջ միացած են 48 յերկրների կոմունիստական
կուսակցութիւններ:

Կոմինտերնը կռիւում է կապիտալիզմի դեմ:

Կոմինտերնը ղեկավարում է ճնշված ժողովուրդների կռիւը
կապիտալիստների դեմ:

Կոմինտերնը ձգտում է ազատել ամբողջ աշխատավոր մարդ-
կութիւնը:

Կոմինտերնը համաշխարհային հեղափոխութեան շտաբն է:

Կոմինտերնի լոգունդն է. —

Պրպատարներ բոլոր յերկրների և

բոլոր ճնշված ժողովուրդներ, միացե՛ք:

86. Ինտերնացիոնալ

Յեկիր, ում կյանքը անիծել է,
ով ճորտ է, մերկ է և ստրուկ,
արգեն վառվում են մեր սրտերը,
արգեն կռիւ յենք մենք ձգտում:

Սա յե մեր վերջին կռիւը
և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը
աշխարհը կփրկէ:

Այս հին աշխարհը կքանդենք մենք

մինչև հիմքերը և հետո

մեր նոր աշխարհը կշինենք

մենք, ուր վոշ ստրուկ կա, վոշ զժգոհ:

Սա յե մեր վերջին կռիւը... (կրկնել):

Վոշվոք չի տա մեղ ազատութիւն—

վոշ խենթ հերոսը, վոշ արքան.

մենք պետք է մեր ազատութիւնը

խլենք մեր ձեռքով սեփական:

Սա յե մեր վերջին կռիւը... (կրկնել):

ԲԱՌԵՐ

Ճորտ—ղու:

Ստրուկ—գերի:

Պայքար—կռիւ:

Հերոս—մի ուժեղ մարդ:

Արքա—թագավոր:

87. Բանվորական որորը

Մի լար, վորդիս, վոր չես լսում
եւ մայրական քաղցր որոր.

յես մեծ կռիւ յերգն եմ հշուտում
որոցքիդ մոտ ամեն որ:

Դու լսում ես—աջնտեղ՝ դրսում
շաշ ու շառաշ, լաց ու կոծ.—

մեր արշունն է աջնտեղ հոսում՝
ներկած և՛ տուն, և՛ փողոց:

Աջնտեղ գնդեր խառն ու ցրելի,
բանվոր գնդեր ահարկու

քաջ մղում են մի մեծ կռիւ—
աշխատանքի և վոսկու:

Աջնտեղ հայրեր, աջնտեղ վորդիք
մի նոր կյանքի յեղբրբում

վորպես մի մի հերոս մարտիկ
մահն են գրկում ու յերգում...

Մի լար, վորդիս, վոր չես լսում
եւ մայրական քաղցր որոր.

յես մեծ կռիւ յերգն եմ յերգում
որոցքիդ մոտ ամեն որ:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ «մեծ կովի» մասին և սոված ախտի: Վեր դասակարգն և «վոսկո» կողմը, վերը՝ «աշխատանքի»:
- «Աշխատող դրամ»-ը վեր լերկրներին և վերաբերում ունի:
- Հիմա ի՞նչ և խառն ու ցրիվ գնդերը՝ դեկավարում:

ԲԱՌԵՐ

- Շաշ ու շառաշ—չերկաթի (սրի) ձայն: Յեզերք—ափ:
- Ահարկու—տե՛ս ազդող, ուժեղ: Մարտիկ—կովող, գինձոր:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս վոտանավորը բանավոր արձակի վերածիր (արձակի վերածելու կանոնները տես էջ 91):

88. ՄՈՊՐ

Հոկտեմբերը հրահրեց բուրժուական լերկրների աշխատավոր-ների ազատութան ձգտումները: Ամեն տեղ աշխատավորութունն ուղղում և հոկտեմբերն իրագործել:

Կալվածատերերն ու կապիտալիստներն ուժեղացրել են ճնշումն ու հալածանքը: Նրանք բանտարկում, աքսորում և գնդակահարում են հեղափոխական աշխատավորներին:

Մենք չենք կարող անտարբեր նայել, վոր մեր լեղբայրներին տանջեն: Մենք պարտավոր ենք ոգնել հեղափոխական մարտիկնե-րին: Մենք պարտավոր ենք աջակցել, վոր համաշխարհային Հոկ-տեմբերը շուտ գա և ազատե բոլոր ճնշվածներին:

ՄՈՊՐ-ը (հեղափոխական մարտիկներին ոգնող միջազգային կազ-մակերպություն) ոգնում և կապիտալիստի և կալվածատիրոջ լծի դեմ կռվողներին, հալածվածներին, բանտերում տանջվողներին և նրանց ընտանիքներին:

Մտեք ՄՈՊՐ-ի շարքերը:

ԲԱՌԵՐ

- Հրահրեց—բորբոքեց: Մարտիկ—կովող, գինձոր:
- Իրագործել—իրականացնել: Աջակցել—ոգնել:
- Անտարբեր—սառնասիրտ, անհոգ:

89. Թշնամիները

Կռիվը վերջացավ: Դաշտում ընկած ելին սպանվածների կույ-տեր, մարդկանց և ձիերի դիակներ: Այդ կույտերի միջից լսվում ելին վիրավորների հառաչանքները:

Մի չորացած առվի լեղերքին պառկած ելին լերկու գինձոր, լերկուսն էլ ծանր վիրավոր:

Նրանց գգեստները տարբեր ելին: Միքանի ժամ առաջ դեռ վատագի թշնամիներ ելին:

Այժմ լուռ նայում ելին իրար և ուզում ելին խոսել: Բայց իրար լեզու չելին հասկանում: Հանկարծ ավելի լերկատասարդը սո-ղեսող մոտեցավ «թշնամուն» և մեկնեց նրան իր ջրի սրվակը: Հե-տո լեղ աշխատում եր թաշկինակով կարել նրա վերքից հոսող ար-յունը: Բայց վոչինչ դուրս չեկավ. միայն ինքն ավելի թուլացավ, պառկեց, քուն մտավ:

Վրա հասավ պարզկա գիշերը: Յուրա քամին փչում եր հեռա-վոր լեռներից:

Կեռքիշերին տարիքավոր գինձորը կրկին մի փորձ արավ նստե-լու, բայց իզուր, արդեն բոլորովին արյունաքամ եր լեղել:

Աչքը գցեց իր հարևանի վրա: Յերկատասարդ գինձորը քնած եր և կուչ եր լեղել գիշերվա կարող ցրտից:

— Պիտի սառչի, — անցավ հասակավորի մտքով. — անպատճառ պիտի սառչի խեղճը. ինչքան էլ լերկատասարդ և:

Յերբ արշալույսի դեմ վիրավորներին հավաքող խումբը մոտե-ցավ նրանց, լերկատասարդը դարձնեց, ուզեց բարձրանալ ու զար-մացավ, վեր իր վրա մի վերարկու կար գցած:

Շայեց շուրջը, նայեց հարևանին: Հարևանը մեռած եր և պառ-կած առանց վերարկուի. նրա վերարկուն եր իր վրա:

ԲԱՌԵՐ

- Կուլա—գիղ: Սրվակ—շիշ:
- Զգեստ—հագուստ: Արշալույս—արևածագ:

90. Մայիս-մեկը

1886 թ. մայիսի մեկին Զիկագուի բանվորները գործադուլ արին:

Զիկագոն Ամերիկայի մեծ բաղաճներից և:

Բանվորները պահանջում ելին 8-ժամյա բանվորական օր:

Այդ գործադուլը շուտով ծավալվեց Ամերիկայում:

Սակայն գործադուլը հաջողություն չունեցավ. բուրժուազիան դաժան կերպով ճնշեց աչն: Տասնյակներով բանվորներ սպանվեցին: Ղեկավարներին բռնեցին և պատժեցին:

Յերկու տարի հետո Ամերիկայի բանվորները վորոշեցին՝ մայիս-մեկը համարել ամբողջ աշխարհի բանվորների տոն:

Այսպես առաջ լեկավ մայիս-մեկի տոնը:

Այդ օրը ամբողջ աշխարհի բանվորները փողոց են դուրս գա-լիս, վոր բուրժուազիային ցույց տան իրենց ուժը:

Արտասանմանում բուրժուազիան հիմա չեւ կոխիւ եւ մզում մա-
չիս-մեկչան տոնակատարութեան դեմ:

Միայն Խորհրդային Միութեան մեջ եւ, վոր ազատ տոնում ենք
Մայիս-մեկը:

ԲԱՌԵՐ

Ծափալիկ—տարածվեց:

Դաժան—անսիրտ:

ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ լողունգներով են դուրս գալիս մայիսի մեկին՝ արտասանմա-
նում եւ մեզ մոտ:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմիր մայիս-մեկչան լողունգներ:

91. Բանվորական պատգամավորություն- ների խորհ. Միության մեջ

Կապիտալիստները չեն ուզում, վոր նրանց բանվորներն իմա-
նան ճշմարտութունը մեր Միութեան մասին: Յեթե իմանան—իրենց
չերկիրն եւ խորհրդային կղաւնա, — վախենում են կապիտալիստնե-
րը: Այդ պատճառով նրանք իրենց թերթերում միշտ ստեր են տա-
րածում մեր մասին:

Սակայն նրանք չեն կարող իրենց բանվորներին խաբել:

Յեւ անա բուրժուական չերկրների բանվորները գալիս են մեզ
մոտ ճշմարտութունը տեսնելու: Յեւ այդ ալցելութունները քանի
դնում, շատանում են:

Մեզ մոտ բանվորական պատգամավորութուններ են չեկել՝
Անգլիայից, Գերմանիայից, Բելգիայից, Շվեդիայից եւ այլն:

Այստեղ բանվորներն իրենց աչքերով տեսնում են, թե ինչպե-
սե ծաղկում մեր—սոցիալիստական անտեսութունը: Կապիտալիստ-
ներն ալլա նրանց խաբել չեն կարող:

Լի հուշերով նրանք վերագառնում են իրենց չերկրները:

Յեւ մեր սրինակը վարակիչ կլինի նրանց համար:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմիր ամբողջ դասագրքում մինչև հիմա քեզ պատահած անձա-
նութ բառերի բառարան:

Կրկնիր ուղղագրական վարժութունները: Դժվար գրվող բառերից
(գրքի վարժութունների մեջ հիշված) կազմիր նույն ձևով ուղղագրական
բառարան:

Մ	մ	յ	կ	կ	կ	Տ
տ	տ	Ս	ս	ս	Լ	Լ
Լ	Ք	ք	ք	Բ	բ	բ
Դ	դ	դ	Ը	ը	ը	ը
Պ	պ	պ	Ծ	ծ	ծ	Հ
Հ	Հ	Խ	խ	խ	Չ	Շ
Շ	Չ	Ղ	ղ	Ժ	ժ	ժ
Թ	թ	թ	Յ	յ	յ	Ջ
Ջ	ժ	ճ	Ռ	ռ	ռ	Փ
Փ	Ջ	Ճ	Ծ	Փ	Փ	Լ

Ի	ի	ի	ի	Ո	ո	ո
Ղ	ղ	ղ	Լ	ա	ա	ա
ա	ն	ն	ն	Ու	ու	ու
ու	ր	ր	ր	ր	գ	գ
գ	Յ	յ	յ	վ	վ	վ
Շ	շ	շ	ե	ե	ե	ե
1	1	2	2	3	3	4
4	5	5	6	6	7	7
8	8	9	9	0	0	0

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

ՆՈՐ ԿՑԱՆՔ ԿԱՌՈՒՅԵՆՔ

62

- | | |
|--------------------------------------|---------------------------------------|
| 1. Գիրքը — չ. չ. 44 | 10. Կորչի չաղրան — չ. չ. 57 |
| 2. Գիրքը — չ. չ. 44 | 11. Ապրի — տուր, մեռնի 58 |
| 3. Վարպետ Սաբոն 46 | — տուր — չ. չ. 58 |
| 4. Առաջ և հիմա * 47 | 12. Տերտերի արտասուքը 60 |
| 5. Մեր ախուժքը — չ. չ. 48 | — Լյուսի Թարգյուլ 60 |
| 6. «Շուստով» և «Արա- 50 | 13. Մի յեկեղեցու պատմու- 61 |
| բատ» — չ. չ. 50 | թյունը — ըստ Լեո-կամ- 61 |
| 7. Նամակ Դիլիջանի հան- 52 | սարի 61 |
| դստյան տնից — չ. չ. 52 | 14. Աստված, ծխախոտ և 63 |
| 8. Դալլաք Գրիգորը — Կ. Մ. 54 | ակոհոյ — ըստ Լեո-կամ- 63 |
| 9. Ուստա Պզուկը — Կ. Մ. 56 | սարի 63 |

ԲԱՐՁՐԱՅՆՆԵՔ ՄԵՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- | | |
|--|--|
| 15. Կոլեկտիվ աշխատանքը 65 | 26. Դա պղինձն է... — Մկ. 80 |
| — ըստ Մկրտիչ Արմենի 65 | Արմեն 80 |
| 16. Արտադրական հանձնա- 66 | 27. «Յեվրոպացին» — Մկ. 81 |
| ժողովի նիստը, I — ըստ 66 | Արմեն 81 |
| Մկ. Արմենի 66 | 28. Տեքստիլ ֆաբրիկում — 82 |
| 17. Արտադրական հանձնա- 67 | Այազան 82 |
| ժողովի նիստը, II — ըստ 67 | 29. Պատի թերթ՝ «Մանա- 84 |
| Մկ. Արմենի 67 | ծագործ» 84 |
| 18. Սլաքավար Զաքարը — * 69 | 30. Նավթաշխարհում — Կ. Մ. 86 |
| 19. Նոր բանվորը — ըստ Մկ. 70 | 31. Բալախանի — Ս. Զուլամ- 87 |
| Արմենի 70 | յան 87 |
| 20. Անիվի լեզը — Վահան 72 | 32. Բանգյուլթիթակիցների 88 |
| Գրիգորյան 72 | հանրապետական խորհր- 88 |
| 21. Նոր բանվորը — ըստ 73 | դակցությունը — չ. Արամ 88 |
| Մկ. Արմենի 73 | («Խ. չ.») 88 |
| 22. Բամբակաղտիչ գործա- 75 | 33. Կհանենք և կգերա- 89 |
| բանը — * 75 | զանցենք — Գեֆեստ («Խ. 89 |
| 23. Զուգունի և յերկաթի 76 | չ.») 89 |
| գործարանում — 76 | 34. Առաջ և հիմա — չ. չ. 91 |
| 24. «Զեթ-ոճառ» գործարա- 77 | 35. Սոցիալիստական մրցու- 92 |
| նում — * 77 | թյան խնդիրները 92 |
| 25. Դարբինը — Հակ. Հակոբյան 79 | 36. Հնգամյա պլանի մասին 93 |
| | 37. Դալիք աշխարհը — Հակ. 94 |
| | Հակոբյան 94 |

ԲԱՐՁՐԱՅՆՆԵՐ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

38. Յեղբայրներ—* .	95	48. Սերմնացան—Մատուր- յան .	102
39. Մանիշը—Կ. Մ. .	96	49. Սրահը—Կ. Ա. .	104
40. Ազին—Կ. Մ. .	96	50. Կոպերատիվը բացվեց, Սերգուի խանութը փակ- վեց—Կ. Ա. .	104
41. Անիծած հարսը—Հովհ. Թումանյան .	97	51. Մեքենաների հունարը— ըստ Ակսել Բակունցի .	106
42. Կեսուրն ու հարսը Կ. Մ. .	98	52. Տրակտորի լերդը—Հո- վիկ Մելիքյան .	106
43. Նոր գլուղը—* .	99	53. Նրեկտորիֆիկացիա Կ. Մ. .	107
44. Հին գլուղը—Հովհ. Թու- մանյան .	100	54. Լենինի անվան ջրանցքը	107
45. Գալուստի վիկը—ըստ Ակսել Բակունցի .	100	55. Բայլեիկ և Շիր-կա- նալը—Հակ. Հակոբյան	108
46. Հնձվորը—* .	101		
47. Կոլեկտիվ աշխատանք	101		

ԱՄՐԱՅՆՆԵՐ ՅԵՎ ԾԱՎԱԼՆԵՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

56. Առանց թագավորի—* .	109	74. Ընտրական իրավուն- քը—* .	126
57. Կիսատ տունը—Արագի	110	75. Կարմիր բանակի կազմի ու խնդիրները—* .	128
58. Մեծն Հոկտեմբեր—* .	111	76. Կարմիր աստղը—Հակ. Հարությունյան .	128
59. Հոկտեմբերը գեղջուկին	112	77. Ռազմական անկյուն— Կ. Մ. .	129
60. Հեղափոխութունը կա- տարվեց Լենինի ճառից	113	78. Կարմիր բանակային Սիմոնի նամակը Կ. Մ. .	130
61. Վլադ. Իլիչ Լենին—* .	114	79. Ճիշտ նշանը—* .	130
62. Իլիչը մեզ ոգնեց—* .	115	80. Չապախ—ըստ Ֆուրմա- նովի .	131
63. Սո. Շահումյան—* .	116	81. ԿԻՄ .	132
64. Լենինյան զորակոչը—* .	117	82. Կոմսոմոլը բաց արեց իմ աչքերը—* .	133
65. Ինչպես կազմակերպ- վեց Խորհրդային Սո- ցիալիստական Հանրա- պետությունների Միու- թյունը—* .	118	83. Իմ կյանքից—* .	133
66. Ամրացիր, Մեծ պե- տություն—* .	119	84. Գլուխս անդա—Ա. Վշտունի .	134
67. Ա. Ս. Ֆ. Խ. Հ.—* .	120	85. Կոմունիստական Ին- տերնացիոնալ—* .	135
68. Խորհրդային իշխանու- թյունը Հայաստանում	121	86. Ինտերնացիոնալ—* .	135
69. Առաջին որը—Յե. Չու- բաք .	122	87. Բանվորուհու որդը— Մատուրյան .	136
70. Հայաստանն առաջ և հիմա—* .	123	88. ՄՈՊՐ—Կ. Մ. .	137
71. Նոր լերդ—Չարենց .	124	89. Թշնամիները—Կ. Մ. .	138
72. Խորհրդային որենք- ներ—* .	125	90. Մալխի մեկը—* .	139
73. Խորհրդային դատա- րան—* .	126	91. Բանվորական պատգա- մավորությունը Խորհր- դային Միության մեջ	139

ՀՀ Ազգային գրադարան



NL0945416

424

-50-

1930

422

1672

ԳԻՆԸ 75 ԿՈՊ.



Рабочий